ԷՍՊԻՏԵՐ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

III

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ տիար Երվանդ Հյուսիսյանին Ս. Լուսավորչի առաջին կարգի ադամանդյա շքանշան շնորհելու մասին	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և Հայրենի պետության փոխհարաբերությունները	5
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ.— Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի հայոտարարության առթիվ	9
Առաքելության մը բարիքները (խմբագրական «ՀԱՍԿ»ի)	11
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Ապաշխարություն	15
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ.— Մակարավանք	19
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Շրջագայություն Հայոց ձորում	23
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	27
ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ.— Էջեր Վենափառ Հայրապետի անցյալից	28
ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Վաղվա օրը (բանաստեղծություն)	31
Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Ժողովրդի բնորյալները	32
Հ. ԱՐԱՄՅԱՆ.— Հայրենադարձ ասպիրանտները	35
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	45
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ.— Ուղևորություն ի Ս. Էջմիածին	48
Երեսուն հազար հանդիսականներ ծափահարում են սովետական մարզիկներին	58
Ցապոնացի նկարչուհիի մը տպավորությունները Հայաստանի մասին	58
Հանգիստ արժանապատիվ Տ. Գեորգ Բահանա Մելքոնյանի	60
ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՅՆԹԱՐՅԱՆ.— «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց», երկրորդ հատոր	61

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ,

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1954 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Զ.Ի

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՏԻԱՐ ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆԻՆ Ս. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԱԴԱՄԱՆԴՅԱ ՇՔԱՆՇԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՐՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՐՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԵՐՈՒԱՆԴԱՅ ՀԻՍԻՍԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ՝ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հոգով ուրախ եմք, որ այսօր Լիբանանի հյուրընկալ ափերի վերա, Անթիլիասում՝ պայծառ ու կանգուն է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատմական Աթոռը՝ հարազատ ու հավատարիմ ծիլը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու, ուր ծնունդ է առել Տանն Կիլիկիո վերջին երեք հայրապետներ՝ երջանկահիշատակ Տ. Սահակ, Տ. Բարգեն և մանավանդ Տ. Գարեգին Կաթողիկոսների շնչով և ոգով դաստիարակված շնորհալի և խոստումնալից հոգևորականների մի սերունդ, որ ազգային-կրոնական գաղափարին ջերմորեն նվիրված, իր հոգեկան ուժերը սիրով ու գիտակցորեն ի սպաս է դրել ո՛չ միայն Կիլիկիո հայրենասեր ժողովրդին, այլև՝ ի կարևոր դեպս՝ նաև Սփյուռքի մեր սիրեցյալ հոտին:

Հաճելի է Մեզ լսել նաև, որ հոգևոր անձանց կողքին կանգնած են նաև աշխարհիկ տարրեր, նույնպես նվիրված Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Տանն Կիլիկիո միաբան՝ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսը, որ Մեր հրավերով եկել էր Ս. Էջմիածին՝ Հոգևոր Ճեմարանի ուսանողության ասմունքաբանական դասախոսություններ կարդալու, ճիշտմամբ խոսեց, պարոն Երվանդ Հյուսիսյան, Ձեր մասին, նկարագրելով Ձեր կրոնասիրությունն ու հայրենասիրությունը և թվելով Ձեր կատարած բարեգործությունները: Դերենիկ սրբազանի նկարագրության հետևանքով Մեր հոգևոր տեսության առաջ պատկերացան հիշատակաց արժանի մեր նախնիները, որոնց ստեղծագործության շնորհիվ Հայ Ազգը անուն և պատիվ է վայելել անցյալում և վայելում է այժմ, որոնց բարեգործության՝ նյութական զոհողությունների շնորհիվ՝ ամենուրեք կանգնեցին փառավոր տաճարներ՝ ճարտարապետական հրաշալի կորողներ, հայ գիրն ու գրականությունը մատչելի դարձնող դպրոցներ և հայ մամուլ, որոնց շնորհիվ հայը պահեց իր ազգային դեմքը, ապրեց ցայսօր և կապրի այսուհետև: Անցյալում Ձեր կատարած բազմատեսակ բարի գործերը անկարող ենք անտեսել, ուստի և սույն Հայրապետական կոնդակով Մենք շնորհում ենք Ձեզ իրավունք կրելու Ձեր կրծքին Ս. Լուսավորչի առաջին կարգի ադամանդյա շքանշան՝ Ձեզ ի մխիթարություն և այլոց ի քաջալերություն:

Մաղթում ենք, որ մարդասեր Փրկիչը Իր հովանին և Աջը տարածեն Ձեր և Ձեր ընտանյաց ու մերձավորաց վերա, պարգևեն Ձեզ առողջություն և արևշատություն՝ շարունակելու Ձեր բարի գործը, հիշելով նաև հայրենի ընտանիքը և Ս. Էջմիածինը:

Ողջ լերուք, շնորհք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէջ. ամէն:

ԾԱՌԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14-ն նոյեմբերի
1963 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԻ,
յինքնիշխանութեան Մերոյ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եկեղեցու և Պետության, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության խնդիրը միշտ էլ հանդիսացել է եկեղեցական իրավունքի կարևոր հարցերից մեկը: Հատկապես արևմտյան եկեղեցիների կանոնական իրավունքում մեծ տեղ է հատկացվել այդ հարցին:

Արևմտյան եկեղեցիների պատմությունը, մանավանդ Հռոմի եկեղեցու պատմությունը, իրենից ներկայացնում է երկարատև պայքարի մի պատմություն եկեղեցու և Պետության միջև հանուն գերագույն իշխանության: Կաթոլիկ եկեղեցին զգալիորեն հիմնավորում տալով աշխարհիկ իշխանության իր ձգտումներին, առաջ է քաշել աստվածպետության գաղափարը, ձգտելով իր ձեռքը վերցնել Պետության կառավարումը՝ իրեն և իր «հպատակների»ի նկատմամբ շրջանցելով աշխարհիկ դատաստանի ո՛չ մի իշխանություն:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և Պետության փոխհարաբերություններում այդպիսի սուր հակադրություն չի ստեղծվել: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին Պետության հետ իր փոխհարաբերություններում առաջնորդվել է միշտ տերունական և առաքելական պատվիրաններով, «Տուք զկայսերն կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին իր պարտքը կատարել է հայ ժողովրդի և նրա պետականության նկատմամբ մեծ սիրով, պարտքի ու պարտականության խորը գիտակցությամբ: Կրոնական բռնապետությունը, աշխարհիկ իշխանության ձգտելու հիվանդագին իշխանասիրությունը խորթ են եղել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ոգուն, սկզբունքներին. «Արդ հատուցէք իւրաքանչիւր զպարտս. որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն, որում զերկեղ՝ զերկեղն, որում զպատիւ՝ զպատիւն» (Հռոմ., ԺԳ 7):

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, որպես քրիստոնեական հնագույն եկեղեցիներից մեկը, ինչպես նրան բնութագրել է Ազգիս մեծագործ Հայրապետը, «ճավատարմությամբ և նշտությամբ պանպանել է Տիեզերական եկեղեցու իր պատկերը» և իր սկզբնավորության առաջին իսկ օրերից կազմավորվել է որպես Ազգային եկեղեցի: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին իր հոգևոր իշխանությամբ երբեք հանդես չի եկել որպես ժողովրդից, պետությունից վեր կանգնած մի հաստատություն, «Սի՛ տիրելով վիճակացն, այլ օրինակ լինել ճոտին»:

Հայաստանյայց եկեղեցին պանել է և «շարունակում է պանել նաև Տիեզերական եկեղեցու սովորությունները ու ավանդները, ինչպես նաև նորա դեմոկրատիկ վարչաձևը, ընտրական և ժողովրդական սկզբունքները և բոլոր տեսակի ժողովներում աշխարհիկ տարրի մասնակցությունը» (Գեորգ Զ. Կաթողիկոս):

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին միշտ էլ հայրենասիրության վառ օրինակներ

է տվել հայ ժողովրդին, հավատարմությամբ և սրբությամբ է կատարել իր պարտքը Հայրենիքի և Պետության նկատմամբ, որովհետև «Հայոց Եկեղեցին միասնական է եղել ի սկզբանե... հայ ժողովրդի կամքով ու ցանկությամբ... միասնական է եղել իր Պետով, իր դավանանքով, դեմոկրատիկ վարչաձևով, իր ձեռքով ու արարողություններով» (Գեորգ Զ. Կաթողիկոս):

Այս սկզբունքների լույսի տակ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ շիտակ և օրինավոր փոխհարաբերությունների մեջ է եղել հայրենի իշխանության հետ, միասնության սրտառուչ քարոզներով հանդես է եկել ներքին, պառակտողական, կենտրոնախույս ուժերի և արտաքին վտանգների դեմ, և միշտ աշխատել է ժողովրդի հետ, ժողովրդի համար, հայրենի Պետության շուրջ համախմբելով տխուր ճակատագրի բերումով աշխարհում ցրված հայ ժողովրդի բեկորներին:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով հայ ժողովուրդը տեր դարձավ իր քաղաքական անկախության և պետականության:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հարազատ հայրենի Պետության միջև սկսվեցին նոր հարաբերություններ: Ամենայն Հայոց Հայրապետությունը առաջին իսկ օրերից, անցյալի ծանր իրադարձությունների բերադրանքով իր վրա վերցրած քաղաքական, հասարակական և այլ պարտականությունները վերադարձրեց իր օրինավոր տիրոջ՝ հայրենի հարազատ քաղաքական իշխանության: Եվ այդ բեռնաթափումից առաջին հերթին օգտվեց ինքը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ իր ողջ ուշադրությունը կենտրոնացնելով հայ ժողովրդի հոգևոր դաստիարակության գործին, ըստ առաքելական պատվերի. «Կրօնաւորութիւն սուրբ և անարատ առ ի յԱստուծոյ և ի Հօրէ այս է, Այցելու լինել որբոց և այրեաց ի նեղութեան իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ» (Հակ. առաք., Թուղթ, Ա 27):

Հայտնի է ամենքին, որ Սովետական Միության մեջ ըստ պետական Սահմանադրության Եկեղեցին բաժանված է Պետությունից, դպրոցը՝ Եկեղեցուց:

Այս հանգամանքը երբեմն ճիշտ չեն մեկնաբանում արտաքինաբանում: Եղել են նույնիսկ դեպքեր, երբ Սովետական Միության նկատմամբ թշնամաբար տրամադրված անձինք, փորձելով օգտագործել հավատացյալների կրոնական զգացմունքները, անգամ լուրեր են տարածել, որ իբր Սովետական Հայաստանում Եկեղեցի, կրոն գոյություն չունեն, չկա կրոնական ազատություն, և նման առասպելներ:

Հայտնի է, որ Հեղափոխության առաջին տարիներին, եղել է մի կարճ ժամանակ, երբ Եկեղեցու և Պետության փոխհարաբերությունները այնքան էլ մտերմական չեն եղել: Եվ դա շատ բնական և հասկանալի էր, երբ մի ամբողջ հին աշխարհ փուլ էր գալիս իր մտայնությամբ, իր քաղաքական, հասարակական, տնտեսական կառուցվածքով, բարոյական և հոգևոր իր չափանիշներով ու հասկացողություններով, և նոր աշխարհի ստեղծագործ բոհուրքի մեջ նոր կյանքի, մարդկային բոլորովին նոր հարաբերությունների հիմքն էր դրվում, Եկեղեցու և Պետության փոխհարաբերությունները չէին կարող բնականոն լինել:

Սակայն Սովետական Հայաստանում այդ տարիներին Պետության ունեցած դժգոհությունն արտահայտվել է ո՛չ թե կրոնի և Եկեղեցու նկատմամբ ընդհանրապես, այլ անհատ եկեղեցականների նկատմամբ, որոնք հեղափոխության առաջին օրերին չեն կարողացել գտնվել իրենց հոգևոր կոչման և հայրենասիրական պարտականությունների բարձրության վրա և խառնվելով քաղաքական գործերի, առատ չուր են մատակարարել տապալված երեմնի իշխանավորների չարաղացին:

Եկեղեցին, սակայն, հետագայում իր սեփական օրինակով և գործով ապացուցեց, որ ինքը ինչպես միշտ, այս անգամ ևս ժողովրդի հետ է, իր հարազատ Պետության հետ:

1936 թվականի նոր ընդունված պետական Սահմանադրությամբ եկեղեցականությունը հանձնվեց որպես լիիրավ քաղաքացի Սովետական Հայրենիքին:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին սրբությամբ կատարեց իր հայրենասիրական պարտքը իր ժողովրդի և իր հարազատ Պետության նկատմամբ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Պետության փոխհարաբերությունների լավագույն արտահայտությունը հանդիսացավ այն իրողությունը, որ 1945 թվականին Ս. Էջմիածնի Մայր Տաճարի պատմական կամարների տակ գումարվեց Ազգային-Եկեղեցական մեծ ժողովը, որ բացառիկ երևույթ է մեր ազգային-եկեղեցական պատմության մեջ նրանով, որ հայ ժողովուրդը իր ազատ քվեն տվեց իր ընտրյալին, առանց քաղաքական իշխանության ուղղակի կամ անուղղակի միջամտության:

Վեհափառ Հայրապետն իր անսուտ բերանով, իր հայրապետական դարավոր ու նվիրական Դահից, մի անգամ ևս ի լուր իր հավատացյալ որդիներին այսօր հայտարարում է, որ «Սովետական Միության մեջ պե-

տական օրենքով եկեղեցին և Պետությունը բաժանված են և ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱՏԵՐ ՉԷ ԽԱՌՆՎԵԼՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻՆ ԵՎ ՉԻ ԽԱՌՆՎՈՒՄ»: Դեռ ավելին՝ «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՉ ՄԻԱՅՆ ԱՋԱՏ ԵՎ ԼԻԻՐԱՎ Է ԱՄԵՆԱՏԵՍԱԿ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԱՅԼԵՎ ԱՋԱՏ Է ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԱՋԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՆԵՐ ՏԱԼՈՒ» (ընդգծումը մերն է:— ԽՄԲ.):

Այդ ազատության շնորհիվ հրատարակվում է Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ «ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագիրը, որը Վեհափառի կենդանի խոսքն է՝ ուղղված իր հոտին:

Բացվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, ուր քրիստոնեական հայեցի դաստիարակությամբ, ժողովրդի սիրով ու Հայրենիքի գաղափարով հասակ է առնում հոգևորականների մի խոստումնալից սերունդ:

Բաց են հայրենի երկրում, հայ ժողովրդի աստի պես, հայկական հին ու պատմական վանքերն ու եկեղեցիները, որոնց լուսեղեն խորաններին առաջ նախնյաց ոգով, հավատով և ջերմեռանդությամբ աղոթում է հայ ժողովուրդը, առանց վախի և ճնշման, և ուր առավոտ և երեկո պաշտվում է Հայ Եկեղեցու սքանչելի ժամերգությունն ու սուրբ պատարագը, ուր երգվում է հրաշալի «Տէ՛ր, ողորմեա՛»ն, և ուր հայ քահանան աղոթում է նարեկացու պես իր երկրի և «ամենայն աշխարհի խաղաղութեան» համար:

Ճիշտ է, որ գործող եկեղեցիների թիվը դեռևս անբավարար է: Բայց այդ ոչ այնքան հետևանք է եկեղեցիների պակասին, որքան եկեղեցականների պակասին, և նենց դրա համար էլ Վեհափառ Հայրապետի մեծագույն ցանկությունն է ապահովել Եկեղեցին պատրաստված, կրթված, հավատավոր ու հայրենասեր հոգևորականներով:

Եթե այժմ քիչ է եկեղեցիների թիվը, այնուամենայնիվ մեծ է ժողովրդի հավատը, և միթե ժողովուրդը նենց ինքը չէ՞ կենդանի հավատը, իսկական եկեղեցին:

Նորին Ս. Ծնություն Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսի օրով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ապրում է հոգևոր զարթոնքի մի նոր ու խոստումնալից շրջան: Վեհափառ Հայրապետը կոչված է պատմական դեր կատարելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերականգնման աշխատանքներում:

Եվ այդ ծանր ու պատասխանատու աշխատանքը կատարում է մեր օրերի մեծագույն հայրենասեր և հավատավոր մեծ տեսանողը, գիտակցորեն, չափված ձևով: Եվ պատահականություն չէ, որ Վեհափառը իր Հայրապետության համեմատաբար կարճ, բայց արդյունաշատ ժամանակաշրջանում, իր ազգային-եկեղեցական իմաստուն քաղաքականությամբ, իր անկաշառ հայրենասիրությամբ, իր անձնական անստգյուտ բարեմասնություններով, կարողացավ իրե՛ն և իր Գահին կապել ողջ հայությանն սիրտն ու հոգին, նվաճել հայ ժողովրդի բարձր հմակրությունը ու հայրենի պետական մարմինների հարգանքն ու վստահությունը: Անցնող ամեն մի օր է՛լ ավելի է համախմբում հայ ժողովրդին Ս. Էջմիածնի և նրա Գահակալի շուրջը, որովհետև այսօր, ավելի քան մի այլ ժամանակ, վառ ու պայծառ է Լուսավորչի կանթեղը և՛ հայ ժողովրդի հոգում և՛ հայ երկնակամարի վրա:

Ապրում ենք քաղաքական անհպատ պայմաններում: Դաղտնիք չէ ոչ ոքի համար, որ միջազգային կացությունը խառն է ու լարված, մանավանդ շատ ավելի փափուկ պայմաններում է ապրում Սփյուռքի հայրենասեր և հավատացյալ հայ ժողովուրդը:

Դաղտնիք չէ, սակայն, որ Սփյուռքում կան մարդիկ, «որք զեշմարտութիւնն անիրաւութեամբ ունին» (Հռոմ., Ա 18): Այդպիսիք փորձում են պղտորել հավատացյալների ազնիվ մտքերը, ստվեր ձգել Ս. Էջմիածնի, Վեհափառ Հայրապետի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վրա:

Բայց հանուն ինչի՞ այդ բոլորը և մինչև ե՞րբ: Ի՞նչ շահ այդ բոլորից հայ ժողովրդի, Ս. Էջմիածնի և Հայրենիքի համար:

Արևելքից թե Արևմուտքից, Հարավից ըն Հյուսիսից Սովետական Հայաստան են եկել ու գալիս են կրոնական տարբեր հանդումնքների, քաղաքական տարբեր հայացքների տեր մարդիկ, այցելուներ, բազմապիսի մասնագիտությունների և ասպարեզի տեր մարդիկ, որոնք ականատես են լինում հայ ժողովրդի ստեղծագործ առօրյային, լինում են Ս. Էջմիածնում, Զվարթնոցում, կոլտնտեսություններում, բարձրագույն կրթական հաստատություններում, գործարաններում, և վերադարձին պատմում են հայ ժողովրդի հոգևոր, մշակութային զարթոնքի մասին, ա՛յն մասին, որ այսօր ավելի քան երբեք կանգուն է հայ ստեղծագործ և խաղաղասեր ժողովուրդը, կանգուն է նրա պետականությունը, կանգուն է Ս. Էջմիածինը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարավոր կենտրոնը. «զոր տեսանք և լուաք պատմեմք ձեզ»:

Բազմաթիվ օտար այցելուներից հետո, վերջերս երկու ամիս Հայրենիքում և Ս. Էջմիածնում եղավ Մեծի Տանն Կիլիկիո միաբաններից գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանը: Նա այցելեց ո՛ւր ցանկացավ. ազատ մաեկավ հայրենի քաղաքներում և գյուղերում, պտտեց. քարոզեց, այցելեց. եղավ

շատ հին սրբավայրերում, աղոթեց Մխիթար Գոշի գերեզմանի վրա, հսկեց հեռավոր Սյունիքում Տաթևացու շիրիմի վրա ու վերադարձին իր տպավորությունները գրեց Կաթողիկոսարանի պաշտոնաթերթ «Հասկ»-ում, որ «ԿԱՆԳՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔՈՎ ՇԵՆ է Ս. ԷՋՄԻԱԾՆԸ»: Դերենիկ սրբազանը իր տպավորությունների յուրաքանչյուր տողի մեջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր սպասավորի հավատի սուրբ կրակն է գրել և իր օրագրում օր-օրին, սրտառուչ հայրենասիրությամբ, երկյուղածորեն գրի է առել իր ապրումները և՛ Ս. Էջմիածնից, և՛ Վեհափառից, և՛ միաբաններից, և՛ Հայրենիքի գեղեցիկ ու եռուն առօրյայից, անցյալի կոթողներից, վանքերից: «Հայաստանի հեռավոր վայրերուն մեջ, —գրում է սրբազանը,— ականատես եղանք հայ քահանաներու և վարդապետներու, որոնք երկյուղածորեն և անձանձիր, ամեն օր՝ առավոտ և երեկո կկատարեն եկեղեցական ժամասացությունները, ու հայ տաճարները միշտ բաց են աղոթող հայ հոգիներուն համար... Սոսկ իրողություն մը մատնանշած կըլլանք, եթե դիտել տանք, թե շատ ավելի մեծ թիվով ժողովուրդ կհաճախե Ս. Էջմիածին և Հայաստանի բացված ու գործող եկեղեցիները, քան արտասահմանի մեր նվիրապետական Աթոռներու մայր տաճարները, և նամ ծխական եկեղեցիները»: Ավելին. «Մայր Հայրենիքի այդ եկեղեցականներուն նվիրումն ու երկյուղածությունը և պահպանողական ոգին պետք է որ օրինակ հանդիսանան արտասահմանի հայ հոգևորականության»:

«Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ...»:

Այո՛, կանգուն է և շեն Ս. Էջմիածինը, հայ ժողովրդի ազգային-եկեղեցական հոգևոր միասնության խորհրդանշանը, ուր, դարեր շարունակ հայ հավատի, հայրենասիրության, եկեղեցասիրության աղբյուր է հանդիսացել հայ ժողովրդի համար:

Այո՛, կանգուն և շեն է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին Սովետական Հայաստանում:

Հայրենիքի սերը, Ազգային Եկեղեցու գաղափարը խորհրդանշանն են հանդիսանում այսօր հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնության, ազգային ինքնագիտակցության և արժանապատվության համար: Այսօր հայ ժողովրդի համար չկան և չեն կարող լինել ավելի բարձր շահեր, քան հայ ժողովրդի ընդհանրության, միասնության շահերը, քան Հայրենիքի, հայրենի պետականության, Ս. Էջմիածնի շահերը: Այս գաղափարների լույսի տակ, Նորին Ս. Օծություն Ե. Տ. Գեորգ Զ.-ի օրով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայրենի Կառավարության փոխհարաբերությունները եղել են և կլինեն ավելի քան սերտ, բարեկամական:

Ամենայն Հայոց Հայրապետության դիրքը Սովետական Հայրենիքի և Պետության հանդեպ եղել է և կլինի օրինական, ուղիղ, ազնիվ, ինչպես պարտ է լինել: Ա՛յդ են պահանջում հայ ժողովրդի շահը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անցած պատմական ուղին, Հայաստանյայց Եկեղեցու ոգին, դարավոր ավանդությունները ու նրա դարավոր պատմությունը:



ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅՍՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը ամերիկահայ թերթերում տպագրել է հետևյալ հայտարարությունը.

«Ամերիկայի մեր սիրելի ժողովրդին.

Հայ մամուլին մեջ (տե՛ս Պայքար, 24 փետրվար 1954, թիվ 45, 14.641) Ապգիս Վեհափառ Հայրապետին, Գեորգ Զ-ի անունով հրատարակված է «շրջաբերական»մը, որուն վերաբերմամբ հետևյալ իրողությունները կարևոր կնկատենք մեր ժողովուրդին ծանուցանելու.—

1) Մենք և կամ Առաջնորդարանս Վեհափառ Հայրապետին չենք ստացած հրատարակված «շրջաբերականը» կամ անոր նման ուրիշ որևէ շրջաբերական կամ հաղորդագրություն։

2) «Շրջաբերականի» բովանդակությունը հիմնված է իրականության անհամապատասխան և թյուր նախադրյալներու և տեղեկությանց վրա, որոնց աղբյուրը մեզի անծանոթ կմնա։ Այսպես, օրինակի համար, մենք որևէ հրահանգ չենք տված մեր թեմի եկեղեցիներուն մեր Եկեղեցվո «տիտղոս»ի մասին, ոչ ալ ավելցուցած ենք որևէ նոր «տիտղոս» կամ «մակդիր» Հայ Եկեղեցվո «պաշտոնական անուն»ին վրա, կամ «հապավումս ըրած անկե։

3) Հրատարակված «շրջաբերականի» ստորագրության վավերականության մասին ոչինչ գիտենք։

4) «Շրջաբերականը» գրված է այնպիսի թվականի մը, երբ տակավին Վեհափառ Հայրապետը չէր ստացած անցյալ տարվան հոկտեմբեր 11-ի մեր Թեմական Պատգամավորական ժողովի ատենագրությունը, և անոր կցյալ մեր տեղեկագիրը և ուղերձը։

5) Մեր Եկեղեցվո յարձրագույն իշխանության, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի իրավասության վերաբերյալ եկեղեցական խնդիրներու մասին մեր կողմե ստացված հրահանգները և հանձնարարությունները մեզ համար նվիրական են իհարկե, և այդպես պետք է ըլլան մեր եկեղեցվո բոլոր պաշտոնյաներուն և ժողովրդյան համար։

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Փետրվար 26, 1954»

Մենք չենք ցանկանում բանավեճ սկսել Տիրան սրբազանի հետ, որովհետև այդ չի պատշաճում Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնական ամսագրին — մեր նպատակն է ո՛չ թե վեճեր սկսել, այլ թյուրիմացությունները պարզել և վեճերը հարթել։

Բացի այդ, Ամենայն Հայոց Հայրապետությունը բազմիցս հրահանգել է և հրահանգում է, որ քաղաքական ներկա սրված իրադրության մեջ Սփյուռքի մեր համայնքները, հնարավորին չափով, խույս տան անօգուտ գժտություններից և սուր պայքարից, քանի որ պարզված է, որ այդ գժտության և անմիաբանության սերմնացանները սնվում են պղտոր աղբյուրներից։

Եվ, վերջապես, Տիրան սրբազանի վերջերս որդեգրած տարօրինակ ընթացքը, նրա դեմ եղած բողոքները, ընտրության օրինականությունը և այլն քննվում են այժմ Գերագույն Հոգևոր խորհրդում և ամսագիրը կանդրադառնա այդ խնդրին այն ժամանակ, երբոր կհրահանգի Վեհափառ Հայրապետը։ Սրտանց ցանկանում ենք, որ Տիրան սրբազանի մասին եղած մեղադրանքները թյուրիմացություն լինեին։

Սակայն խմբագրությունս վշտով արձանագրում է գերաշնորհ Տ. Տիրան սրբազանի հայտարարության 8-րդ կետի անպատշաճությունը, ուր նա փորձում է կասկածանքի տակ առնել Վեհափառ Հայրապետի շրջաբերականի վավերականությունը։ Սրբազանին պիտի որ հայտնի լինի, որ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը չի տպագրում ոչ մի նյութ, եթե նա չի արժանացել Վեհափառի հավանությանը։ Ինչ վերաբերում է Վեհափառի պաշտոնական շրջաբերականներին, կոնդակներին և այլ գրություններին, ապա նրանք գրվում են անձամբ Վեհափառ Հայրապետի կողմից, և ամսագրի խմբագրությունը իրավասություն չունի նրանց մեջ ստորակետ անգամ փոխելու։

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԸ ԲԱՐԻՔՆԵՐԸ

(ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ)

(Խմբագրական «ՀԱՍԿ»ի)

Աշտոնաթերթիս նախորդ և ներկա թիվերուն մեջ հրատարակեցինք Դպրեվանքի վերատեսուչ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսի ուղևորության ընդարձակ տեղեկագիրը, որ այնքան շահեկան է և մեզ կմղե խորհրդածության։

Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսի այդ ուղևորությունը, զոր արդարև կարելի է կոչել առաքելություն, կբաղկանա երկու բաժիններե — առաքելություն ի Ս. Էջմիածին, և առաքելություն արտասահմանի մեջ։

Ամենեն առաջ ուշադրությունը կկենդրոնանա այն բարեբաստիկ իրողության վրա, որ կիլիկյան եպիսկոպոս մը կստանա մասնավոր հրավեր Ամենայն Հայոց Հայրապետեն՝ ավանդական աստվածաբանության դասընթացք Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին մեջ։ Այս իրողությունը կվկայե Ամենայն Հայոց Հայրապետության և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռներուն միջև հաստատված սիրալիր հարաբերության և մարմին դարձած միասնականության ոգիի մասին։ Հրճվաբեր է Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծության Տ. Տ. Գեորգ Զ-ի վստահությունը, որով կպատվե կիլիկյան եպիսկոպոս մը, հանձին գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի։

Կիլիկիո Դպրեվանքին վերատեսուչը իր այս առաքելական ուղևորությունը կատարեց ի գին ծանր զոհողության, թե՛ նյութական և թե՛ ֆիզիկական տեսակետներով — իր անձեն ընծայաբերելով երկարատև ճամբու մը հոգնությունները ու կարևոր ծախսերը։ Բարեբախտաբար այդ զոհողությունը հոմպեսս չվատնվեցավ, այլ գնաց տոգեղու հայրենի դաշտ մը, զայն դարձնելու բարեբեր ու հուր։ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին մեջ, որ «տկար է կրոնական և աստվածաբանական գիտությանց մեջ, իսկ զորավոր՝ նյութական ուսմանց մեջ», ինչպես գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազան հայտնած էր «Էջմիածին» ամսագրի խմբագրության թղթակցի հարցումներուն տված իր պատասխաններուն մեջ («Էջմիածին», 1953, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 13բ), հարկ էր ուռճացնել կրոնագիտական ուսմունքը և անոր հանդեպ սերը։ Վստահ ենք, որ գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի երկամսյա դասախոսության հունտերը ինկան «յերկիր բարւոք», ուր անոնք պիտի ծլին ու ծաղկին՝ պտղաբերելով «ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր» (Մարկ., Դ 8)։ Նույն բարի ու ցանկալի նախատեսությունը ունի նաև դասախոս սրբազանը, երբ կգրե իր ուղևորա-

կան օրագրության մեջ. «Երկուշաբթի գիշեր (9 նոյեմբերի) աստվածաբանության վերջին դասը տվի ուսանողներուն: Վստահ եմ, որ դասախոսությունները իրենց օգտակարությունը ունեցան. ջանացի սորվեցնել իրենց նոգեպաշտության անհուն արժեքը և սեռ կարևորությունը մարդկային կյանքին մեջ: Անոնցմե շատերը ջերմորեն սիրեցի և նույն ունիմ, որ ապագային հավատավոր, տեսիլք ունեցող ու գիտությամբ նոխացած եկեղեցականներ կհանդիսանան: Այս գիշեր դասեն ետք սրտեռանդն աղոթեցի, որ ամենքն ալ լեցվին Ս. Հոգիով, որպեսզի ճշմարտորեն ծառայեն Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և ազգին» («Հասկ», 1954, փետրվար, էջ 53)։

Բայց գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսի Ս. Էջմիածին ուղևորությունը չի վերջանար միայն աստվածաբանության դասավանդության բարիքով։ Կիլիկյան սրբազանը հնարավորություն ունեցած է պատարագելու և քարոզելու ոչ միայն Ս. Էջմիածնի, այլև Հայաստանի ու Սովետական Միության հայաշատ շարք մը կեդրոններուն մեջ, ուր «կենաց բանին» քարոզությամբ մխիթարած է հայ հավատացյալները։ Հատկապես խոր ուրախությամբ մեր ուշադրությունը կգրավեն սրբազան հոր այցելությունները Հայաստանի գավառական շրջանները, Թիֆլիսի և մանավանդ Նոր-Նախիջևանի հայաշատ կեդրոնները և անոնց եկեղեցիներուն մեջ իր մատուցած պատարագներն ու տված քարոզները, որոնք վստահ ենք, որ ամրապնդեցին ու զրդեցին հայ հավատքը հայ սրտերու մեջ։ Այդ այցելությունները, մանավանդ երբ նկատի ունենանք, որ անոնք կատարվին արտասահմանյան հայ բարձրաստիճան հոգևորականի մը կողմե, պատճառ եղած պիտի ըլլան դոտեպնդելու, մասնավորաբար հեռավոր Նոր-Նախիջևանցիները, հայ հավատքին անսասան հավերժականությամբն ու գիտակցությամբը։

Տակավին, գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի տված ուխտավորական այցելությունները Հայաստանի բազմաթիվ վանքերեն շատերուն, մեզի կբերեն քաղցրագին հույսը, թե այդ վանքերը, իրենց «հազարամյա քարերով, երբ բազմանան Ս. Էջմիածնի միաբանության անդամները, պիտի վերըստին դառնան կենդանի և գործուն, իբրև հայ հավատքի մշտարծարծ հնոց։ Այդ բոլոր վանքերեն մանավանդ Տաթևի «եռամեծ վարդապետներու վանքը, իր շարժուն, այլ հավետ կանգուն «Գավազան-սյունով, մեզ կխանդավառե իր կիսականգուն հավերժական խորհուրդով, թե երկրաշարժներն իսկ չին կրնար քարակույտի վերածել հայ վանքը, ուր երբեմն վարդապետած են Որոտնեցի Հովհաննեսները և Տաթևացի Գրիգորները՝ իրենց անհաս դիտությամբ և հրեղեն խոսքով, ի պայծառություն և ի պաշտպանություն հայ առաքելավանդ հավատքին։ Տաթևը իր կիսակործան զանգվածով և հավիտենական «Գավազան-սյունով, իր երկնամերձ բարձունքեն կարծեք կանչ մը դարձած է և մեզ — ամբողջ հայությունը — կմղե իր ապագա, բայց անպայման վերակերտումին համար։

Յուրաքանչյուր հայ հավատացյալ միմիայն երախտապարտ կրնա մնալ գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի, որ մեզի բերավ ոչ միայն Ս. Էջմիածնի վանքին ու Աթոռին, այլև մեր հազարավոր վանքերուն ու մոռցված սրբավայրերուն գոյության ու սրբազան վերակենդանացման ավետիսը, և մեր սիրույն, պաշտամունքին ու դիտակցության ծիլերը տարածեց Ս. Էջմիածնեն անդին, դեպի մեր հազարավոր վանքերու «հազարամյա քարերը...։ Ու Ս. Էջմիածնեն շառավիղված այդ վանքերուն վրա «որպես բիր ական կգուրգուրա ու որպես «Աստծո աչքը պայծառ՝ ցած երկնքից» կհսկե հայոց ժողովուրդի ու Եկեղեցիի պատմությանց մեծագույն դեմքերեն մեկը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետը, Իր խորաթափանց իմացականությամբ և Իր անպարագիծ հայրենասիրությամբ։ Գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազան մեզի կբերե նաև Ամենայն Հայոց Հայրապետին իմաստնագույն գործունեության, ճարտար դեկավարության, մշտաբորբ սիրույն ու մշտարթուն հսկողության հոգեպարար իրողությունը, մեր մեջ բխեցնելով մաղթանքներ Անոր արեշատության համար։

Ի վերջո գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի Ս. Էջմիածին ուղևորությունը անգամ մը ևս կբերե մեզի անհողդողդ ու հառաջացող ըն-

թացքին ավետիսը մեր ժողովուրդին, զոր տեսած է Հայաստանի գործարաններուն, պողոտաներուն, տողանցքներուն, արտերուն, մշակույթի կեդրոններուն և տուներուն մեջ։ Այդ ժողովուրդը կանգուն է, գիտակից՝ իր հառաջընթացին ու հավատավոր՝ իր ապագային։

Ամենայն Հայոց Հայրապետը Իր խորաթափանց աչքերով տեսած է, հանձին գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի, ուխտյալ և նվիրյալ պաշտոնյան Հայաստանյայց Ս. Եկեղեցիին, ու անոր հանձնած է «մասնավոր պաշտոն», ինչպես սրբազանը կհիշե իր ուղևորական օրագրության մեջ («Հասկ»ի ներկա թիվը, 1954, փետրվար, էջ 53ա)։ Թեպետ գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազան չի մանրամասներ այդ «պաշտոնը», բայց դատելով անոր ուղևորական օրագրության մեջ ցանցընված ակնարկություններեն, կրնանք ենթադրել, թե այդ «մասնավոր պաշտոնը սերտորեն կապ ունի երկու ծրագիրներու հետ. ա) Ս. Էջմիածնի կապված կարգ մը նյութական հարցերու կարգադրություն և բ) Քրիստոնեական Հույր եկեղեցիներու հետ ավելի սերտ գործակցության կարելիությանց ստեղծում։

Ու կարծեք գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս իրեն հանձնված այդ «մասնավոր պաշտոնին» իբրև հոժարակամ ընդունելություն, Հայաստանի սահմաններեն անմիջապես որ դուրս կուգա, կնվիրվի վերոհիշյալ երկու մեծ ծրագիրներու հետապնդման ու կհաջողի շարք մը կարևոր նվիրատվություններ ապահովել հօգուտ Ս. Էջմիածնի և անոր Հոգևոր Ճեմարանին, ինչպես կտեսնենք իր ուղևորական օրագրության վերջավորության («Հասկ»ի ներկա թիվը, 1954, փետրվար, էջ 63)։ Անշուշտ այդ նվիրատվությունները պիտի բազմանան գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի նոր աշխատանքներուն և դիմումներուն շնորհիվ։

Իսկ մյուս մեծ ծրագիրը, այսինքն քրիստոնյա քույր եկեղեցիներու հետ գործակցության և եղբայրական հարաբերությանց զորացում, նույնպես որոշ չափով իրագործված է գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի կողմեն։ Անիկա իր վերադարձի ճամբուն վրա, Անգլիո մեջ տեսակցած է Քենտրբերիի Արքեպիսկոպոսին հետ («Հասկ», 1954, փետրվար, էջ 59), ավելի սերտացնելու համար երկու եկեղեցիներու միջև եղող եղբայրական հարաբերության կապը։ Այսպիսի հարաբերություններ լավագույնս կճանչցնեն Հայոց Եկեղեցին իր դարավոր հարուստ անցյալովը՝ մեր քույր եկեղեցիներուն։ Այսպիսի գործակցություն մը նաև պիտի տա կենդանություն և զորություն՝ մեր Եկեղեցիին։

***

Գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի առաքելության երկրորդ մասը անցած է Հայաստանեն դուրս, Եվրոպայի և Եգիպտոսի մեջ։ Այդ առաքելությունը նյութապես շատ օգտակար եղած է թե՛ Ս. Էջմիածնի և թե՛ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռներուն համար, ինչպես այդ մասին կվկայեն իր իրականացուցած մեծագոռամար նվիրատվությունները, զորս հոս չենք ուզեր կրկնել և որոնցմե մեկը, ըստ երևույթին կարևոր հատկացում մը կամ խոստում մը, «ժամանակի ընթացքին կրնա հայտարարվիլ» («Հասկ», 1954, փետրվար, էջ 63)։

Կրավե աչքե անցնել «Հասկ»ի ներկա թիվին մեջ (էջ 63) հրատարակված նվիրատվությանց ցանկը, հաստատելու համար, թե գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի այս և նախորդ ուղևորությունները բախտաբեր առիթներ եղան իրագործելու նվիրարերություններ, որոնք մեծապես նպաստեցին Կիլիկիո Աթոռին նյութական վերականգնման և հնարավոր դարձուցին անոր Դպրեվանքին գործունեությունը ավելի լայն ծրագրով, ինչպես և իրականացնելու մշակութային շարք մը ձեռնարկներ։ Առանց այդ պարբերական մեծագոռամար նվիրահավաքությանց Կիլիկիո Աթոռը պիտի հարկադրվեր գործել տեղական պայմաններու թույլատրած հնարավորություններու նեղ սահմաններուն մեջ։

Նյութական այս հաջողությունները այլևս մեր Հոգևոր Պետերը մղելու են մտածելու կանոնավոր նվիրակության կարգումին կամ կազմակերպումին։ Անցյալին մեջ Ս. Էջմիածնի հայրապետները շատ իմաստուն կարգադրություն մը ըրած են. հայության ցանուցիր ու վայրավատին գաղութները հոգևին կապելու համար Հայաստանյայց Եկեղեցիին և անոնց սիրտերուն մեջ վառ պահելու հա-

մար հայրենասիրության կրակը, ատեն-ատեն ղրկած են նվիրակներ այդ հեռավոր գաղութներուն։ Ավելորդ է շեշտել նվիրակության բարիքները։ Հայության տարագիր ու ցանցնված բեկորները շկորսնցնելու և զանոնք հոգեպես կապելու համար իրենց բունին կամ արմատին, նվիրակությունները կրնան կատարել փրկարար դեր։ Մյուս կողմե այդ բեկորները առնվազն նյութապես մեծ բարիք կրնան մատուցանել մեր Աթոռներուն և կրոնական, կրթական ու բարեսիրական հաստատություններուն։

Գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանին ասկե առաջ իր ուղևորությանց առիթներով անպաշտոն կերպով կատարած նվիրահավաքության գործը լավագույն հաջողություն ձեռք բերած ըլլալով, հարկ է, որ այդ գործը վերածվի պաշտոնական ու կանոնավոր նվիրակության, հօգուտ և ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցիի և ի փրկություն մեր տարագիր բեկորներուն։

Մենք այսպիսով ուրվագծած եղանք գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի առաքելության բարիքները։ Արդար պիտի չըլլար չմատնանշել, թե այդ առաքելությունը եթե տվավ բարիքներ, մենք զանոնք մասամբ կպարտինք անձին գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանի, որ իր գործունյա ու եռանդուն ոգիով ջանաց բարձրացնել Կիլիկյան Աթոռին անունը, համբավն ու նշանակությունը։ Անոր առաքելությունը ավելի զորացուց կապերը Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռներուն։

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, փետրվար, 1954)

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ամենայն Հայոց Հայրապետության և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռների միջև հաստատված ջերմ փոխհարաբերությունը, որին անդրադարձել է «ՀԱՍԿ»ն իր ներկա խմբագրականում, նոր չէ— այն շատ հին պատմություն ունի և հիմնված է ո՛չ թե դիվանագիտության, այլ մեր հավատացյալ ժողովրդի զգացմունքների վրա։ Միջնադարյան մռայլ իրականության մեջ Հայրենիքից հեռացող տարագիր հայ մարդը իր սրտում կենդանի է պահել իր Հայրենիքի և հայրենի սրբությունների պաշտամունքը։ Գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանը Սփյուռքի հարյուր հազարավոր հայրենակարոտ մեր հայ պանդուխտներից մեկն է, որը այցելելով Հայրենի երկիրը և մոտից տեսնելով իր փայփայած Հայրենիքի վառ իրականությունը, Մայր Աթոռը և հայրենի հնությունները, սիրտը լցված անհուն ուրախությամբ, վերադառնալով Անթիլիաս, բաժանել է իր տպավորությունները Սփյուռքի մեր հայ հավատացյալների հետ։ Մեզ լիովին հասկանալի է «ՀԱՍԿ»ի արտահայտած սրտաբուխ ուրախությունը՝ Մայր Աթոռի, հայ եկեղեցականության և Մայր Հայրենիքի իրողությանց մասին։ Ջերմ կասկածում, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, որը գլխավորում է պատմական ազնվատոհմ Աջապահյանների արժանավոր շառավիղ Ամենապատիվ Տ. Խաչ Սրբազանը, ո՛չ միայն կպահի և կպահպանի մեր երկու Աթոռների միջև հաստատված այս ջերմ փոխհարաբերությունը, այլ ավելի կզարգացնի այն։



ՔԱՐՈՋ

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

(Խոսված Երևանի Ս. Զորավար եկեղեցում,
1954 թվականի մարտի 7-ին)

«Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում թափեա զանցառութիւնս իմ»:

(ՍԱՂՄՈՍ Ե, 3)

Պաշխարությունի այս տրամաբանությունը պատկանում են մեծ մարգարեին, մեծ սաղմոսերգուին, որը որքան մեծ էր առաքինության մեջ, մի ժամանակ էլ Հին կտակարանի նույնքան մեծ մեղավորներից մեկը հանդիսացավ։

Հրեաների բանաստեղծ-թագավորը՝ Դավիթը, որը հասարակ հովվությունից թագավոր էր դարձել, ամեն ինչ ուներ իր աշխարհային զվարճությունների համար՝ պալատ, տարվներ և բազմաթիվ կանայք։ Բայց, այդ բոլորի մեջ, նա ինքնիրեն երջանիկ չէր զգում և մեղապարտ զգացումներով էր նայում իր շրջապատի մարդկանց երջանկության վրա։ Նա ուրիշների դժբախտության վրա ուզում էր իր երջանկությունը բարձրացնել։

Մի անգամ Դավիթը պրոսանքի ժամանակ պատահեց իր մեծ զորավարի գեղանի կնոջը, որի ամուսինը թշնամիների դեմ պատերազմում պաշտպանում էր թե՛ հայրենիքի և թե՛ իրեն՝ թագավորի պատիվը։ Զորավարից ազատվելու և նրա կնոջ տիրանալու համար Դավիթ թագավորը կարգադրեց, որ զորավարին պատերազմի վտանգավոր տեղն ուղարկեն։ Հրամանը կատարվեցավ և զորավարը կռվի մեջ սպանվեց։ Խեղով ամուսնու մահը, զորավարի կինը սուգ արավ, շատ արտասուքներ թափեց այն հպարտ զգացմունքով, որ նա պատերազմի դաշտում, հայրենիքի և իր թագավորի համար էր զոհվել։

Սգի օրերը անցնելուց հետո Դավիթ թագավորը տեր դարձավ զորավարի գեղանի կնոջը։ Շուտով, սակայն, դաղտնիքը բացվեց— Դավիթն իր մեղապարտ զգացմունքների համար սպանել էր տվել իր բարեկամին և զորավարին։

Թագավորի այդ ցնցված արարքը իմացավ Նաթան մարգարեն։ Նա եկավ թագավորի մոտ ու մարգարեի հատուկ նախանձախնդրությամբ և համարձակությամբ, մի առակի միջոցով հասկացրեց Դավթին իր ոճիրը։ «Մի քաղաքում,— ասաց մարգարեն,— ապրում էին երկու մարդ, մինը շատ հարուստ, անասունների և հսկա հարստության տեր, իսկ մյուսը աղքատ, որը միայն մի գառ ուներ։ Աղքատն աչքի լույսի պես սիրում էր իր գառնուկին, գուրգուրանքով հսկում էր նրա վրա և դիշերներն էլ իր ծոցում քնեցնում։ Մի օր հարուստի մոտ հյուր եկավ։ Նա, որպեսզի հյուրին հյուրասիրի, փոխանակ իր անթիվ նախիրներից մի ոչխար մորթելու, աղքատի միակ գառը խլեց և դրանով պատվեց հյուրին...»։

Դավիթը լսեց այս առակը ու նրա արդար հոգին խռովվեց անխիղճ հարուստի դեմ. նա ընդմիջեց Նաթանի առակը. «Դա անիրավ մարդ է, չարագործներից մեծ չարագործը, մահվան է արժանի այդ անզգամը...»։

Նաթան մարգարեն արդեն նպատակին հասել էր։ «Ձեր թագավո՛ր,— ասաց նա համարձակությամբ,— այդ հարուստը դո՛ւ ես։ Աստված քեզ ամեն ինչ տվել էր քո աշխարհային կենցաղի ու զվարճության համար— և՛ հարստություն, և՛ փառք, և՛ իշխանություն, և՛ իմաստություն, իսկ դու խլեցիր քո հավատարիմ և քաջ զորավարի կնոջը... ամուսնուն սպանել տվիր պատերազմի դաշտում... նրա արդար արյունը թողքում է Աստուծո ահեղ դատաստանի առաջ և հատուցում է պահանջում... իմ բերանով... «Ինչն ընդ ինչսն, ատամն ընդ ատամսն...»։

Դավիթ թագավորը հասկացավ իր մեծ հանցանքը, խիղճը զարթնեց, մեղքի ահավորությունը որպես սուր առաջը կանգնեց։ Նաթանի բերանով ահեղ Եհովան էր խոսում... Մեծ էր մեղքը, նույնքան մեծ պետք է որ լիներ և ապաշխարանքը, զղջումը...

Դավիթը հանեց արքայական թագն ու ծիրանին ու քուրձ հագավ, հրաժարվեց արքայական խաղաղ ու հանգիստ կյանքից ու ծանր, տրտմաթախիծ ապաշխարության ենթարկեց իր անձը. նստեց մոխիրների վրա և իր սիրելի քնարի վրա նվագեց իր ամենահուզիչ սաղմոսները, նրանց յուրաքանչյուր տողի մեջ դնելով իր ահավոր մեղքի խորը գիտակցությունն ու զղջումը. «Աստվա՜ծ, քավի՛ր իմ մեղքն ու անօրինությունը»։ Պալատում այլևս չէին լսվում անհոգ ու անվիշտ նախկին զվարթ կյանքի աղմկոտ երգն ու պարը... Սուգ էր պատել ամեն կողմ, որովհետև Դավիթն իր մեծ հանցանքով Եհովայի արդար զայրույթն էր բորբոքել իր Նորակազմ պետության և արքայական տան վրա։

Դավթի մեղքի պատմությունը պատմությունն է ամեն մարդու։ Մեղանից ոչ ոք զերծ չէ նման ծանր մեղքերից. մեղանչելը մարդկային է... Բայց Դավթի մեծությունն այն է, որ նա առանց վախի ընդունեց իր մեղավորությունը և արտանց զղջաց իր գործած ահավոր մեղքի համար ու արդարացավ։ Ինչքա՜ն անկեղծություն, վիշտ, տառապանք, հոգու կսկիծ, սրտի մորմոք կա նրա այդ ամեղապի մեջ, այդ տրտմության սաղմոսի մեջ, որը հին գրականության գոհարներից մեկն է։ Այդ ողբով մեծ մեղավորը դարձավ մեծ տվողը, հաշտվեց Աստուծո հետ։

Կարո՞ղ ենք ազատվել մեր գործած մեղքերից, արդարանալ և սրբվել անիրավությունններից։

Այո՛, կարող ենք ազատվել միմիայն Դավթի ապաշխարությամբ։

Բայց ի՞նչ է մեղքը։

Մեղքը՝ խզում է մարդու և Աստուծո միջև, պայքար է արդարության և անարդարության միջև, սրբության և անարժության միջև։ Մեղքը անիրավություն է՝ արդարության առջև, տկարություն է՝ մեծ զորության առաջ, անարժանություն է՝ սրբության առաջ, հպարտություն է՝ Աստուծո առաջ։ Մեղքը որդ է, որը կրծում է մարդուն հոգեպես, ֆիզիկապես և ֆիզիկապես, ինչպես որդը մեծ ծառն է կրծում ու գետին գլորում։ Մեղքը ամբոստացում է Աստուծո դեմ և ոտնահարում՝ մարդկային իրավունքների և հարաբերություններին։ Մարգարեները, առաքյալները, հայրապետները, նահատակները իրենց կյանքի օրինակով և պատմությամբ ցույց են տվել մեղքից ազատվելու միակ ու արմատական միջոցը, որ է ապաշխարությունն ու զղջումը։ Ապաշխարել նշանակում է լաց լինել, ար-

տասվել գործած անիրավության վրա և ապա մեծ վամքով տրված խոստում՝ չկրկնել նույնը։

Ինչպես առավոտները, անկողնից վեր ելնելով, անմիջապես երեսներս ու ձեռքերս ենք լվանում՝ մաքրվելու համար, այնպես էլ մեր սրտերը պիտի մաքրենք ապաշխարությամբ, զղջումով։ Ա՛յդ է նաև Աստուծո կամքը։ «Աստուած ո՛չ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա ի շար ճանապարհէն և զկեալն»։

Ապաշխարության ժամանակ ջուրը այլ տեղից չենք բերելու. այդ ջուրը հենց մեր սրտի մեջն է, բավական է կամք ունենանք և մեր սրտի աղբյուրը կբացվի։ Սրտի խորքից եկած մի կաթիլ անկեղծ արցունքը բավական է հայեցնելու մեղքի ապառաժները։

Անառողջ եղած ժամանակ, անմիջապես բժշկի ենք դիմում, որ մեզ առողջացնի։ Մեղավորն էլ հոգով է հիվանդ, որի բժիշկը ապաշխարությունն է, զղջումը։

Ապաշխարությամբ մեղքից, անիրավությունից հեռանում ենք և ոտք դնում մի նոր ուղու վրա, արդարության, ճշմարտության ուղու վրա։

Շատերս մեզ հարց ենք տալիս, թե ինչպե՞ս ապաշխարենք և կամ կա՞ն արդյոք միջոցներ այդ նպատակին հասնելու։

Այո՛, կան։— Ապաշխարության առաջին պայմանն է հավատը Աստուծո վրա և անկեղծ զղջումը։ Երկրորդ պայմանն է աղոթքի միջոցավ ներումն խնդրել մեր մեղքերի թողության համար մեր Փրկչից, որ իրը քավության նոխազ պատարագվեց մարդկության մեղքերի համար։

Ինքներս Փրկչից ներումն խնդրելով, մենք էլ ներողամիտ պիտի լինենք դեպի մեր ընկերը, դրացին։ Իսկ ո՞վ է մեր ընկերը. նա՛, որ կարիքն ունի մեր ընկերական օժանդակության, մեր քաջալերության, մեր անկեղծության, մեր սիրուն։

Հաչի վրա Փրկիչը բաղմաթիվ անարգանք ու ծաղր կրելով ասաց. «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն թե ի՞նչ են անում։ Ահա՛ թողության առաջին օրինակը։

Ներումն էլ միայն մի անգամ չպետք է լինի։

Հրեաների մոտ օրենք էր՝ ներում էին երկու անգամ, իսկ երրորդ անգամ օրենք էր՝ «ակն ընդ ական, ատամն ընդ ատամանս, այսինքն՝ «աչքի տեղ աչք հանել և ատամի փոխարեն՝ ատամ։

Առաքյալները ուզեցին իմանալ, թե քանի՞ անգամ կարելի է ներել և Հիսուսին հարցրին. «Յոթն անգամ բավակա՞ն է»։ Հիսուսը պատասխանեց. «Ո՛չ թե յոթն անգամ, այլ՝ յոթանասուն անգամ յոթը», այսինքն՝ անվերջ։

Եթե ներողամիտ ես դեպի մեկը, ների՛ր նաև մյուսներին, եթե ցանկությունն և ուժ ունես ներելու մեկ հանցանքը, ների՛ր և մյուս հանցանքները։ Բայց ներել՝ ո՛չ թե անզորության և թուլության պատճառով, այլ՝ դաստիարակելու, կրթելու և փրկելու նպատակով։ Այս ձևով դու մեղավորի և չարագործի գլխին կթափես երկնքի ողջ կրակը։ Նա քո ներողամիտ կեցվածքի և ընթացքի մեջ կտեսնի մի անհաղթահարելի մեծ ուժ— սիրո ուժը։ Ներել դաստիարակելու համար, զրկանքներ, հալածանք կրել անիրավներից ո՛չ թե նրանցից վախենալու համար, այլ՝ քո սիրով անիրավության դեմ հաղթանակ տանելու համար։

Ներմանդ ժամանակ մոռացի՛ր քո պաշտոնը և դիրքը, որ աշխարհային փառքեր են և անցողական, այլ ձգտի՛ր երկնային փառքին, որը հավիտենական է։

«Եթե մեղքերդ սև մուրի նման դիզվել են սրտիդ վրա, Տերը կապիտակացնի ձյունի նման, և այդ՝ միմիայն ապաշխարությամբ։

Ապաշխարություն են քարոզել մարգարեները։ Հիսուսի օրերին ապաշխարության մեծ քարոզիչը եղավ Հովհաննես Մկրտիչը։ Ապաշխարություն է քարոզել և քարոզում է Քրիստոնեական Ընդհանրական Եկեղեցին, այդ թվում և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին։

Շատ տպավորիչ, դաստիարակիչ է մեր Եկեղեցում ապաշխարության կարգը, մանավանդ Մեծ Պահոց այս սուրբ օրերին։

Հայ եկեղեցու ապաշխարության շարականները մեր շարակնոցի զարդն են կազմում իրենց գեղեցկությամբ, իմաստով, արժեքով։ Ո՞ր մեկը հիշել...։ Ապաշխարության այդ երգերի մեջ մեր հավատացյալ նախնիքը դրել են իրենց դեպի Աստված, դեպի կատարելություն, սրբություն, գեղեցկություն ձգտելու մեծ երազը...։

Որքա՞ն հմայիչ ու սրտառուչ են Մեծ Պահոց այս օրերին եկեղեցիներում երգվող ապաշխարության շարականները, որոնք խոսում են հավատացյալի սրտի, մտքի, հոգու հետ ու նրան վերացնում կյանքի կեղտերից, անիրավություններից։

Շատերին ապաշխարությունը ծանր է թվում, քանի որ նրանցից պահանջվում է ինքնաքննադատություն, պահեցողություն, խոստովանություն և բարոյական կաշկանդում։ Բայց հեշտ չէ ապաշխարությունը, ինքնաքննադատությունը, որովհետև մարդիկ առհասարակ սիրում են ընկերոջ աչքի շյուղը տեսնել և անտեսել իրենց սեփական մեծ ու աղաղակող թերությունները։

Ապաշխարելուն հետևում է աղոթքը։ Մեր աղոթքն էլ պետք է լինի ամբողջ սրտից՝ «ի սուրբ սրտէ»։ Աղոթքի ժամանակ ո՛չ թե միայն շրթունքները պիտի շարժվեն, այլ պետք է սիրտը թրթռա։ Աղոթքը պետք է լինի հաստատ, հավատի վրա հիմնված՝ ինչպես ժայռը։

Աղոթքին պիտի հետևի խոստովանությունը, և առանց ինքներս մեզանից ամաչելու, պետք է հիշենք այն բոլոր անօրեն և ապիկար գործերը, որ կատարել ենք։

Երբ խոսում ենք ապաշխարության վրա, մեր մտքից երբե՛ք չպետք է հեռացնենք փարիսեցու և մաքսավորի այնքան ցնցող, իրական պատկերը...։ Արդարև, ո՛վ իր անձը կբարձրացնի, կթաքցնի իր մեղքերը և թերությունները, նա կմնա թշվառ ու եղկելի մի մարդ, որի մեջ իշխում են կրքերն ու թերությունները։ Իսկ ով համարձակությամբ իր սիրտը բաց կանի իր խղճի առաջ, իր Աստուծո առաջ, իր Փրկչի առաջ, նա կմեծանա և կբարձրանա. «Որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի...»։

Ապաշխարողը երբե՛ք չի զղջացել. նա ստացել է մխիթարություն, հոգեկան հանգիստ և երբե՛ք չի ցավել իր արարքի վրա։

Սիրելի հավատացյալ ժողովո՛ւրդ, ապաշխարե՛նք ուրեմն հոգվով ու սրտով։ Սրբությանը մոտենանք աղոթքով ու խոստովանությամբ և հաղորդ լինենք Տիրոջ տուրբ մարմնին և արյանը՝ սրբագործված տուրբ պատարագով, ամեն։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ*

7. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՇԻՆՈՂՆԵՐԸ

Այստեղ խոսքը հատկապես երեք եկեղեցիների և ժամատան մասին է, իրրև գլխավոր հուշարձանների։ Մնացած հուշարձանների նկատմամբ ենթադրություններ կարելի է անել, որոշակի տվյալների բացակայության պատճառով։

ա) Հուշարձաններից ամենահինը Հին Եկեղեցին է, որն ըստ իր ոճի, քարերի մշակության ձևի և մի քանի այլ նշանների, 8-րդ կամ 9-րդ դարում պետք է շինված լինի։ (Ս. վրդ. Ջալալյանը համարում է 6-րդ դարում շինված, իսկ Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի Իջևանի շրջանի ուղեցույցում շինության ժամանակը դրվում է 10-րդ դարում[1])։

Այս հուշարձանը մի քանի անգամ վերանորոգության է ենթարկվել, որոնցից ամենավերջինը, մեր կարծիքով, կատարվել է 12-րդ դարի վերջին և կամ 13-րդի սկզբին, այսինքն Փոքր և Մեծ եկեղեցիների շինության շրջանում, վանքի վանահայր Հովհաննես Ա.-ի ժամանակ։ Այդ կապիտալ վերանորոգության ենթարկվել է եկեղեցու վերին կեսը, սկսած կամարներից, ներառյալ դմբեթը։ Այդ կարծիքը հիմնավորում ենք շինաքարերի տեսակով, դրանց մշակության եղանակով և գոյություն ունեցող վարդաքանդակներով, որոնցից մասնավորապես նշելի է Դմբեթի թմբուկի վերևում եղած քանդակազարդ գոտին։

բ) Ըստ վիմագրական տվյալների, ժամանակագրական կարգով, երկրորդ հերթին Փոքր եկեղեցու շինարարությունն է վերջացել։ Համաձայն այս հուշարձանի մուտքի ճակատաքարի արձանագրության (№ 56), Փոքր եկեղեցին շինված է Հայոց Ոխէ=647, այսինքն մեր թվագրության 1198 թվականին։ Դրա շինողը, ինչպես կարելի է եզրակացնել այդ արձանագրության բովանդակությունից, եղել է վանքի վիմագրության մեջ հիշատակված երեք վանահայրերից (Հովհաննես Ա., Դավիթ և Հովհաննես Բ.) Հովհաննես Ա.ը։ Այս Հովհաննես վանահոր մասին, թվագիր ունեցող արձանագրություններից նաև № 2-ի մեջ է հիշվում (այսինքն Մեծ եկեղեցու շինարարական արձանագրությունում)։ Մնացած՝ անթվակիր՝ արձանագրություններից, որոնց մեջ Հովհաննես վանահոր անունը կա, Հովհաննես Ա.ին կարելի է վստահորեն վերագրել Մեծ եկեղեցու արևելյան ճակատի ցածի մասում փորագրված 5 (№№ 5—9) արձանագրությունները, որովհետև դրանք Փոքր և Մեծ եկեղեցիների շինությանը ժամանակակից

---

* Շարունակված ամսագրի 1954 թվականի փետրվարի համարից։

1. «Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները։ Իջևանի շրջան (ուղեցույց)», Երևան, 1947 թ.։

ենք համարում. թե ինչո՞ւ, այդ մասին կասենք քիչ հետո։ Այստեղ միայն այսքանը կասենք, որ Մակարավանքի վիմագրության մեջ հիշատակված Հովհաննես անունով երկու վանահայրերին մեկ անձնավորություն համարել չի կարելի, որովհետև Հովհաննես Բ.ն, ըստ թվագիր ունեցող №№ 31, 33 և 55 արձանագրությունների, վանահայր է եղել շուրջ Հայոց ՉԲ—ՉԻԷ, այսինքն 1253—1278 թվականներին։ Բացի այդ, երկու Հովհաննեսների ժամանակագրության մեջ մենք ունենք երեք վանահայրերից երկրորդի՝ Դավթի՝ մասին թվագրական հիշատակություններ №№ 14, 26, 40 և 41 արձանագրություններում, Հայոց ՈՀԳ—ՈՂԴ, այսինքն 1224—1245 թվականներին։ Իհարկե չի կարելի ասել, որ 1198—1278 թվականներին, այսինքն 80 տարվա ընթացքում միայն հիշյալ երեք անձնավորություններն են վանահայր եղել, բայց քանի որ որևէ այլ փաստ չկա, ավելորդ կլինի այդ մասին խոսելը։

դ) Մեծ եկեղեցին. Մինչև վերջերս այս հուշարձանի շինության ժամանակի և կառուցողի մասին որևէ տեղեկություն հայտնի չէր։ Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի վերոհիշյալ ուղեցույցում այս տաճարը շինված է համարվում 11—12-րդ դարերում։

1953 թվականի օգոստոսի 22-ին պատահաբար հայտնաբերվեց մի գեղաքանդակ, զարդված, ֆիլիգրանային տուֆից շինված մեծ խաչքար, որի բեկորներից շորսը իրարից հեռու ընկած էին վանքի հարավակողմում եղած դարավանդներից երրորդի վրա և դրանից ցած, զառիվայրի լանջին։ Այդ խաչքարը նշանավոր է երկու պատճառով, նախ՝ դրա թիկունքին փորագրված է մի եկեղեցու շինության մասին, և երկրորդ՝ խաչքարը բաղկացած է եղել երկու մասից, մեկ մասի՝ մեծ կտորի վրա՝ քանդակված է խաչը, իսկ երկրորդ՝ փոքր կտորի վրա՝ խաչքարի գագաթը։ Երկու կտորները միացվել են երկու հաստ երկաթե կապերով, որոնց բները փորված են իրար կպչող ճակատների կտրվածքի մեջ։ Առաջին երկու մեծ բեկորները գտնվում են երրորդ դարավանդում։ Դրանց վրա հիշատակված են եկեղեցու շինության մասին և ժամանակի վանահոր և շինողի անունները։ Չորրորդ՝ ամենից հեռու և ցած ընկած, բեկորներից ամենափոքրի՝ գագաթի մասի մի կտորի վրա՝ պահված է ՈՄԴ թվագիրը։ Թե իրոք այս վերջին՝ ամենակարևոր՝ կտորը հիշյալ խաչքարին է պատկանում, իբրև ապացույց են քարի տեսակը (կարմրագույն ֆիլիգրանային տուֆ), երկաթե վրապի տեղը (փոսը) և այլ մանրամասնություններ։

Նախքան այդ կոտրված խաչքարի թիկունքին եղած արձանագրության բովանդակությանն անցնելը, անհրաժեշտ է ասել, որ արձանագրության մեջ հիշված եկեղեցին կարող է լինել միայն Մեծ եկեղեցին, որովհետև վանքում եղած մնացած երկու եկեղեցիներից Փոքրը ունի իր շինարարական արձանագրությունը, իսկ Հին եկեղեցուն բոլորովին չի հարմարի ՈՄԴ թվագիրը և ո՛չ էլ խաչքարի քանդակների, գրերի և գրության ոճը և արձանագրության բովանդակությունը։

Ցնյած սկզբի 10 շարքերի վերջավորության կոտրված և կամ վնասված լինելուն, այդ խաչքարի արձանագրությունից հետևյալ կարևոր տեղեկություններն ենք ստանում.

1. Եկեղեցին (Մեծը) շինված է Հայոց ՈՄԴ (654)=1205 թվականին, (վրաց) Թամարա թագուհու իշխանության և այդ ուխտի վանահայր Հովհաննեսի առաջնորդության ժամանակ։

2. Եկեղեցին շինել է Բաղազա իշխանի որդի Վարդանը, իր լորս եղբայրների հիշատակին։ Շինարարությանը օգնել է վանքի վանականներից մեկը, Ալեքսիոս անունով։

3. Խաչքարը դրված է եկեղեցին շինելուց հետո։

Արձանագրության 11—12-րդ շարքերում հիշված «... շինեցի զեկեղեցիս և եդի ի վերայ զխաչս լուսոյ» խոսքերը, մեր կարծիքով, չպետք է բառացի հասկանալ, թե խաչքարը կանգնեցված է եկեղեցու վրա, այլ որ եկեղեցին շինելուց հետո դրան ավելացրած է խաչքարը։ Խաչքարը եկեղեցին շինել-վերջացնելուց հետո կանգնեցնելուն ապացույց է նաև հաջորդ՝ 13—15՝ շարքերում եղած հիշատակությունը, որտեղ ասված է. «յառնելն զայս ոչ ոք ունէի օգնական, բայց միայն զհոգևոր եղբայրն մեր Ալեքսէոսն։ Այս խոսքերը պարզ ցույց են տալիս, որ արձանագրությունը գրված, կամ խաչքարը կանգնեցված է շինարարությունն ավարտելուց հետո։

Ենթադրում ենք, որ այդ խաչքարը պետք է տեղավորված լինի փոքր բակի հարավային եզրին, Մեծ եկեղեցուն մոտ։ Հավանական է, որ երկրաշարժից Մեծ եկեղեցու պատի վերին շարքերի ծանր և մեծ քարերից մեկը[1], ցած գլորվելով, դիպել և ջարդել է խաչքարը, հարվածի թափից հեռու շպրտելով բեկորները։

1. Մեծ եկեղեցու արևելյան ճակատից ցած ընկած մի քանի մեծ քարեր դեռևս մնում են փոքր բակից ցած գտնվող հարթակի և առաջին դարավանդի վրա։

Վերադառնալով մեծ եկեղեցու շինության հարցին, պետք է ասել, որ այդպիսի մի մեծ շենք մեկ-երկու տարում շինվել չէր կարող, այլ այդ աշխատանքը երկար ժամանակ է տևել։ Շինարարության դանդաղ ընթացքի մասին են վկայում եկեղեցու արևելյան ճակատին փորագրված 4 նվիրատվական արձանագրությունների ցածր դիրքը։ Այդ արձանագրություններից № 7-ի մեջ (Մարգարե քահանայի) պարզ ասված է. «էտու ընծայ ի շինութիւն եկեղեցոյս», որը ցույց է տալիս արձանագրությունը փորագրելու ժամանակ շինարարական աշխատանքի ընթացքի մեջ լինելը։ Մյուս արձանագրություններից երկուսը երկրի իշխաններին են պատկանում, որոնցից Վասակ Կուտկանինը (№ 9) տեղավորված է հյուսիսային ցածի խորանի ճակատին։ Նկատի ունենալով, որ Վասակ Կուտկանը ինքն է կարգադրում—«յետ մահուան Բ ժամ յԱւագ Հինգշաբթի օրն յիմ Վասակա յանուն արասցեն և ոչ թե վանքի առաջնորդն ու միաբանությունը, ինչպես սովորաբար արվում էր, պետք է եզրակացնել, որ դա շատ կարևոր անձնավորություն է եղել, թերևս վանքի տերը, կամ շրջակա երկրամասի իշխանը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր հուշարձանների պատերին արձանագրությունները տեղավորվում էին ըստ փորագրել տվողի հասարակական դիրքի, կամ տված նվերի արժեքի, պետք է եզրակացնել, որ շինարարության դանդաղ ընթացքի պատճառով Կուտկանը չի սպասել շենքի ավարտմանը, մի ավելի պատշաճ ու բարձր տեղում փորագրել տարու իր հիշատակը, ինչպես արել է եկեղեցու ավարտից հետո, իր № 16 արձանագրությունը դնելով սահմարի ներսում, հյուսիսային վերին խորանի ճակատին՝ բարձրում։

Մի հանգամանք ևս ավելի է հաստատում վերոհիշյալ կարծիքը. դա Փոքր եկեղեցու իր ներկա տեղում շինված լինելու փաստն է։ Ինչպես տեսանք, Փոքր եկեղեցին շինել է վանքի առաջնորդ Հովհաննես Ա.ն 1198 թվականին, այսինքն Մեծ եկեղեցու շինությունն ավարտվելուց 7 տարի առաջ, փոքր բակի հարավ-արևելյան ծայրին։ Հարց է առաջ գալիս, թե ինչո՞ւ վանքի վանահայրը իր եկեղեցին չի շինել Հին եկեղեցու կողքին, քանի որ այդ տեղն ավելի հարմար կլիներ հուշարձանների խմբի տեղադրության պլանավորման տեսակետից, եթե այդ տեղն արդեն գրավված չլիներ։ Մեր կարծիքով, Փոքր եկեղեցու հիմնադրման ժամանակ այդ տեղն արդեն բռնված էր կամ այլ՝ հին՝ շենքով, կամ կառուցման ընթացքում գտնվող Մեծ եկեղեցով։ Քանի որ որևէ այլ՝ հին՝ շենքի հետքեր տեղում հայտնաբերված չին, մնում է ընդունել, որ այդ տեղն արդեն գրավել էր Մեծ եկեղեցին, որի շինությունը՝ առնվազն՝ 10 տարի պետք է տևած լինի։ Այսպիսով եզրակացնում ենք, որ Մեծ եկեղեցին հիմնադրված է եղել Փոքր եկեղեցու շինությունից մի քանի տարի առաջ, վանահայր Հովհաննես Ա.ի օրոք, որը հուշարձանների անսամբլը չխախտելու նպատակով, իր՝ Փոքր՝ եկեղեցին շինել է Մեծ եկեղեցուց արևելք, փոքր բակի հարավ-արևելյան ծայրում։

դ) Ժամատուն. Այս հուշարձանի շինության թվականը վանքի վիմագրության մեջ բացակայում է, սակայն այդ՝ մոտավորապես՝ կարելի է վերականգնել, օգտվելով ժամատան պատերին փորագրված թվակիր և պատմական անձանց անթվակիր արձանագրություններից։

Ակնհայտ է, որ ժամատունը կառուցված է Հին և Մեծ եկեղեցիների շինությունից հետո, որովհետև այդ շենքը արևելյան և հարավային կողմերում իրեն հատուկ ամբողջական պատեր չունի, այլ հիմնականում այդ կողմերում կցված է հիշյալ երկու հուշարձաններին։

Ժամատան պատերին և մուտքի շրջանակի վրա 8 թվակիր արձանագրություններ կան, որոնցից ամենահինը Հայոց ՈՀԳ=1224 թվագիրն ունի, իսկ վերջինը՝ ՁԻԷ=1278 թվագիրը։ Դրանց մեջ ամենակարևորը՝ ժամատան շինության ժամանակը որոշելու տեսակետից՝ առաջինն է։ Այդ՝ ՈՀԳ թվակիր՝ Սարգիս քահանայի՝ արձանագրությունը գտնվում է ժամատան հարավ-արևելյան անկյունի վերին հարկի խորանի պատի վրա, մուտքից ձախ։ Այդ արձանագրության այսպիսի տեղադրությունն ապացույց է, որ 1224 թվականին ժամատան շինարարությունն արդեն վերջացած էր, և քանի որ նման բարդ կազմություն ունեցող բազմաբնակ մի շենք կառուցելու համար առնվազն 7—8 տարի էր պետք, հետևապես կարելի է ասել, որ այս հուշարձանը շինված է շուրջ 1216—1224 թվականներին։ Այս ժամանակագրությունը լրացնում և հաստատում է ժամատան հյուսիսային պատի վերևում (ներսից), լուսամուտից աջ գտնվող, գեղեցիկ և խոշոր գրերով փորագրված, Ամբերթեցի Վաչե իշխանաց իշխանի արձանա-

գրությունը (№ 39), որի մեջ, իբրև վանքի առաջնորդ, հիշատակվում է, վիմագրությունից մեջ հայտնի, երկրորդ վանահայր Դավթի անունը, որը, ինչպես վերը գրել ենք, հիշատակվում է հայոց ՈՀԳ—ՈՀԴ, այսինքն 1224—1225 թվականներին փորագրված արձանագրություններում։ Հավանական կարելի է համարել, որ Դավիթը Մակարավանքի առաջնորդ է եղել 1224 թվականից մեկ կամ երկու տարի առաջ, այսինքն 1222—1223 թվականներին։

Վաչե Ամբերթեցի հարուստ իշխանաց իշխանը, որը 600 դահեկան է նվիրել ժամատան (արձանագրության մեջ՝ գավթի) շինությանը, հավանաբար Արագածոտնի Սաղմոսավանքի Ս. Սիոն եկեղեցու շինողը և Հովհաննավանքի Կաթուղիկե եկեղեցու շինությանն օժանդակող Վաչուտանց Վաչե իշխանաց իշխանն է։ Սաղմոսավանքի Ս. Սիոն եկեղեցին շինված է 1215 թվին, իսկ Հովհաննավանքի Կաթուղիկե եկեղեցու շինությանն օժանդակելու մասին վկայում է նույն եկեղեցու ներսում, հյուսիսային պատի վրա պահված, Վաչե իշխանի ՈԿԶ—1217 թվակիր արձանագրությունը։ Հետևապես այդ թվերն էլ համապատասխանում են ժամատան շինության ժամանակի համար մեր բերած թվերին (1216—1224)։

Այս բոլորից կարելի է նաև եզրակացնել, որ ժամատան շինարարությունը սկսվել է վանքի առաջնորդ Հովհաննես Ա.-ի օրոք և ավարտվել է Դավթի առաջնորդության ժամանակ։ Բացի Վաչե Ամբերթեցուց շինարարությանը նյութապես օժանդակել են ժամանակի ուներոր դասը, որոնց թվում նաև հոգևորականներ։

Նախքան Մակարավանքի գլխավոր հուշարձանների շինության և դրա ժամանակի մասին մեր խոսքն ավարտելը, անհրաժեշտ ենք համարում հետևյալ՝ ընդհանուր բնույթ կրող՝ դիտողություններն անել։

Մեծ եկեղեցու շինության ժամանակի վերաբերությամբ կարծիք հայտնեցինք, որ վանահայր Հովհաննես Ա.-ը, հուշարձանների ընդհանուր տեղադրության պլանը նախատեսելու և լրացնելու նպատակով, Փոքր եկեղեցին կառուցել է գլխավոր խմբի հուշարձանների շարքից դուրս։ Սակայն այդ՝ Փոքր եկեղեցու՝ շինության ժամանակ դեռևս ժամատան շենքը չկար, հետևապես նա կարող էր իր եկեղեցին կառուցել և ժամատան տեղը, իսկ եթե այդ չի արել, և բացի այդ Մեծ եկեղեցին նրա օրոք տեղադրվել է Հին եկեղեցու շարքից քիչ հետ՝ դեպի արևմուտք, երկու եկեղեցիների (Հնի և Մեծի) կիցքում թողնելով մի ընդարձակ, քառակուսի տարածություն, որտեղ հետագայում շինվել է ժամատունը, կարելի է եզրակացնել, որ բոլոր գլխավոր շենքերի (դրանց թվում նաև ժամատան) դասավորության պլանը ծրագրվել և նախատեսվել է այդ վանահոր օրոք, որը և ժամանակի ընթացքում, աստիճանաբար իրականացվել է։ Այն հանգամանքը, որ Մեծ եկեղեցին հիմնադրվել և շինվել է ոչ անմիջապես կից Հին եկեղեցուն, այլ այդ երկուսի մեջ որոշ տարածություն է թողնվել, ևս մի ապացույց է, որ այդ արված է այն նկատառումով, որպեսզի Մեծ եկեղեցու և հյուսիսային ձորի մեջ բավականաչափ տեղ թողնվի ժամատան շենքի համար, այն հաշվով, որ ըստ հնարավորության Հին եկեղեցին, որն այդ բարդավաճող ուխտի կորիզն էր կազմում, ընկնի ժամատան արևելյան ճակատի կենտրոնում։ Բացի այդ, նկատի առնելով Հին եկեղեցու վերջին նորոգության, մատուռի, աղբյուրի շենքի և դարբասի ճակատի (կամարի) շինաքարերի տեսակը, դրանց մշակելու ձևը, քանդակների ոճը և այլն, հավանական ենք համարում նաև, որ այդ աշխատանքներն էլ կատարվել են Հովհաննես Ա.-ի առաջնորդության ժամանակ, կամ նրա մշակած ծրագրով, վանքին պատշաճ, գրավիչ և ամբողջական տեսք տալու նպատակով։

Այսպիսով, մեր կարծիքով, հիմնականում Մակարավանքի կարևոր հուշարձանների շինարարությունը, բացառությամբ Հին եկեղեցուց, կատարվել է 12-րդ դարու վերջին տասնամյակի և 13-րդ դարու երրորդ տասնամյակի ժամանակաշրջանում, շուրջ 30—35 տարվա ընթացքում։

Այդ ժամանակամիջոցը համապատասխանում է վրաց Թամարա թագուհու և Զաքարե ու Իվանե տպասալարների տիրապետության շրջանին, երբ Հայաստանում (խոսքն Արևելյան Հայաստանի մասին է) համեմատաբար խաղաղ կյանք կար և կապիտալ շինարարության հնարավորություններ։

Մասնավորապես Մակարավանքում այդ հնարավորություններից լավագույն ձևով օգտվում է Հովհաննես Ա. առաջնորդը, ցուցաբերելով մեծ ճաշակ և ճարտարապետական հուշարձանների պլանավորման ու ձևակերպության գործում նախատեսողի և իրագործողի բացառիկ հմտություն, որը և նրան մեծ պատիվ է բերում։

(Շարունակելի)

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ*

6. ԱՐԴԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂԸ

Հերհեր գյուղը մեկն է Հայոց ձորի ամենամրդաշատ և ամենաշրջառատ գյուղերից։ Ներտեղ բնակարանները թաքնվել են բառաբերձ ընկուզենիների, ծիրանենիների և սալորենիների թանձրախիտ անտառի մեջ։ Գյուղի հյուսիս-արևելյան կողմով արագ հոսում է Արևելյան Արփա (Արփաչայ) գետի աջակողմյան վտակներից երերը, որի ջրերը ոռոգում են ոչ միայն գյուղը շրջապատող ընդարձակ մրգաստաններն ու խաղողի այգիները, այլ նաև ծխախոտի և հացահատիկի շրատակ անդաստանները՝ Բուլախլարի և Առինջի հողերն էլ միասին վերցրած։ Ջրի և ստվերի այս առատությունը (սաղարթախիտ այգիների մեջ արևը համարյա չի թափանցում) Հերհերի կլիմային պարգևում է հիանալի մեղմություն, զովություն։

Հերհերի կոյտնտեսությունը, բացի լայնատարած մրգաստաններից և խաղողի այգիներից, ունի ընդարձակ մշակելի հողեր Դալիկ Թեփեի, Կարմրաշեն—Հերհեր—Բուլախլար վայրերի շուրջը՝ Երեր վտակի հովտում և նրանց հանդիպակաց սարահարթերի վրա, որտեղ հացահատիկային բույսերի հավասար կարևորությամբ մշակվում է նաև ծխախոտը։ Մեկից ավելի հատուկ շորանոցներ կան, հենց տեղում շորացնելու համար ծխախոտը։

Գյուղի կենտրոնում են գտնվում գյուղսովետի գրասենյակը, պահեստը, մթերային խանութն ու ակումբը, որի սրահում է, որ ամեն շաբաթ երեկո ժողովրդին ներկայացվում են օգտաշատ ու դաստիարակիչ ֆիլմեր։ Բնակիչների սանիտարական ուշխատանքը տանում է բժշկուհի Մարգարիտ Դավթյանը։

Տասնամյա լրիվ միջնակարգ դպրոց է Հերհերի գյուղը (դիրեկտոր՝ Վազգեն Կոկոսյան), բարձրորակ ուսուցչական կազմով, որի անդամներից են իմ փոքր աղջիկը՝ Սոնյան և նրա ամուսինը՝ Հակոբ Տեր-Սարգսյանը (Հայրենադարձ Ֆրանսիայից)։ Դպրոցի լաբորատորիան (վարիչ՝ Սոնյա Տեր-Ստեփանյան), վերջերս հարստացավ բնապատմության, քիմիայի և ֆիզիկայի նոր նյութերով և գործիքներով, հնարավորություն ստեղծելով դպրոցում պոլիտեխնիկական կրթության իրագործման համար։ Գրադարանն էլ հարուստ է պատմական, գիտական ու գրական գրքերով, որոնցից օգտվում են աշակերտները՝ բարձրացնելու համար իրենց ուսման մակարդակը։ Սույն դպրոցում իրենց միջնակարգ ուսումն են ստանում նաև մոտակա Կարմրաշեն և Դալլաղլու գյուղերի յոթնամյա դպրոցների շրջանավարտ երկսեռ աշակերտները, որոնց համար հատուկ հանրակացարաններ են պատրաստվել գյուղում։

Երևանից 210 կիլոմետր հեռու, Հայոց ձորի լեռներին թիկունք տված այս գյուղերի դպրոցների մասին հարազատ կառավարության կողմից ցույց տրված անընդհատ հոգատարությունն ու աշակերտների պայծառ հայացքի մեջ արտացոլվող հեռանկարները տեսնելիս, տրտմությամբ հիշում եմ արտասահմանի հայ աշակերտներին, որոնց հայացքները աղոտ էին և առանց հեռանկարի, որովհետև նրանք զուրկ էին հարազատ պետության հայրական հոգատարությունից։

Ասֆալտապատ մի ճանապարհ, Երեր վտակի վրա մի էլեկտրական միկրոգէս և հանքային աղբյուրների մոտ մի քանի ապաքինարան— հանգստյան տներ, Հերհերի հովիտը պիտի դարձնեին Հայաստանի ամենագեղեցիկ կուրորտային կենտրոններից մեկը, ինչպիսին է Ջերմուկը։

---

* Շարունակված ամսագրի 1951 թվականի փետրվարի համարից։

7. ՋԵՐՄՈՒԿ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԸ

Ավելի քան 2.000 մետր բարձրություն ունեցող Ջերմուկը, Հայոց ձորի ամենահետաքրքրական կենտրոններից մեկն է իր լեռնային կենսաստեղծ օդով, ուղտրա-մանիշակագույն ճառագայթներով հարուստ արևով, սառնաշունչ աղբյուրների կողքին 64.50 աստիճան ջերմությամբ հանքային բուժիչ ջրերով, մշտադալար անտառներով ու չքնաղատեսիլ վայրերով։

Բացառիկ գեղեցկություն ունի Ջերմուկի կիրճը, որի մեջից շառաչաձայն հոսում է Վարդենիսի և Ջանգեզուրի լեռներից ծնունդ առած Արևելյան Արփա գետը (Արփալայը), իր երկայն ճանապարհի վրա ծիծաղ ու կյանք պարգևելով անջրդի հողերին։ Այդ կիրճում, հոգեկան ի՞նչ մեծ վայելք է օրվա որևէ ժամին նստել նորակառույց տախտակաշեն կամրջի հատուկ նստարանների վրա և հիացմունքով դիտել բնության հրաշալիքներից մեկն եղող ջրվեժը, որի ջրերը փրփրաբուռտակ գահավիժում են 70 մետր բարձրությունից՝ Ներքու հսկայական պատնիշաժայռերի արանքից։ Բնական հրաշալիքներ են նաև, նույն կիրճում, այն վիթխարի կամարները, որոնք գոյացել են լեռների տակ ոչ մարդկանց ձեռքով, արձանանման ժայռերը, որոնք կիրճին տալիս են վեհատեսիլ երևույթ, բարանձավները, որոնց վերևում ու շուրջը, խոռոչներում բույն են դնում քարածիծառները, վերջապես հիանալի շինքերը Ջերմուկգէսի և ջրավազանների (վաննանների), առաջինը՝ աղբյուր լուսավորության, իսկ երկրորդը՝ աղբյուր կենդանության։

Կիրճի հյուսիսային բերանից որոլապտույտ ու լայնարձակ խճուղով բարձրացող ուղևորը դեմ-հանդիման է գտնվում արդեն իսկ կառուցված և նոր կառուցվող մի շարք սանատորիաների հետ, շրջապատված ծաղկաստան-այգիներով, ուր հանգստանում են բուժման ենթակա աշխատավորները։ Ճարտարապետական գեղեցիկ կոթող է լինելու հանքային ջրերի սյունազարդ տաղավարը, որի մոտ երևացող փոսերը հիշեցնում են մոտիկ անցյալը, երբ հիվանդներ այդ փոսերի մեջ պառկած, փոխանակ բուժվելու, վարակում էին ուրիշներին։

Այժմ նորանոր շենքերի շինարարությունով եռում է Ջերմուկը։ Մի քանի տարի հետո արդեն իսկ մեծ, շքեղ, արդիական քաղաք կդառնա այն, որ 13-րդ դարից սկսած ճանաչվել էր որպես հրաշագործ բուժավայր, բայց չէր ունեցել երբևիցե այսօրվա վերելքն ու բարգավաճումը։

8. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Երկու ցերեկ և երկու գիշեր մնացի ես Ջերմուկում և հիացա ոչ միայն այդ նշանավոր վայրի նորակառույցներում՝ Ջերմուկգէսում, սանատորիաներում, հյուրանոցներում, ասֆալտապատ փողոցներում տիրող մաքրության, այլև օտարներին ցույց տրված հյուրասիրության վրա, որին ես էլ արժանացա պրոֆ. Աշոտ Աբրահամյանի ազգական Խուրշիտյան և Բաբայան ընտանիքներում, առանց նախապես որևէ ծանոթություն ունենալու։ Այդ ընտանիքների ցուցաբերած անկեղծ ու սրտաբուխ հյուրասիրությունը ինձ հիշեցրեց ենահանջ բյուրոցի հեղինակ հույն պատմագիր Քսենոֆոնի (5-րդ դար մ. թ. ա.) դրվատալից վկայությունը՝ հայկական հյուրասիրության մասին։ Ափսոս որ Արխաշան և Կղզի թեփե սարերի վրա հանկարծ տեղացող ձյունները հարկադրեցին ինձ շտապ հեռանալ Ջերմուկից, շնորհակալություն հայտնելով իմ հյուրընկալ Գրիշա Խուրշիտյանին, որ առաջնորդել էր իմ շրջագայությունը այս դյուրիչ վայրերում։

9. ՎԵՐԱԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ

Երևանից դեպի Հերհեր և Հերհերից Ջերմուկ իմ ճանապարհորդությունը տեղի էր ունեցել մասամբ գիշերով, մի քան, որ ինձ զրկել էր ճանապարհի գեղեցկությունները լրիվ ըմբռնելու հոգեկան հաճույքից։ Այդ ինձ վիճակվեց օր-ցերեկով՝ վերադարձի ժամանակ։

Սքանչելի է Արփա գետի հովիտը։ Ջերմուկից մինչև Ջայքենդ գյուղը, որի ամրակերտ կամրջի վրա իրար են միանում Երևան—Ջերմուկ և Երևան—Գորիս խճուղիները, գետեզրի կանաչ մրգաստանների վերև բարձրանում են ահասարսուռ ժայռեր՝ այլազան կերպարանքներով ու զարմապտույտ պատճառող գահավիժներով։ Վիմագիր արձանագրություններով հարուստ Կեչուտ, (Ղուշչի) գյուղի և Գնդեվազ գյուղի միջև գտնվող այդ ահեղատեսիլ ժայռերից մեկի ստորոտում, Արփայի աջ ափով իջնող ասֆալտապատ ճանապարհի վրա է Կոմունարների սառնաշունչ աղբյուր-հուշարձանը, որի ճակատում արձանագրված է հետևյալը.

«1920 թվին դաշնակցական արյունարբուների ձեռքով այս ժայռից ցած գցած սովետական կարգերի հաստատման համար զոհված կոմունարների հիշատակին», որպես հավիտենական խարան հայրենադավների մրոտ ճակատին և դափնեպսակ՝ հայրենասեր նահատակների անմոռանալի հիշատակին։

Կանաչների մեջ ըղացող գյուղ է Գնդեվազը կամ Գնդեվանը, ուր դեռևս կանգուն մնում է հայ դրչագրության ծանոթ կենտրոններից մեկը՝ Գնդեվանքը, որ ըստ կառուցողի՝ Սյունյաց տեր Սմբատ իշխանի կին Սոփիի թողած արձանագրության՝ ռանակն մատանի Վայոց ձորի վրա դրվել է որպես թանկագին ակն։

Գնդեվանքի կառուցման (936 թ.) հետ կապված ժողովրդական ավանդությունը համարյա հար և նման է Կիլիկիայի հանրահանաչ նավահանգիստ Այասի բերդի կառուցման ավանդության։ Երկուսի մեջ ևս կան իշխանուհի և իշխան։ Մեկը՝ պիտի կառուցի եկեղեցին կամ բերդը, մյուսը պիտի բերի հեռավոր աղբյուրի ջուրը՝ որպես պարման ամուսնության։ Առաջ են տարվում աշխատանքները։ Եվ երբ վերջանալու մոտ է շինությունը վանքի և ջրուղու, հանկարծ ասատանան, ջատուկ պառավի կերպարանքով, խառնվում է գործին. իշխանուհու մոտ վատաբանում՝ իշխանի մասին, իշխանի մոտ չարախոսում՝ իշխանուհու մասին և պատճառ դառնում ողբերգության։ Իշխանուհին, բարձր ժայռերի վրայից դեպի գետ է գցում ինքն իրեն ու մահանում՝ կիսատ թողնելով վանքի շինությունը։ Նույնպիսի վախճան է ունենում իշխանն էլ՝ առանց վերջացնելու ջրուղին, որ մոտեցել էր գյուղին։

— Այ, տեսնո՞ւմ ես այն մեծ ծակը Գնդեվանքի խորանի վրա,— ասում է ինձ ավանդությունը պատմող հեքիաթի Անիկ Հովհաննիսյանը,— այդքան տեղ միայն մնացել էր վանքի շինությունն ավարտելու համար՝ երբ պատահել է ողբերգությունը։

Անտարակույս ճիշտ չէ ավանդությունը, որովհետև Գնդեվանքը երկար ժամանակ եղել է Սյունյաց աշխարհի լուսավորության կենտրոններից մեկը։ Ըստ Գարեգին արքեպիսկոպոսի հիշատակության, «ի մենաստանիս, որ կոչի Գնդեվանս, բնակվել է Արատեսի ուխտի միաբաններից Վարդան վարդապետը, որ գծագրել է տվել մի ավետարան ի թուաբերութեան Հայոց, որ էր ՉԼԳ (1284), ի հայրապետութեան հայոց Տեառն Յակոբայ և յարհի եպիսկոպոսութեան այսմ նահանգի Տէր Սարգսի գիտնականի, իշխանութեան բարեպաշտ Պապաքին (Պռոշյան։ —Ս. Հ.) և ի տէրութեան այսմ մենաստանի (Գնդեվանք։— Ս. Հ.) պատրոն Դաւթի և ամուսնոյն իւրոյ Թամարին, ձեռամբ սրբոյն Սեթ և պատուական Յովանէսի (վարդապետ։— Ս. Հ.) ի տուրս ուխտին, որ կոչի Թանատի վանս, որ մեծաւ աշխատութեամբ գրեաց զսա (ավետարանը։— Ս. Հ.) և նվիրեաց ըստ իւրում կարողութեան...»։ Ինչ վերաբերում է ջրուղուն, նրանով է բերվել հեռավոր տարածություններից խմելու և ոռոգման ջուրը մինչև վանք, որին պատկանել են, բացի Գնդեվան և Աստլար գյուղերից՝ Ձորամիջի այգիները։

Անհաղթահարելի նկատված բնական դժվարությունների վրա գիտության և մարդկային ուժի փառավոր հաղթանակը ցայտուն կերպով երևում է Ջերմուկի խճուղու վրա, ուր հուժկու էքսկավատորներ ժայռեր են խորտակում, բլուրներ հարթում և լայնացնում Արփաչայի շառաչուն ջրերի զուգընթաց խճուղին, մինչ ծանրամարմին գլանամեքենաներ՝ գլանում, տափանում են ժիր բանվորների կարշնեղ բազուկներով ճամբի վրա տարածված ասֆալտը։

Ջալքենդից սկսյալ հյուսիսից դեպի հարավ իջնող Արփա գետը հանկարծ փոխում է իր ուղղությունը և հոսում արևելքից դեպի արևմուտք։ Աջից և ձախից ընդունելով մեծ ու փոքր բազմաթիվ վտակներ և նրանց հետ միասին ոռոգելով Միկոյանի և Ազիզբեկովի շրջանների հողերը, ինչպես նաև Շարուրի դաշտը (Նախիջևանի ԱՍՍՌ-ում), նա թափվում է Արաքս գետի մեջ՝ կտրելուց հետո 112 կիլոմետր երկայն մի ճանապարհ։

Արփա գետի և նրա հարկատու վտակների հովիտներով անցնող խճուղու վրա մարգարիտների նման շարվել են մեկը մյուսից գեղեցիկ ու բարգավաճ գյուղեր ու դյուղաքաղաքներ։ Նրանցից է, օրինակ, 150 հեկտար տարածությամբ մրգաշատ այգիների կանաչով գեղազարդված Մալիշկան, որ սառած լավանների ներքո ընդմիշտ հանգած Մոսի տխուր տպավորությունը փարատելու համար, կարծես ուզելորին ասում է. «Մե՞ն շկա՛ս, այսինքն՝ «Մի՞ արի տե՛ս, ո՞նց գեղեցիկ եմ։» Մալիշկայի վտակի հովիտով դեպի հյուսիս բարձրացող ուղևորը հեշտությամբ կարող է տեսնել Արկազի նշանավոր Ս. Խաչ վանքը։

Արտակարգ գեղեցկություն ունի Միկոյանը (հին Քեշիշքենդը) իր բարձր դիրքով, որ դիշեր ժամանակ լուսավորվելով քաղաքի միջով անցնող վտակի վրա կառուցված միկրոՀԷՍ-ի լույսով, դառնում է աստղազարդ երկնքի մի հրաշալի պատատ։ Ցածր ու հողաշեն տներով Քեշիշքենդը, բացի հին զանգակատան երկնակարկառ ուրվանկարից, տեղի է տվել երկհարկանի կամ եռահարկ

գեղակերտ շենքերով և մաքուր փողոցներով Միկոյանին, ուր կա բանկ, ճաշարան, հյուրանոց, հյուսվածեղենի գործարան, շրջանային թերթ, թատրոն, կինո, գրադարան, փոստատուն, տասնամյա և յոթնամյա դպրոցներ, մանկատուն, հիվանդանոց և այլն։ Այժմ Միկոյանն է Վարդենիսի լեռներից մինչև Սյունիք տարածվող ընդարձակ Հայոց ձորի (Վայոց ձորի) կամ այժմյան Ազիզբեկովի շրջանի քաղաքագյուխը (շրջկենտրոնը)։

Միկոյանից դեպի արևմուտք շատ հեռու չէ Գետափ գյուղը, Արփա գետի Եղեգիս վտակի վրա։ Մեծ ու ամրակերտ կամուրջը տպավորիչ է ոչ միայն իր երկաթե բարձրադիր բազրիքներով, այլ մանավանդ նրա համար, որ հենց այնտեղից բաժանվում են պատմական հիշատակարաններով հարուստ երկու ճանապարհներ, մեկը՝ դեպի հյուսիս, մյուսը՝ դեպի հարավ։ Դեպի հյուսիս բարձրացող ճանապարհը Եղեգյաց ձորն է, ուր գտնվում էր Միջին դարում արևելյան հայոց «համալսարանը»՝ Գլաձորի դպրոցը, որ կարևոր դեր է կատարել ո՛չ միայն եկեղեցական, այլև գիտական-գեղարվեստական առաջարեղներում շնորհիվ իր հասցրած գիտնական վարդապետների՝ ինչպես Ներսես Մշեցու, Եսայի Նչեցու, Խաչատուր Կեչառեցու, Հովհաննես Սսեցու, Կիրակոս Երզնկացու, Հովհաննես Որոտնեցու և գեղագիր գրիչների՝ Սարգսի, Հունանի, Հակոբ Թագորցու, Կյուրեղ Սարկավագի և ուրիշների։ Հիմա Միկոյանի մոտիկ հյուսիսում կա Գլաձոր անունով մի սիրուն գյուղ։

Դեպի հարավ իջնող խճուղու վրա է Արենի (Արփա) գյուղը, որի մոտիկ սարերի վրա դեռևս կանգուն մնում են մնացորդները մի շարք վանքերի, որոնց նշանավորագույնն է եղել Նորավանքը, որտեղ գործել ու թաղվել է (1309 թ.) Ստեփանոս Օրբելյան պատմագիրը։

Ես Հայոց ձոր էի գնացել Երևան—Նորաշեն (Նախիջևանի ԱՍՍՌ)—Արենի ճանապարհով, Երջանիկ եմ, որ իմ վերադարձը կատարվեց Արենի—Ջիվա—Ելփին—Սովետաշեն (Զանգելու)—Պիրարու—Ղարախաչ—Շաղատայու—Ղարաբաղլար (Զիման)—Վեդի—Նոր Կյանք ճանապարհով, որովհետև ես ավելի շատ առիթ ունեցա տեսնելու խաղաղությամբ մեջ հսկայաքայլ բարգավաճումը հայրենի երկրի և վայելելու նրա բնական հրաշալի դեղեցկությունները։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՍ

Մարտի 14-ին, ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունների օրը, Մայր Աթոռի միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը ներկայացան իրենց ընտրական տեղամասը՝ քվեարկելու ժողովրդի ընտրելիներին։ Նրանք, որպես Սովետական Միության լիիրավ քաղաքացիներ, իրենց ձայնը միացրին բազմահազար սովետական ազնիվ քաղաքացիների ձայնին՝ քվեարկելով հոգուտ իրենց ցանկացած թեկնածուին։

***

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում վերջերս քարոզչական եռանդուն գործունեություն է ծավալել բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանը։ Հայր սուրբն իր հուսապնդիչ գեղեցիկ քարոզներով մխիթարում է հավատացյալներին։ Նա ոգևորում, եռանդ է ներշնչում նրանց՝ էլ ավելի նվիրվելու Հայ Եկեղեցուն, Հայրենիքին և սրբությամբ պահպանելու Քրիստոսի երկնառաք սրբազան ավանդները։

Բացի Մայր Տաճարից, Մեծ Պահքի օրերին հայր սուրբը քարոզներով հանդես է եկել նաև Երևանի Ս. Սարգիս, Ս. Հովհաննես և Ս. Զորավար եկեղեցիներում։ Ունկընդրող հավատացյալներն ամենուրեք իրենց գոհունակություններն են հայտնում բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանի բովանդակալից քարոզների համար։

***

Մարտի 23-ին Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ գրական հանդես՝ նվիրված Հովհաննես Թումանյանի մահվան 31-րդ տարեդարձին։ Ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և դասախոսները։

Հանդեսը սկսվեց «Հայր մեր»-ով։

Ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանի բացման խոսքից հետո, մեծ բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ Ճեմարանի լեզվի ու գրականության դասախոս Ա. Մինասյանը։ Ինքնուրույն ստեղծագործություններով և արտասանություններով հանդես եկան Հոգևոր Ճեմարանի սաներ Հ. Ջամչիկյանը, Ա. Բալաբանյանը, Հ. Դանիելյանը, Ֆ. Փիլիպոսյանը, Կ. Բենելյանը, Ռ. Վարդանյանը, Ի. Մելքոնյանը։

Հանդեսն անցավ կազմակերպված ու հաջող՝ հիացում առաջացնելով ունկնդիրների մեջ։

***

Մարտի 24-ին, Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր գրական-երաժշտական երեկո՝ նվիրված հայ դասական երաժշտագետ Տիգրան Չուխաջյանի ծննդյան 117-րդ տարեդարձին։ Ներկա էին Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և միաբանության անդամները։

«Տիգրան Չուխաջյանի կյանքն ու գրական գործունեությունը» ընդհանուր զեկուցումով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի երաժշտության դասախոս Հրանտ Գեորգյանը։ Այնուհետև ուսանողները Հրանտ Գեորգյանի ղեկավարությամբ կատարեցին առանձին երաժշտական կտորներ Տիգրան Չուխաջյանի «Կարինե» և «Արշակ Երկրորդ» օպերաներից։

Երեկոն անցավ ջերմ ու խանդավառ մթնոլորտում։

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ

ԷՋԵՐ ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՑՅԱԼԻՑ

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու պատմության վերջին հիսնամյակի ամենակարկառուն ազգային-եկեղեցական դեմքերից մեկն է՝ իր հազվագյուտ բարեմասնություններով, բարձր կուլտուրական արժանիքներով, վարչական ձիրքերով, ազգատար գործունեությամբ, իր անկաշառ հայրենասիրությամբ, քահանայապետի վայել պատկառանքով և առաքինությամբ։

Նորին Ս. Օծությունը սարկավագության օրերից մինչև Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը բարձրանալը, իր ողջ գիտակցական կյանքը, առանց մնացորդի, նվիրաբերել է հայ ժողովրդի հավատքին և մշակույթին, հայու Հայրենիքին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն։ Իսկ նրա գահակալությունը Լուսավորչի Աթոռի վրա՝ մի նոր ու խոստումնալից էջ բացեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նորադույն շրջանի պատմության մեջ։

Ես հավակնություն չունեմ այս մի քանի ակնարկային տողերի մեջ անդամ ուրվագծել մեր ժամանակի մեծագույն եկեղեցականի, անկեղծ հայրենասերի, բարի ու անձնդիր Հովվապետի դիմանկարը, այլ մի քանի սրտագին տողերի մեջ, իբրև Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի անդրանիկ սաներից մեկը, ցանկանում եմ իմ որդիական քաղցր պարտականությունը կատարել, ոգեկոչելով Նորին Ս. Օծության սարկավագական և ուսանողական կյանքի մի քանի անմոռաց գրվագները, որոնցում արդեն պարզ երևում է ապագա մեծ եկեղեցականը։

Դեռևս Գեորգյան Ճեմարանի ուսանող՝ Գեորգ Զորեքյանը ցուցաբերել է երաժշտական փայլուն ընդունակություններ։ «Արարատ» ամսաթերթում կան փաստեր այդ մասին։ Հանգուցյալ Մակար Կաթողիկոսի անվանակոչության տոնի օրը, 1888 թվականի դեկտեմբերի 8-ին, Էջմիածնի միաբանությունը, Սինոդի արքեպիսկոպոս անդամները, Վեհարանում, հրավիրված են եղել Կաթողիկոսի (Մակարի) կողմից ընթրիքի. երեկոն ավելի հաճելի անց կացնելու համար, Ճեմարանի երգեցիկ խումբն էլ, երաժշտության ուսուցիչ Ղևոնդ վարդապետի (հետագայում Ս. Էջմիածնի լուսարարապետ Ղևոնդ եպիսկոպոս) գլխավորությամբ Վեհարան է հրավիրվում։ Ուսանողներից Գեորգ Զորեքյանը և Գեորգ Ահարոնյանը ղեկավարում են երգեցիկ խմբին։ Ղևոնդ վարդապետը դաշնամուրի վրա նվագակցում է նրանց։ Երեկույթը անցնում է շատ բարձր և ոգևորիչ տրամադրությամբ։ Մակար Կաթողիկոսը շատ գոհ է մնում Ճեմարանի ուսանողության առաջադիմությունից։ Ահա թե ի՛նչ է գրում «Արարատ»ը այդ մասին. «Երգեցողությունը այնքան ներդաշնակ և դրավիչ էր, որ երկու դասապետք ուսանողք երրորդ լսարանի, Գեորգ Զորեքյան և Գեորգ Ահարոնյան արժանացան Նորին Օծությունից ստանալու իրրև պարգև մի մի արծաթյա ժամացույց իրանց շքթայով»[1]։

Գեորգյան Ճեմարանը, իր գոյության առաջին իսկ օրերից, հայ կուլտուրայի պատմության մեջ կատարել է պատվավոր դեր. Ճեմարանը ավել է մշակներ, որոնցից հայտնի են պատմաբան Ստ. Մալխասյանը, բանաստեղծ Ավետիք Խահակյանը, գրող Դերենիկ Դեմիրճյանը և այլն։ Նա տվել է նաև իրենց կոչմանը գիտակից հոգևորականների մի սերունդ, որի ներկայացուցիչ-

1. «Արարատ», 1888 թ., էջ 786։

ներն են մեր ներկա Հայրապետը՝ Գեորգ Զ.ը, հանգուցյալ Կարապետ Տեր-Մկրտչյան գիտնական եպիսկոպոսը, մեր անմոռանալի մատենագրագետ-աստվածաբան Գարեգին Հովսեփյանցը (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս) և հայ երգի ու երաժշտության մեծ գիտակ Կոմիտաս վարդապետը։

Ճեմարանը իր բացման օրից՝ 1871 թվականից մինչև 1889 թվականը երիտասարդ Ճեմարանական կուսակրոն հոգևորական չի տվել։ Փաստերը վկայում են այն մասին, որ անդրանիկ կուսակրոնությունը Ճեմարանականներից ընդունել են Վեհափառ Հայրապետը և իր ընկերները։ «Արարատը» մեզ այդ մասին տալիս է հետևյալ տեղեկությունը. «Ամսույս 17-ը և 18-ը հունիս (1889 թ.) նշանավոր օրեր էին։ Այդ օրերը կատարվեցան ի վաղուց ցանկալի ձեռնադրություն Ս. Գայանեի վանքում՝ սրբազան թեկնածությամբ գերաշնորհ Ներսես եպիսկոպոսի։ Ս. Էջմիածնի Ճեմարանը հինգետասանամյա երկունքից ետքը ի վերջո տվեց երախայրիքը Հայ Եկեղեցուն և ազգին։ 17-ին առավոտյան սարկավագության աստիճան ստացան Ճեմարանի տեսուչ մեծահարգ Արշակ Նահապետյան և Ճեմարանի ուսումնավարտ պ. պ. Կարապետ Տեր-Մկրտչյան և Գեորգ Զորեքչյան տու երրորդ լսարանի ուսանող Գարեգին Հովսեփյանցը»[1]։

Վեհափառ Հայրապետը երբ ավարտում է Ճեմարանը, տեսչությունը նկատի առնելով նրա և Կարապետ Տեր-Մկրտչյան սարկավագի փայլուն ընդունակությունները, միջնորդում է Մակար Կաթողիկոսի մոտ, որպեսզի այդ սարկավագները նվիրվեն բարձրագույն ուսում ստանալու համար։ Գործի հաջողությանը համար միջամտում ու բարեխոսում է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, որը այդ ժամանակ Ճեմարանի աստվածաբանության դասախոսն էր։ Թիֆլիսի Տափի թաղի Ս. Գեորգ (Քամոյանց) եկեղեցու երեցփոխ Գեորգ Աճեմյանը ժողովրդի դգացմունքների թարգմանը հանդիսանալով, եկեղեցու եկամտից տարեկան 1.680 ռուբլի հատկացնում է այդ գործի համար. որոշում են երկու որդեգիր պահել արտասահմանում, որպեսզի Ճեմարանը հետագայում ապահովվի բարձր, մասնագիտական կրթություն ստացած հոգևորական դասախոսներով։ Ճեմարանը առաջարկել էր արդեն երկու թեկնածուներ՝ Գեորգ և Կարապետ սարկավագներին։ Մակար կաթողիկոսը ընդառաջելով եղած ազգօգուտ նվիրատվությանը, օրհնում է նվիրատվին մասնավոր կոնդակով։ «Արարատում» այդ մասին կարդում ենք հետևյալը. «Նորին Վեհափառությունը բարեհաճելով ընդունել այդ նպաստը (1.680 ռ.— Ա. Գ.), օրհնելով պ. Աճեմյանին և ժողովրդին իր հայրապետական օրհնությամբ և հրամայեց նոր ձեռնադրած շնորհունակ Կարապետ և Գեորգ սարկավագներին արտասահման ուղարկել, որ և նոքա շարունակում են յուրյանց ուսումը, համաձայն պատվերի Նորին Սրբության, ըստ հրահանգության ուսումնական խորհրդոյ Ճեմարանիս»[2]։

Գեորգ սարկավագը Գերմանիայում բարձրագույն երաժշտական և աստվածաբանական կրթություն է ստանում։ Ապա, ուսումը ավարտելուց հետո, նպատակահարմար է համարում իր ծննդավայր Նոր-Նախիջևանի թեմական դպրոցում, Կոկոյան օրիորդաց տասնամյա դպրոցում երկար տարիներ դասավանդել։

1952 թվականի ամառը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ինձ և ընկերոջս՝ Գուրգեն սարկավագին բախտ վիճակվեց լինել Վեհափառի ծննդավայրում՝ Նոր-Նախիջևանում, Ս. Գրիգոր եկեղեցում սպասավորելու։ Մենք այնտեղ եղանք այն շենքում, որտեղ երկար տարիներ ամենքին սիրելի Հայրապետը դասավանդել է։ Մենք ծանոթացանք Վեհափառի աշակերտների և աշակերտուհիների հետ, որոնք դեռ հիշում են իրենց ուսուցիչ «հայր սարկավագին»։ Նրանք շատ թանկագին և հավետ անմոռանալի հիշատակներ են պահել իրենց սիրելի ուսուցչից՝ Գեորգ սարկավագից։ Երբեք չեմ կարողանում մոռանալ մի դեպք։ Օգոստոսի մի պայծառ, արևոտ կիրակի օր էր. առավոտյան ժամերգությունը վերջանալուց հետո սկսվեց պատարագը։ Եկեղեցին լցված էր հավատացյալների բազմությամբ, պատարագը երգում էր տեղացիներից բաղկացած երգչախումբը։ Երգեցիկ խմբի մեջ մի տիկին սոլոներն էր երգում հրաշալի և անթերի կատարումով։ Տիկինը այնպիսի արվեստով էր երգում, որ ես մինչև անգամ Էջմիածնի երգեցիկ խմբում չէի հանդիպել այդպիսի սոլիստի։ Նա ինձ հիացրել էր։ Պատարագից հետո ընկերոջս՝ Գուրգեն սարկավագի հետ որոշեցինք ծանոթանալ այդ համեստ երգչուհու հետ և իմանալ որտեղ է սովորել այդպիսի երաժշտություն։ Երեցփոխ Շելմանյանին դիմեցինք, որ մեզ ծանոթացնի սոլիստի հետ։ Բայց ահա՛ և նա. գալիս է դեպի մեզ մի պատկառելի տիկին, մոտենում է և առաջին հերթին հարցնում Վեհափառի առողջության մասին։ Ես համարձակություն եմ առնում և հարցնում եմ

1. «Արարատ», 1889 թ., էջ 353։

2. «Արարատ», 1890 թ., էջ 628։

թե արդյոք ինքը չէ՞ պատարագի սոլիստը։ Տիկինը շիկնում է մի պահ հայ կնոջ ծանոթ ամոթխածությամբ և ապա ավելացնում. «Այո, ես էի, ես սովորել եմ Կոկոյան դպրանոցում, որտեղ տաղանդիս է եղել «հայր սարկավագը»։ Զարմացած հարցրի, թե ո՞վ է «հայր սարկավագը»։ Տիկինը ներողամտաբար ժպտաց ու պատասխանեց. «Գիտե՞ք, տղաս, մենք, նախիջևանցիներս սովորել ենք Վեհափառին անվանել «հայր սարկավագ»։ Թեև նա այսօր Ամենայն Հայոց Հայրապետն է, բայց մեզ համար՝ առաջվա «հայր սարկավագը»։ Այնուհետև նա պատմում է մեզ Վեհափառի մասին, նրա դասավանդման մասին, նրա խստապահանջության մասին, նրա բարձր ու ազնվական հոգու մասին... Տիկինը բացեց իր անցյալի հիշատակների ծրարը... Նա հպարտությամբ մեզ ասաց, որ ինքը մասնակցել է 1908 թվականի «հայր սարկավագի ղեկավարած համերգին։ «Արարատում» կարդում ենք այդ համերգի մասին. «Մարտի 8-ին (1908 թ.) Նոր-Նախիջևանում կայացել է հոգևոր համերգ, որին մասնակցել է նաև հայոց Ս. Լուսավորիչ եկեղեցու երգեցիկ խումբը հայր սարկավագ Զորեքյանի ղեկավարությամբ։ Համերգը եղել է խառն՝ լատինական, հայկական, հրեական հոգևոր երգերի։ Հայկական երգերի երկրորդ բաժինը առանձնապես աչքի է ընկել յուր արժանավորությամբ։ Հայր սարկավագ Զորեքյանը արժանացել է «լավ և ճմուտ» երաժշտի կոչմանը»[1]։

Վեհափառը բազմակողմանիորեն զարգացած երաժշտագետ է. նրա հեղինակություններից հայտնի է «երեք խմբերգ», հրատարակված՝ Պետերբուրգում 1908 թվականին հետևյալ վերնագրով. «երեք խմբերգ. մշակեց և ներդաշնակեց Ս. Էջմիածնի միաբան Գեորգ սրկ. Զորեքյան, Պետերբուրգ, գին 70 կ.»։

Այդ հրատարակված գրքույկը գրախոսել է Ռուբեն արքեպան (հանգուցյալ Մանասյան Ռուբեն արքեպիսկոպոսը) «Արարատում», գրելով. «Անծանոթ չէ հայր Գեորգ սարկավագ Զորեքյանը, Ս. Էջմիածնի համբավավոր միաբաններից. իր բարձր երաժշտական կրթությունը ստացել է արտասահմանում և երկար տարիներ երաժշտություն դասավանդել Նոր-Նախիջևանի թեմական հոգևոր դպրոցում. երաժշտական գործունեության գլխավոր կենտրոնը եղել է Նոր-Նախիջևանը, որտեղ և իր բոլոր հեղինակությունները դեռ չտպագրված հրապարակ է հանել խմբերի միջոցով, համերգներում և երեկույթներում։

«Այդ հեղինակություններից է «երեք խմբերգը», որի մեջ պարունակված է 1) «Տէր, կեցո՛ւս— Մեներգ և խմբերգ դաշնամուրի նվագակցությամբ, գրված ֆա մինորով, 2) «Երբ որ բացուին»— Երկերգ I և II սոպրանի համար, դաշնամուրի նվագակցությամբ, գրված ռե մինորով, և 3) «Մայր Արաքսիս»—Երկերգ սոպրանի և ալտի համար, դաշնամուրի նվագակցությամբ, գրված ֆա մինորով։ Բազմաթիվ հեղինակություններից միայն այս երեքն է առ այժմ լույս տեսել որպես նմուշ (ընդգծումը մերն է։— Ա. Գ.)։

«Առաջինը որպես ազգային օրհներգ, իսկ երրորդը որպես Գամառ Քաթիպայի անմահ «Մայր Արաքսիսն» ըմբռնված է ամենայն հարազատությամբ. խոսքն ու դաշնակը լրացնում են միմյանց։— «Երեք խմբերգը» իր վրա կրում է վարպետ գրչի դրոշմն և իր պատվավոր տեղը կգրավի մեր հայ երաժշտական գրականության մեջ։

«Ցանկալի է օր առաջ տեսնել հրատարակված հայր Զորեքյանի մյուս երկերը»[2]։

1913 թվականից մինչև այսօր, որպես հմուտ երաժշտագետ, Վեհափառը գրել է և գրի է առել «բազմաթիվ հեղինակություններ». ցանկալի է, որ Վեհափառը իր սնդուկից հանի դրանք և սեփականությունը դարձնի երաժշտական աշխարհին։ Անկասկած, դրանով կշահի հայ երաժշտական կուլտուրայի պատմությունը։

Անշուշտ սրանով չի սպառվի Վեհափառ Հայրապետի գրական բազմակողմանի վաստակը։

Ցանկալի է, որ մի սիրուն ծաղկաքաղ կազմվի և հրատարակվի Վեհափառի թե՛ երաժշտական և թե՛ գրական վաստակներից։

Եվ դա կլինի մեր ժողովրդի սրտագին ու անկեղծ առհավատյան մեծագործ Հայրապետի պաշտելի անձնավորության և բազմաշնորհ արժանիքների նկատմամբ։

1. «Արարատ», 1908 թ., էջ 432։

2. «Արարատ», 1913 թ., էջ 674։



ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի
Գ. կուրսի ուսանող)

ՎԱՂՎԱ ՕՐԸ

Վսեմ գործ է՝ այսօրն ապրել վաղվա համար,
Վաղվա երգը այսօր գրել.
Վաղվա շենքին դնել թեկուզ համեստ մի քար՝
Այսօրվա մեջ վաղը տեսնել:

Սերմնացանը սերմանում է ճերկած դաշտում
Ոսկեճակիներ ցորենն առատ՝
Հոգու աչքով շրջում վաղվա ոսկե արտում,—
Եվ հավատն է լեռն Արարատ:

Արծաթաճեր պարտիզպանը զողդոջ ձեռքով
Մատղաշ ծառը պատվաստելիս՝
Այդու վաղվա քաղցրությունն է զգում հոգով.
Եվ շշնջում՝ «ե՛կ, սիրելի՛ս»:

Ուրմնադիրը քար դնելիս կիսատ պատին՝
Մի հոյակապ շենք է տեսնում,
Վեր խոյացած հաստատուն շենք, հաղթամարմին.
Խաղաղ երկնի տակ ոլորտում:

Դիտնականը մտածում է... Անդուլ երկնում
Հայրենիքում մեր կենարար,
Վաղվա համար մի նոր բարիք է նա դարբնում՝
Բարու փոխում ատոմը չար:

Եվ իմ երգն էլ վաղվա երգն է խաղաղատենչ,
Որպես մի հասկ վայվա դաշտում,
Պատին մի քար, հույսի մի սերմ ա՛յն սրտի մեջ,
Որ իր խաղաղ կյանքն է պաշտում:

Վսեմ գործ է՝ այսօրն ապրել վաղվա համար.
Վաղվա երգը այսօր գրել.
Վաղվա շենքին դնել թեկուզ համեստ մի քար՝
Այսօրվա մեջ վաղը տեսնել:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ

Համայն Սովետական երկրում սույն թվականի մարտի 14-ին տեղի ունեցան ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունները։

Սովետական Կոնստիտուցիայով (սահմանադրությամբ) ընտրական լայն իրավունքներ են սահմանված ժողովրդի բոլոր խավերի համար։

Սովետական ընտրական օրենքի, ինչպես և ողջ վարչական ձևի ոգուն միանգամայն խորթ է ազգային խտրականությունը։ Պետական կառավարման գործին հավասար իրավունքներով մասնակցում են բոլոր ազգերի ներկայացուցիչները՝ առանց բացառության։ Դա իր պերճախոս ապացույցն է գտել Գերագույն Սովետի կազմավորման սկզբունքի մեջ։ Երկրի ղեկավարման պետական գերագույն մարմինը բաղկացած է երկու հավասարազոր պալատներից՝ Միության Սովետից և Ազգությունների Սովետից։ Եթե Միության Սովետի դեպուտատներն ընտրվում են ըստ բնակչության թվի, ապա Ազգությունների Սովետի ընտրությունները կատարվում են ըստ ազգային ռեսպուբլիկաների։ Ցուրաքանչյուր Միութենական կամ Ավտոնոմ ռեսպուբլիկա և մարզ Ազգությունների Սովետի համար ընտրում է իր ներկայացուցիչներին՝ հավասարաչափ կոնստիտուցիայով սահմանված թվի։ Միութենական 16 ռեսպուբլիկաները, այդ թվում նաև Սովետական Հայաստանը, Ազգությունների Սովետի համար ընտրում են 25-ական դեպուտատներ։

Սովետական ընտրական օրենքը չի հանդուրժում նաև այլ կարգի խտրություններ՝ կապված քաղաքացիների իրավունքների հետ։ Ընտրելու և ընտրվելու համահավասար իրավունքներ ունեն որոշակի տարիքի հասած բոլոր սովետական քաղաքացիները՝ անկախ գույքային կարողությունից, կրոնական ցեղից, սեռից, ցեղային պատկանելությունից, նստակեցությունից և կրոնական համոզմունքներից։

Ընտրական այսպիսի լայն իրավունքները հնարավորություն են տալիս ժողովրդի տարբեր խավերին առաջնագծում մասնակցություն ունենալու պետական կառավարման մարմինների ընտրության և ղեկավարման ասպարեզում։ Այդպիսի գործոն մասնակցության հիանալի ապացույց է հանդիսանում թեկուզ այն փաստը, որ ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրություններին մասնակցել ընտրողների ավելի քան 99 տոկոսը։

Սովետական ժողովուրդը անսահման սիրում է իր բազմազգ Հայրենիքը, իր հզոր պետությունը, որն իրեն փարոս լուսավորում է համայն աշխարհի աշխատավոր մարդկության գալիք երջանիկ կյանքի ուղին։ Այդ սիրուց թելադրված, սովետական ժողովուրդները Գերագույն Սովետի կազմում մեծ խանդավառությամբ ընտրեցին իրենց լավագույն ներկայացուցիչներին, որոնց համար Հայրենիքի և ժողովրդի շահերը բարձր-են ամեն ինչից, որոնք պատրաստ են անձնվիրաբար ծառայել ժողովրդին։

Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողներ Է. Սաֆարյանը և Ա. Գրիգորյանը քվեարկում են Երևանի № 118/23 ընտրական տեղամասում

Զտեսնված խանդավառությամբ անցան ընտրությունները Հայաստանում։ Ինչպես անցյալներում, այս անգամ ևս ընտրությունները վերածվեցին համաժողովրդական տոնի, մի անգամ ևս ցուցաբերելով հայ ժողովրդի անսահման սերն ու նվիրվածությունը Սովետական հարազատ պետության նկատմամբ։ Ընտրություններին մասնակցեցին ավելի քան 860.000 ընտրողներ, կամ ընտրողների ընդհանուր թվի 99,99 տոկոսը։ Միության Սովետի համար ընտրված են 5, և Ազգությունների Սովետի համար՝ 25 դեպուտատներ։

Ովքե՞ր են հայ ժողովրդի ընտրյալները Սովետական Միության Գերագույն Սովետում։

Նրանք պետական և հասարակական գործիչներ են, գիտության և արվեստի, արդյունաբերության և գյուղատնտեսության ընդգավառների աշխատողներ։ Նրանք իրենց ազնիվ ու անձնուրաց աշխատանքով վայելում են ժողովրդի սերն ու համակրանքը, վստահությունը։ Նրանք մեր ժողովրդի լավագույն զավակներն են, որոնց նվիրվածությունը ստուգված է երկարամյա աշխատանքով՝ ի բարօրություն ժողովրդի և հայրենի երկրի։

Ի թիվս ժողովրդի ընտրյալների, Երևանի Ստալինյան ռայոնի աշխատավորները մեծ խանդավառությամբ Սովետական Միության Գերագույն Սովետի դեպուտատ ընտրեցին հայ ժողովրդի արժանավոր զավակ Ա. Միկոյանին։

Ալավերդու շրջանի աշխատավորները Ազգությունների Սովետի դեպուտատ են ընտրել Պղնձաձուլական գործարանի հնագույն բանվոր Ասլան Գալոյանին։ Նույլ 45 տարի է ինչ Ա. Գալոյանը աշխատում է այդ գործարանում։ Նա այժմ 65 տարեկան է, սակայն երիտասարդական եռանդով շարունակում է իր աշխատանքը։ Քիչ չանք չի գործադրել հին վարպետը հարազատ գործարանի բարգավաճման համար, մի գործարան, որն այժմ Սովետական Միության մետաղային արդյունաբերության առաջավոր ձեռնարկություններից մեկն է համարվում։

Ահա՛ մեկ ուրիշը։ Միության Սովետի դեպուտատ է ընտրված Լենինականի Տեքստիլ գործարանի մանածագործ բանվորուհի Աստղիկ Առաքելյանը։ Լենինականի և մերձակա շրջանների աշխատավորները նրան իրենց դեպուտատ ընտրելով, հույս հայտնեցին, որ առաջավոր բանվորուհին ազնվությամբ կկատարի ժողովրդին ծառայելու վեհ պարտականությունը։

Հայ ժողովուրդը սիրում և բարձր է գնահատում գեղանկարչության ականավոր վարպետ Մարտիրոս Սարյանի արվեստը։ Զնայած իր պատկառելի տարիքին, նախիր ստեղծագործական աշխատանքից դուրս դրված է հասարակական ակտիվ գործունեությամբ։ Հայաստանի աշխատավորներն ահա չորրորդ անգամն է, ինչ ժողովրդական նկարիչ Մ. Սարյանին ընտրում են ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ։

Ընտրված դեպուտատների թվումն են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սովետական ականավոր գիտնական Վիկտոր Համբարձումյանը, սովետահայ տաղանդավոր գրող Ստեփան Զորյանը, բժշկական գիտությունների վաստակավոր գործիչ, պրոֆ.-դոկտ. Ռ. Ցոլյանը, Դափանի պղնձահանքերի առաջավոր հանքափոր Հ. Բաղդասարյանը, Վեդու շրջանային գյուղատնտես Ն. Վիրաբյանը և ուրիշներ։

Ընտրելով իր դեպուտատներին, հայ ժողովուրդը պատվիրեց նրանց Սովետական մեծ Միության պետական բարձրագույն մարմնում դրսևորել իր անսահման սերն ու նվիրվածությունը հանդեպ Սովետական հզոր Հայրենիքի, իր եղբայրական ջերմ համակրանքը հանդեպ Սովետական Միության ժողովուրդներին։ Հայաստանի աշխատավորները վստահ են, որ իրենց ընտրյալները, Սովետական Միության մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ միասին ամենայն եռանդով էլ ավելի կամրապնդեն Սովետական մեծ Միության հզորությունը, որպես խաղաղության վստահելի պատվար ամբողջ աշխարհում, իրենց ողջ ուժերն ու կարողությունը կնվիրեն ժողովրդի բարեկեցության հետագա վերելքի մեծ գործին։

Հ. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԸ



անրահայտ փաստ է, որ արտասահմանյան պայմաններում համալսարանական կրթությունը մեծաշնորհն է բարեկեցիկ ընտանիքների զավակներին միայն, իսկ չքավոր ընտանիքների մեծամասնության համար բարձրագույն կրթությունը անհասանելի երազ է մնում մինչև վերջ։ Մինչդեռ մեր հայրենի երկրում կրթության բոլոր աստիճանների օջախները՝ նախադպրոցական հաստատություններից մինչև համալսարան ու բոլոր ինստիտուտները մատչելի են բոլորին անխտիր։ Մեզ մոտ կրթությունը ձրի է ինչպես օդն ու ջուրը։ Դեռ ավելին. տեխնիկումների և կրթական բարձրագույն հաստատությունների ուսանողներն ստանում են պետությունից կրթաթոշակ։ Յուրաքանչյուր ուսանողի համար ամսական սովորական թոշակ է սահմանվում 220 ռուբլի։ Դրանից բացի, կան անվանական թոշակներ (ամսական 380 ռուբլի) և Ստալինյան թոշակներ (ամսական 780 ռուբլի), որոնցից օգտվում են բացառիկ հատկություններ ցուցաբերող և ուսման մեջ բացարձակ գերազանցիկ ուսանողները։

Արտասահմանում բարձրագույն կրթության վառ ցանկությամբ տոչորվող և այն իրականացնելու նյութական հնարավորություններից զուրկ երիտասարդ հայրենադարձներից շատ շատեր Հայրենիք գալուն պես գրոհեցին բարձրագույն կրթության օջախները՝ գտնելով սովորելու անսահմանափակ հնարավորություններ։

Հայրենադարձ այդ ուսանողներից ավելի քան 200-ը շրջանավարտ են արդեն համալսարանից ու զանազան ինստիտուտներից և աշխատանքի են անցել իրենց մասնագիտության համապատասխան հիմնարկություններում։ Նրանցից շատերը աշխատում են որպես դասատու. կան և այնպիսիները, որոնք դասավանդում են համալսարանում և ինստիտուտներում։ Ուրիշ հարյուրավորներ շարունակում են սովորել։ Այսուհետև յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում Համալսարանի և այս կամ այն ինստիտուտի շրջանավարտների թվում կլինեն բազմաթիվ հայրենադարձ երիտասարդներ։

***

Մեզանում համալսարանական կրթությունից այն կողմ գոյություն ունի նաև ասպիրանտական[1] կրթության դրությունը, որից օգտվում են իրենց ընտրած մասնագիտության մեջ բացառիկ ընդունակություն ցուցաբերող և դրանում խորանալու ձգտող համալսարանավարտները, որոնց առջև լայնորեն բացվում են դարբասները դեպի գիտությունների թեկնածուի աստիճանը, դեպի դոկտոր-պրոֆեսորություն, դեպի ակադեմիկոսություն։

Ասպիրանտ ընդունվող շրջանավարտը պետությունից ստանում է ամսական 700 ռուբլու թոշակ։ Նրա համար նշանակվում է մի ղեկավար՝ գիտության տվյալ բնագավառում հեղինակավոր մի գիտնական, որի օգնությամբ և ցուցմունքներով ասպիրանտը խորամուխ է լինում իր ընտրած բնագավառի գիտությունների յուրացմանը և մշակում ու շարադրում է իր ընտրած դիսերտացիոն աշխատանքի[2] թեման։ Ասպիրանտական կրթության և դիսերտացիայի պաշտպանության համար տրվում է ընդհանրապես երեք տար-

1. Ասպիրանտ է կոչվում բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո տվյալ գիտության մեջ պրոֆեսորի անմիջական ղեկավարության տակ խորացող մասնագետը։

2. Դիսերտացիոն աշխատանք— գիտական աստիճան ստանալու համար ներկայացված ավարտական շարադրություն։

վա ժամանակամիջոց։ Դիսերտացիոն աշխատանքի հաջող պաշտպանությունից հետո ասպիրանտին տրվում է գիտությունների թեկնածուի աստիճան։ Տրվում է նաև դոցենտի կոչում՝ եթե ասպիրանտը բարձրագույն կրթական հաստատություններից մեկն ու մեկում դասախոս է, իսկ ավագ գիտական աշխատողի կոչում՝ եթե նա աշխատում է որևէ գիտա-հետազոտական հիմնարկությունում։ Թեկնածուական աստիճան ստացող ասպիրանտը ստանում է ամսական 2.500 ռուբլու աշխատավարձ, որն ստաժի տարիների հետ ավելանում է հետզհետե։

Կա ասպիրանտուրայի մի երկրորդ փոփոխակը — առանց արտադրությունից կտրվելու ասպիրանտական մինիմում քննությունները հաջող հանձնող և դիսերտացիա պատրաստող և պաշտպանող ասպիրանտներն են դրանք։ Այդպիսիներին ասպիրանտական թոշակ չի տրվում, բայց նրանց ապրուստը ապահովվում է որևէ կրթական կամ գիտական հիմնարկում՝ աշխատանքով։ Նրանց տրվում է ղեկավար և ամեն դրություն, որպեսզի կարողանան հմտանալ իրենց մասնագիտության մեջ և դիսերտացիա շարադրել ու պաշտպանել։ Հաջողության դեպքում այդ ոչ թոշակառու ասպիրանտները վայելում են բոլոր այն առավելությունները և իրավունքները, որ ունեն թոշակառու ասպիրանտները։

Հայրենադարձներն էլ, իբրև լիիրավ սովետական քաղաքացի, օգտվում են ասպիրանտական կրթության այս երկու ձևերից։ Հայրենիքում Պետական համալսարանն ու ինստիտուտներն ավարտած հայրենադարձ երիտասարդներից ավելի քան մեկ տասնյակ այս տարի ընտրվեցին թոշակառու ասպիրանտ։ Ես ուզում եմ գրել դրանց մասին։ Բայց նախ համառոտակի ուզում եմ հիշատակել անցած տարիների հայրենադարձ այն ասպիրանտներին (թոշակառուներին թե արտադրությունից չկտրվածներին), որոնք պաշտպանել են դիսերտացիա և կամ պատրաստության ընթացքի մեջ են գտնվում։

***

Պողոս Սվաջյանը՝ հայրենադարձ եգիպտոսից, Հայրենիքում գիտությունների թեկնածուի աստիճան ձեռք բերած հայրենադարձների վետերանն է։ Նա Հայրենիք եկավ 1947 թվականի աշնանը, որպես համալսարանավարտ։ Նա աշխատանքի ընդունվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտում 1.200 ռուբլու աշխատավարձով, հանձնեց ասպիրանտական մինիմումները և շարադրեց դիսերտացիոն աշխատանք՝ «Թիլեարցիոզ տարածող խխունջների բիոլոգիան և անատոմիան» թեմայով։ Դիսերտացիա պաշտպանեց 1948 թվականին և ստացավ բիոլոգիական գիտությունների թեկնածուի աստիճան ու նույն հիմնարկում աշխատանքի կոչվեց որպես ավագ գիտական աշխատող 2.500 ռուբլու ռոճիկով։ Սակայն Սվաջյանը դափնիների վրա քնողներից չէ. տարիների համառ աշխատանքից հետո նա պատրաստել է արդեն դոկտորական դիսերտացիա՝ «Գյուղատնտեսական կենդանիների դիկրոցելիոզը և պայքարը նրա դեմ» թեմայով։ Շուտով նա կպաշտպանի իր դիսերտացիան և ձեռք կբերի բիոլոգիական գիտությունների դոկտորի աստիճան։

Հակոբ Նալբանդյանը՝ ներգաղթած Եգիպտոսից (այժմ հանգուցյալ), որպես կրտսեր գիտաշխատող աշխատում էր Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում։ 1951 թվականին նա դիսերտացիա պաշտպանեց «Հարկային Լաղամականությունը Հայաստանում արաբական տիրապետության ժամանակ» թեմայով և արժանացավ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին։ «Արաբական աղբյուրները հայերի մասին» վերնագրով թարգմանական-մեկնաբանական արժեքավոր աշխատությունը ավարտելու մոտ էր, երբ վաղաժամ մահը խլեց նրան մեզանից։

Ռաֆիկ Առաքելյանը՝ ներգաղթած Իրանից, 1951 թվականին պաշտպանեց դիսերտացիա և ձեռք բերեց գեոլոգիական (երկրաբանական) գիտությունների թեկնածուի աստիճան։

Տիրան Քրմոյանը՝ ներգաղթած Ամերիկայից, 1952 թվականին ներկայացրեց իր դիսերտացիոն աշխատանքը և ստացավ քիմիական գիտությունների թեկնածուի աստիճան։

Գեորգ Նոյանը՝ ներգաղթած Բուլղարիայից, նույն 1952 թվականին ձեռք բերեց ֆիզիկական (բնախոսական) գիտությունների թեկնածուի աստիճան։

Հակոբ Թրյանցը՝ ներգաղթած Կիպրոսից, 1953 թվականին Գիտությունների ակադեմիայում պաշտպանեց «Նավթի համար պայքարը իմպերիալիստական պետությունների միջև Միջին Արևելքում» թեմայով դիսերտացիա և արժանացավ պատմական գիտությունների թեկնածուի աստիճանին։

Արտաշես Գիրացյանը՝ ներգաղթած Ռումինիայից, 1953 թվականին «Հայկական Կիլիկիայի տնտեսական հարաբերությունները Ճենովայի և Վենետիկի հետ 13-րդ և 14-րդ դարերում» թեմայով դիսերտացիա պաշտպանեց և ստացավ պատմական գիտությունների թեկնածուի աստիճան։ Նա դասախոսում է Երևանի Օտար լեզուների ինստիտուտում։ Թեկնածուական աստիճանի հետ նա ստացել է նաև դոցենտի կոչում։

***

Այժմ մի քանի խոսք հայրենադարձ դիտությունների թեկնածուների մասին։

Հովսեփ Թուքուրջյանը՝ ներգաղթած Եգիպտոսից, 1948 թվականին ընդունվեց Երևանի Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան՝ հոգեբանական գիտությունների գծով։ Երեք և կես տարում նա ավարտեց ասպիրանտական ուսումնքը և սկսեց աշխատել իր դիսերտացիայի վրա՝ թեմա ունենալով «Կամքի զաստիարակությունը բեքև ատլետիկայի մեջ»։ Երկու տարուց ի վեր Թուքունջյանը հոգեբանության դասախոս է Մանկավարժական ինստիտուտում։ Նա ավարտել է իր դիսերտացիոն աշխատանքը, որը շուտով կպաշտպանի Մոսկվայում։

Ստեփան Զորաբյանը՝ ներգաղթած Պաղեստինից, 1948 թվականին ընդունվեց Լենինգրադի ասպիրանտուրան՝ արաբերեն լեզվի գծով։ Այնտեղ նա ավարտեց ասպիրանտական ուսման եռամյա շրջանը և սկսեց շարադրել իր դիսերտացիան, բայց հիվանդության պատճառով հարկադրվեց ընդհատել և վերադառնալ Երևան։ Այժմ առողջացել է և շուտով կմեկնի Լենինգրադ՝ իր դիսերտացիան պաշտպանելու (արաբերենով)։

Ժան Բագլավաջյանը՝ ներգաղթած Բուլղարիայից, պատրաստում է դիսերտացիա ֆիզիոլոգիական (բնախոսական) գիտությունների գծով։

Հակոբ Բազարյանը 1949 թվականին Բրազիլիայից անցավ Փարիզ և 1950 թվականին՝ Փարիզից Մոսկվա։ Նույն տարին նա եկավ Երևան և ընդունվեց Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայական սեկտորի ասպիրանտ։ Այժմ, «Բրազիլիական ժողովրդի պայքարը իմպերիալիստական ռեակցիայի դեմ» թեմայով դիսերտացիոն աշխատանք է շարադրում։

Մելինե Մանուշյանը՝ ներգաղթած Ֆրանսիայից, Երևանի Պետական համալսարանի Ֆիլոլոգիական (բանասիրական) ֆակուլտետն ավարտեց 1950 թվականին։ Նա պահվեց համալսարանում որպես թոշակառու ասպիրանտ՝ ժուռնալիստիկայի գծով։ Այժմ հայ ժուռնալիստիկայի պատմության առարկան է դասախոսում համալսարանում և միաժամանակ աշխատում իր դիսերտացիայի վրա, որի թեման է «Հարություն Սվաջյանի «Մեղուն և նրա ժամանակը»։

Հակոբ Փափազյանը՝ ներգաղթած Իրանից, 1950 թվականին ավարտեց Պետական համալսարանի Ֆիլոլոգիական ֆակուլտետը և ընդունվեց Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ասպիրանտուրան։ Այժմ նա դրում է իր դիսերտացիոն աշխատանքը՝ նյութ ունենալով «Ագրարային հարաբերությունները Երևանի սարդարության մեջ 17-րդ դարում»։

Վահե Ավթանտիլյանը՝ ներգաղթած Իրանից, ավարտեց Պետական համալսարանի Ֆիլոլոգիական ֆակուլտետը 1951 թվականին։ Նա ասպիրանտ ընդունվեց Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտում։ Այժմ շարադրում է իր դիսերտացիան՝ «Գոյականների հոլովման պատմական զարգացումը հայոց լեզվում» թեմայով։

Համլետ Եզանյանը՝ ներգաղթած Իրանից, 1952 թվականին ավարտեց Պետական համալսարանի Պատմության ֆակուլտետը և դարձավ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ասպիրանտ։ Այժմ նա աշխատում է Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմության գծով։

Վարազ Թիմուրջյանը՝ ներգաղթած Ֆրանսիայից 1947 թվականին, որպես կրտսեր գիտական աշխատող աշխատանքի մտավ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը։ Նա հաջողությամբ հանձնեց ասպիրանտական մինիմումի քննությունները ու ձեռք բերեց դիսերտացիա պաշտպանելու իրավունք։ Արդեն շարադրել է իր դիսերտացիոն աշխատանքը՝ «Գորգագործությունը Հայաստանում» վերնագրով մի ընդարձակ պատմա-ազգագրական ուսումնասիրություն, որին տրվել է դրական գնահատանք։ Մի քանի շաբաթից նա կպաշտպանի իր դիսերտացիան և կստանա պատմական գիտությունների թեկնածուի աստիճան։ Նրա այդ աշխատանքը բարձր է գնահատվել նաև Մոսկվայի գիտական շրջաններում և ցանկություն է հայտնվել, որ այն հայերենի հետ միաժամանակ հրատարակվի նաև ռուսաց լեզվով։ Բացի իր դիսերտացիոն աշխատանքից, Թիմուրջյանը այս վերջին տարիներում շարադրել է նաև երկու ուրիշ երկասիրություն — «Գամիրքի պատմա-ազգագրական ուսումնասիրությունը» և «Տեքստիլ արդյունաբերության բանվորների կենցաղն ու կուլտուրան»։

Գասպար Գասպարյանը՝ հայրենադարձ Լիբանանից, կրտսեր գիտական աշխատող է Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության բաժանմունքում։ Նա ավարտել է իր դիսերտացիոն աշխատանքը՝ «Գալուստ Կոստանյանի փիլիսոփայական հայացքները» թեմայով։ Սա կլինի գմյուռնահայ փիլիսոփա-հրապարակախոսի մասին առաջին ընդարձակ ուսումնասիրությունը։ Գասպարյանը շուտով կպաշտպանա փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճանին։

Միքայել Բարդիկյանը՝ ներգաղթած Հունաստանից 1946 թվականին, որպես կրտսեր գիտական աշխատող ընդունված է Գիտությունների ակադեմիայի սիստեմում։ Նա շարադրել է դիսերտացիոն աշխատանք «Հայկական նեոմերը Հունաստանում» վերնագրով։

Գարեգին Ամատյանը՝ ներգաղթած Եգիպտոսից 1948 թվականին, որպես բժիշկ աշխատում է Երևանի նևրո-հոգեբուժական հիվանդանոցում։ Նա հանձնել է ասպիրանտական մինիմումները և շարադրում է դիսերտացիա՝ «Ալկոհոլամոլության հողի վրա առաջացող նևրո-հոգեկան խանգարումները Հայաստանի հոգեբուժական հիվանդանոցների և դարմանատների տվյալներով» թեմայով։

***

Արդեն թեկնածուական աստիճան ստացած և առաջիկա ամիսներին այդ աստիճանը ձեռք բերելու պատրաստվող վերոհիշյալ անձնավորությունների մեծագույն տոկոսը արտասահմանում օտար համալսարաններից բարձրագույն կրթության վկայական ստացածներ են։ Թոշակառու ասպիրանտներից միայն չորսն են մեր հայրենի համալսարանից շրջանավարտ և ասպիրանտ ընտրված 1950, 1951 և 1952 թվականներին — երեք տարվա մեջ չորս հոգի միայն։

Մեզ առավել խանդավառել և ներկա հոդվածը շարադրելու է մղել այն փաստը, որ 1953—1954 ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամից ասպիրանտուրա են ընդունվել տասներկու հայրենադարձ երիտասարդներ, բոլորն էլ մեր մայրենի համալսարանի և ինստիտուտների շրջանավարտներ, բոլորն էլ թարմ և խոստումնալից գիտական ուժեր։ Խոսենք յուրաքանչյուրի մասին։

Արուսյակ Մուրադյան (ներգաղթած Հունաստանից).— Արուսյակի հետ ծանոթանում ենք նրանց տանը—Պոռշյան փողոցում, անձնական նորակառույց բնակարանում։ Երեկո է, տանն են հայրը՝ Ներսես Մուրադյանը, մայրը՝ Աղշալույսը, կրտսեր եղբայրը՝ Հովհաննեսը։ Խոսում ենք և զրուցում մտերմորեն։ Մուրադյանների կյանքի տխուր պատմությունը նման է շրի երկու կաթիլի պես թյուրքահայ մեն մի ընտանիքի և հայի պատմությանն։

Կոտորած... Հայրենի գյուղի հրկիզում... Փախուստ և օտար հորիզոններին տակ պանդոխտի մոայլ և անարև կյանք...։ Մուրադյանը կիսամերկ հասավ Հունաստան, հաստատվեց Սեկանիկ, որտեղ նա աշխատում էր Կյուլպենկյան դպրոցում՝ որպես երգեցողության դասատու, շատ համեստ ռոճիկով, և ուր ամուսնացավ իրեն բախտակից և համաքաղաքացի Արշալույսի հետ։ Այդ միությունից ծնվեցին 1927 թվականին՝ Արուսյակը, 1934 թվականին՝ Հովհաննեսը։ Այժմ, Մայր Հայրենիքում, նա իր անցյալի վերքերն է բուժում։

ԱՐՈՒՍՅԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

— Ես, իմ ընտանիքի խիստ համեստ ապրուստը հազիվ հազ ապահովող ուսուցչի ռոճիկով միայն տարրական կրթություն կարող էի տալ զավակներիս,— ասում է Մուրադյանը։— Լրիվ միջնակարգ կամ բարձրագույն ուսում տալու մասին ես չէի էլ կարող մտածել արտասահմանյան պայմաններում։ Ես նանսենյան հպատակ էի, զուրկ քաղաքացիական տարրական փրավունքներից, ի միջի այլոց՝ հունական պետական գիմնազիաներում և համալսարաններում զավակներիս կրթություն տալու իրավունքից։ Բարեբախտաբար ինձ հաջողվեց Արուսյակիս ուղարկել Կիպրոսի Մեկքոնյան կրթական հաստատությունը, որտեղ նա, ամուսնանալով, միջնակարգ կրթություն ստացավ։

Հայրենադարձություն։ Մուրադյան ընտանիքը շտապում է նեղգաղթել Հայրենիք՝ փրկվելով ընդմիշտ պանդխտության իրավազրկություններից և տառապանքներից։

ԱՆԺԵԼ ՍՅՈՒԼԱՀՅԱՆ

Մուրադյանն աշխատանքի է ընդունվում Գեղարվեստական կոմբինատում որպես պահեստապետ՝ ընտանիքին ոմնոր կյանք ապահովելու համար բավարար ռոճիկով։ Դուստրը՝ Արուսյակը ընդունվում է Պետական համալսարան, տղան՝ Հովհաննեսը՝ Զարկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցը։ Արուսյակը գերազանցության դիպլոմով ավարտում է համալսարանը և վերջերս ընդունվում է Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի ասպիրանտ։ Արդեն նա աշխատում է իր դիսերտացիայի վրա՝ «Հունարենի լեքսիկական և մորֆոլոգիական կապը հայոց լեզվի հետ» թեմայով։ Հովհաննեսը այս տարի կավարտի երաժշտական տասնամյա դպրոցը և կմտնի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան։

Ահա՝ երջանիկ և պայծառ հեռանկարներ ունեցող մի ընտանիք։

Անժել Սյուլահյան (ներգաղթած Լիբանանից).— Լիբանանից ներգաղթած ուսումնատենչ քույրեր Ժանետն ու Անժելը մտան Երևանի Պետական համալսարանը—Ժանետը՝ Ֆիլոլոգիական ֆակուլտետի Եվրոպական լեզուների և գրականությունների բաժինը, իսկ Անժելը՝ Լոգիկայի, հոգեբանության և հայոց լեզվի բաժինը։ Երկուսն էլ ավարտեցին գերազանցության դիպլոմով—Ժանետը՝ 1951 թվականին, իսկ Անժելը՝ 1953 թվականին։

Անժելը հայոց լեզվի պատմության գծով ասպիրանտ է այժմ։

Ալբերտ Զալիբյան (ներգաղթած Ֆրանսիայից).— Գեղատեսիլ Նոր-Արտարկիրի գլխավոր փողոցի՝ Կոմիտասի անվան փողոցի վրա, կա ընդարձակ տնամերձ այգիով շրջապատված մի սիրուն նորակառույց տուն։ Այդտեղ է ապրում Ֆրանսիայից ներգաղթած Հովհաննես Զալիբյանի ընտանիքը։ Հովհաննեսն էլ կյանքի դաժան ու տառապագին ուղի է անցած՝ այս գեղեցիկ ու ապահով բնակարանը կառուցելուց և այնտեղ ընտանիքին ամփոփելուց առաջ։ 1922 թվականին նա ընկավ Ֆրանսիա։ Աքսորի և չարչարանքի ուղիներով այնտեղ էր հասնելու երկու տարի հետո նաև բնիկ պոլսցի (Նիկոմիդիացի) մի օրիորդ՝ Ընծան։ Երկու պանդուխտ երիտասարդները ծանոթացան, ամուսնացան և հաստատվեցին Ֆրանսիայի Սեն-Շամոն քաղաքում։ Այնտեղ ծնվեց նրանց անդրանիկ որդին՝ Ալբերտը՝ 1929 թվականին։ Հայկական տարրական դպրոց իսկ չկար այդ փոքրիկ քաղաքում։ Չկար մինչև իսկ ֆրանսիական լրիվ միջնակարգ դպրոց՝ լիցեյ։ Հարկ եղավ Ալբերտին ու-

ԱԼԲԵՐՏ ԶԱԼԻԲՅԱՆ

ՀՐԱՉ ԳԱՓՈՒՋՅԱՆ

դարձել մոտավա Սենթ-Էթիեն քաղաքի լիցեյը, որն Ալբերտը ավարտեց։ Պատանին հայոց լեզու չգիտեր, համարյա ֆրանսիացած էր։ Այդ պարագան մեծ վիշտ էր պատճառում նրա հայրենասեր ծնողներին, որոնք շարունակ երազում էին Սովետական Հայաստան ներգաղթելու մասին։ Այդ երազն իրականացավ 1947 թվականին։ Ընտանիքը բնակվեց Լենինականում, որտեղ պատանի Ալբերտը մտավ Մանկավարժական ինստիտուտի նախապատրաստական կուրսը և մեկ տարում վերստին տիրացավ կորցրած գանձին՝ մայրենի լեզվին։ Ջալիքյանը իր ընտանիքին տեղափոխեց Երևան։ Սեփական տան տեր դարձավ Նոր-Արաբկիրում և Ալբերտին ուղարկեց Պետական համալսարանի Եվրոպական լեզուների և գրականությունների ֆակուլտետը։ Ուշիմ և ջանասեր պատանին կուրսից կուրս անցավ գերազանց գնահատականներով և ավարտեց գերազանցության դիպլոմով։ Ընդունվեց ասպիրանտուրա։ Մասնագիտություն է ընտրել լատիներեն ու ֆրանսերեն լեզուները։ Այժմ Մոսկվայում է, Լոմոնոսովի անվան համալսարանի նորակառույց հոյակապ շենքում ունի առանձին սենյակ հեռախոսով, ռադիո-ընդունիչով և բոլոր հարմարություններով։ Այնտեղ կմնա երեք տարի, կխորանա իր մասնագիտության մեջ և կդառնա լեզվաբանական գիտությունների թեկնածու։

Հովհաննես ու Ընծան մոռացել են իրենց տխուր երեկը և նրա հետ կապված տառապագին ապրումները։ Նրանք վստահ և ուրախ նայում են իրենց զավակների խոստումնալից ապագային։

Հրաչ Գափուջյան (ներգաղթած Եգիպտոսից).— Ալբերտի հետ միաժամանակ Մոսկվա մեկնեց Եգիպտոսից ներգաղթած ասպիրանտ Հրաչ Գափուջյանը, որը նույնպես Լոմոնոսովի անվան համալսարանի շենքում ունի սենյակ՝ Ալբերտի սենյակին կից։

Հրաչը ծնվել է Կահիրեում 1926 թվականին։ 1940 թվականին նա ավարտել է Հելիոպոլսի Նուպարյանի անվան հնգամյա վարժարանը, ապա Ինկոլն ամերիկյան կոլեջը։ 1948 թվականին իր ընտանիքի հետ ներգաղթել է Հայաստան և ընդունվել Պետական համալսարանի Ֆիլոլոգիական ֆակուլտետի Արևելյան լեզուների բաժինը։ Ավարտել է 1953 թվականին գերազանցության դիպլոմով։ Ընդունվել է ասպիրանտուրա պատմա-համեմատական լեզվաբանության գծով. իր մասնագիտությունն է արաբերեն լեզուն։ Պատրաստում է դիսերտացիոն աշխատանք հայտնի արաբագետ պրոֆ. Գրանժի ղեկավարությամբ։

ՎԱՀԵ ԳԱՓՈՒՋՅԱՆ

ՋԱՎԵՆ ԴՈԼԱԲՋՅԱՆ

Վահե Գոփուջյան (ներգաղթած Եգիպտոսից).— Հրաչի կրտսեր եղբայրն է Վահեն, ծնված 1930 թվականին Կահիրեում։ Իր ավագ եղբոր նման նա ավարտել է Հելիոպոլսի Նուպարյանի անվան հայոց դպրոցը։ Դրանից հետո ուսման մեջ կրնկակոխ հետևում է մեծ եղբորը, որի հետ նա նույն տարին ավարտել է Լինկոլն կոլեջը։ Երկու եղբայրներ միևնույն տարին (1948 թ.) մտան Երևանի Պետական համալսարանը և ավարտեցին միաժամանակ։ Վահեն 1953 թվականին դեղագանցության դիպլոմով ավարտեց Տնտեսագիտական ֆակուլտետը և ընդունվեց ասպիրանտ տնտեսագիտության գծով։ Իր ղեկավարն է անվանի հնարիչ-դրող Գ. Բաշինջաղյանի որդին՝ պրոֆ. Զաքար Բաշինջաղյանը։ Որպես դիսերտացիոն աշխատանքի թեմա է ընտրած՝ «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում»։

Ջավեն Դոլաբջյան (ներգաղթած Եգիպտոսից).— Երկրորդ Բաղրամյանում, Զանգվի գեղատեսիլ ձորի և Միծեռնակաբերդ կոչված բլուրի վրա լայն տեսարաններ ունեցող մի շքեղ շենք՝ բազմաթիվ սենյակներով, շրջապատված տնամերձ փարթամ այգով։ Այդ Դոլաբջանյանների սեփական բնակարանն է, ուր Ջավենն ապրում է իր մոր՝ Անիկի և ամուսնացած եղբորը՝ Վահրամի հետ, որը սպորտի դասատու է և հիանալի սպորտսմեն՝ հեռավորություն ցատկելու և 200 ու 400 մետր վազքի Հայաստանի չեմպիոն։

Ջավենը ծնվել է Ալեքսանդրիայում 1928 թվականին։ Դոլաբջյանները բնակություն էին հաստատել Եգիպտոսում, ուր ծնվում են նրանց երեք որդիները և միակ դուստրը։ Ջավենը ավարտում է Կահիրեի Արարատյան կոլեջը և հետո՝ Լինկոլն կոլեջը։ 1947 թվականին հայրենադարձություն Եգիպտոսից ևս։ Ներգաղթում են և Դոլաբջյանները։

Ջավենը ընդունվում է Երևանի Բժշկական ինստիտուտի Բուժական ֆակուլտետը։ Վեց տարի անընդհատ նա գերազանցիկ էր։ Ավարտեց գերազանցության դիպլոմով և արժանացավ գովասանագրերի։ Այժմ նա ասպիրանտ է։ Որպես մասնագիտություն ընտրել է կարդիոլոգիան՝ սրտի հիվանդությունները։ Նրան ղեկավար է նշանակված ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանը։ Զանցնիր շատ ժամանակ և Ջավենը կդառնա բժշկական գիտությունների թեկնածու։

Գեղամ Բաբսեղյան (ներգաղթած Եգիպտոսից).— Գեղամը ծնվել է 1926 թվականին Կահիրեում, արվեստագետի ընտանիքում։

ԳԵՂԱՄ ԲԱԲՍԵՂՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՏՈՒՐՅԱՆ

Գեղամը հաջողությամբ ավարտեց Գալստյանի անվան հայկական դպրոցը և որպես գերազանցիկ շրջանավարտ և լքավոր ընտանիքի որդի, ընդունվեց Եղիայան թոշակառու սանի։ Ուղարկվեց տեղի Ֆրանսիական լիցեյը, որն ավարտեց փայլուն գնահատականներով։ 1947 թվականի աշնանը նա եկավ Հայրենիք և անմիջապես ընդունվեց Բժշկական ինստիտուտի Բուժական ֆակուլտետը, որի վեցամյա շրջանը ավարտեց 1953 թվականին գերազանցության դիպլոմով։ Մի տարի առաջ ամուսնացավ նույն ինստիտուտի դոցենտ Հակոբ Հակոբյանի դուստր և բժշկական ուսանողուհի Ջեմմայի հետ։ Գեղամի անները՝ ընկիկ խարբերդցի, Հայրենիք է ներգաղթել 1923 թվականին, սովորել Հայրենիքում և դարձել մեր աչքի ընկնող մանկավարժ-գիտնականներից մեկը։ Գեղամն այժմ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիոլոգիական ինստիտուտի բիոքիմիայի բաժանմունքի ասպիրանտ է։ Նա նախապատրաստվում է դիսերտացիա պաշտպանելու՝ ղեկավարությամբ ակադեմիկոս Հրաչյա Բունիաթյանի։

Հարություն Տատուրյան (ներգաղթած Եգիպտոսից).— Հարությունի հայրը՝ Պալին, փառավոր մի ուղամարդ է, բարձրահասակ, ջանաթիկունք։ Ծնվել է Կապադովկիայի Թալաս քաղաքում։ 1915 թվականին թյուրքերը նրան տարան բանակ, իսկ նրա հարազատներին՝ սպանդանոց... Բայց նա չէր կարող ծառայել թշնամական երկրի բանակում։ Փախավ ապստամբած արաբների մոտ, որտեղ միացավ ֆրանսիական բանակում հայ կամավորների լեգեոնին։ Զինադադարից հետո ապաստանեցավ Եգիպտոս, ուր որպես բանվոր էր աշխատում ծխախոտի գործարանում։ Զագազիգում ծնվեց նրա առաջին որդին՝ Հարությունը։ Հարությունն ավարտեց Գալստյանի անվան հայոց դպրոցը։ Նա էլ Գեղամի նման գերազանցիկ էր և չքավոր ընտանիքի որդի։ Ընտրվեց Եղիայան թոշակառու սան և ուղարկվեց Կոլեջ պատրիարքական։ Այնտեղից էլ հաջողությամբ շրջանավարտ եղավ և պաշտոնավարում էր հայոց դպրոցում որպես արարերենի դասատու։ Երբ սկսվեց ներգաղթը, Հարությունը իր ծնողների և կրտսեր եղբոր հետ Հայրենիք եկավ Եգիպտոսից առաջին քարավանով։ Ընդունվեց Պետական համալսարանի Բիոլոգիական ֆակուլտետը, որն ավարտեց գերազանցության դիպլոմով։ Նա Գիտությունների ակադեմիայի ասպիրանտ է այժմ՝ բիոլոգիական գիտությունների գծով։

Կյանքումը շատ տառապած ու դառնություններ կրած հսկա Պալին և նրա կինը փրենց զգում են երջանիկ և հպարտ՝ իրենց Հայրենիքով, իրենց որդիներով։

ՋՈՀՐԱԲ ՂԱՍԱԲՅԱՆ

ԳԵՈՐԳ ԴԻՐԱՑՅԱՆ

Զոհրաբ Ղասաբյան *(ներգաղթած Բուլղարիայից).— Զոհրաբն ու նրա ընտանիքը ունեցել են հայ գաղթականի տառապալից անցյալ։ Երկար թափառումներից հետո Զոհրաբի ընտանիքը բնակություն է հաստատում Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում, ուր նրա հայրը ընտանիքին պահում է քարտաշությամբ։ Զոհրաբը սովորում է մի ժամանակ քաղաքի հայոց տարրական դպրոցում, հետո՝ բուլղարական պրո-գիմնազիայում։ Ընդունվում է Պլովդիվի տեխնիկումում և ավարտում նրա դասընթացը։ Համաշխարհային Երկրորդ պատերազմն է։ Ֆաշիստական լուծը ծանրանում է Բուլղարիայի վրա։ Զոհրաբը միանում է հակաֆաշիստական ընդհատակյա կազմակերպությանը։ Ձերբակալվում է 1942 թվականին և ֆաշիստական զինվորական դատարանի կողմից դատապարտվում է 15 տարվա քանտարկության։ Զոհրաբին հաջողվում է փախչել քանտից և միանալ բուլղարական պարտիզանական ջոկատներին։ Երբ 1944 թվականին Կարմիր Բանակը Բուլղարիան ազատում է օտար լծից, Զոհրաբը, ուրիշ բուլղար ընկերների հետ մտնում է Կարմիր Բանակի շարքերը և ուղարկվում է Ուկրաինական 3-րդ ճակատը՝ թշնամուն շպրտելու երկրի սահմաններից դուրս։ Զոհրաբն աշխատի է ընկնում իր քաջությամբ և խիզախությամբ և արժանանում շքանշանների ու մեդալների։*

Բուլղարիայից հայրենադարձների առաջին քարավանի հետ Զոհրաբն ու նրա ընտանիքը վերադառնում են Սովետական Հայաստան։ Նա ընդունվում է Պետական համալսարանի Պատմության ֆակուլտետը։ Աշխի է ընկնում այստեղ էլ՝ ուսման մեջ իր գիրազանցությամբ, իր հասարակական եռուն գործունեությամբ ու բարձր ոգով։ Դառնում է Ստալինյան թոշակառու և գիրազանցության վկայականով ավարտում է 1953 թվականին։ Ընդունվում է ասպիրանտ պատմության և արխեոլոգիայի (հնախոսության) գծով։ Իր գիտավարն է ուրարտագետ պրոֆ. Պիոտրովսկին։ Զոհրաբը գործակցել է Կարմիր բլուրի և Գառնիի պեղումների աշխատանքներին դեռ ուսանողական տարիներից։ Իր դիսերտացիոն աշխատանքն՝ թեման է՝ «Գյուղատնտեսության մթերքների վերամշակումը Ուրարտուում՝ ըստ Կարմիր բլուրի պեղումներին»։

Գեորգ Դիրացյան (ներգաղթած Ռումինիայից).— Որդին է ռումինահայ կրթական և հասարակական գործիչ Արտաշես Դիրացյանի։ Ծնվել է Բուխարեստում 1926 թվականին։ Սովորել է հայոց դպրոցում, որի

ՀՐԱՉ ԲԱՐԴԻԿՅԱՆ

ՀԱԿՈԲ ԹՈՍՈՒՆՅԱՆ

դիրեկտորն էր նրա հայրը։ Ավարտել է Ռումինական լիցեյը։ Ներգաղթել է 1948 թվականին ռումինահայերի երկրորդ քարավանով։ Մտել է Պետական համալսարանի Պատմության ֆակուլտետը և հենց սկզբից աչքի է ընկել որպես ընդունակ և ջանասեր ուսանող։ Դեռ ուսանողության շրջանից մասնակցել է Կարմիր բլուրի պեղումներին՝ պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ, ինչպես նաև Գառնիի պեղումներին՝ դոցենտ Բարգեն Առաքելյանի ղեկավարությամբ։ Ասպիրանտ է այժմ՝ պատմության և արխեոլոգիայի գծով։ Սովորում է Լենինգրադում և դիսերտացիոն աշխատանք է պատրաստում «Հայաստանի նյութական կուլտուրան հելլենիստական շրջանում» թեմայով։

Հրաչ Բարդիկյան (*ներգաղթած Հունաստանից*).— *Պատմական գիտությունների թեկնածուի աստիճան է ստացել Արտաշես Դիրացյանը։ Որդին Գեորգն էլ շուտով կհասնի հետևիցը և կստանա նույն աստիճանը։ Այդպիսիքն են նաև Բարդիկյանները՝ հայր ու որդի, երկուսն էլ թեկնածության թեկնածուներ։ Հրաչը ասպիրանտ է ընտրվել այս տարի՝ համալսարանի Պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո։ Նա էլ, ինչպես Զոհրաբն ու Գեորգը, մասնագիտություն է ընտրել պատմությունն ու արխեոլոգիան և ակադեմիկոս Հ. Օրբելու ղեկավարությամբ պատրաստում է դիսերտացիոն աշխատանք Լենինգրադում։ Թեման է «Հայ-բյուզանդական հարաբերությունները»։ Պրպտող և հարաշխատ միտք է Հրաչը։ Առանձին ուշադրության էր արժանացել արդեն նրա դիպլոմային աշխատանքը՝ «Պալիլիկյան շարժումը Հայաստանում» թեմայով։*

Հակոբ Թոսունյան (*ներգաղթած Լիբանանից*).— *Հակոբը ծնվել է 1927 թվականին Բեյրութում, ուր վերջապես հաստատվել էր ընտանիքը։ Հակոբն ավարտեց հայ քաղաքականների միջնակարգ դպրոցը և ընտանիքի հետ 1946 թվականին ներգաղթեց Հայրենիք։ Մտավ Պետական համալսարանի Քիմիագիտական ֆակուլտետը, որն ավարտեց դերազանցության դիպլոմով՝ աչքի ընկնելով միշտ որպես ընդունակ ու ժրաջան ուսանող։ Ասպիրանտ է նա քիմիական գիտությունների գծով։*

Հայրենադարձներս հպարտ ենք մեր ասպիրանտներով, որոնք կդառնան մեր Հայրենիքի համար պիտանի գիտնականներ։ Դրանով դույզն չափով հատուցած կլինենք մեր անսահման երախտիքը հոգատար ու սիրելի Հայրենիքին։

Հոդվածն ավարտելուց հետո տեղեկացանք, թե կան այս տարի հայրենադարձ նաև երեք ասպիրանտներ— Գեորգ Խալոիյան՝ *ներգաղթած Սիրիայից՝ փիլիսոփայական գիտությունների գծով, Հակոբ Գրգայերյան՝ ներգաղթած Եգիպտոսից՝ աշխարհագրական գիտությունների գծով, և Նորայր Բեյլերյան՝ նույնպես ներգաղթած Եգիպտոսից՝ քիմիական գիտությունների գծով։ Այսպիսով, մեր հայրենադարձ ասպիրանտների թիվը կհասնի տասնհինգի։*



ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 1954 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան 1954 թվականի համար նախատեսել է գիտա-հետազոտական աշխատանքների ընդարձակ ծրագիր։

Խոշոր տեղ է հատկացված գյուղատնտեսական գիտությունների հետագա զարգացման հարցերին։ Շարունակվելու են հացահատիկային և բանջարանոցային կուլտուրաների, ինչպես և այգեգործության բերքատվության հետ կապված սելեկցիոն (սերմի բնտրական) աշխատանքները։ Գյուղատնտեսության մեջ լայնորեն կիրառվելու են ակադեմիայի գիտա-հետազոտական ինստիտուտներում ներկարամյա փորձերի շնորհիվ ստացված ցորենների, տոմատի, կարտոֆիլի, պտուղների նոր, տեղական հողա-կլիմայական պայմաններին հարմարեցված, ավելի բերքատու տեսակներ։ Առանձին ուշադրություն է դարձվելու լեռնային պտղաբուծության զարգացմանը։

Ակադեմիայի մյուս ինստիտուտները ավելի լայն ծավալով կշարունակեն իրենց աշխատանքները կապված Հայաստանի կենդանական և բուսական աշխարհի, բնական հարստությունների, ազատվելու հանածոների ուսումնասիրման հետ։

Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքը մշակելու է հայ ժողովրդի անցյալ և նորագույն պատմության, ինչպես նաև անցյալի ու ներկա կուլտուրայի, արվեստի, լեզվի և գրականության հետ կապված մի շարք կարևոր հարցեր։

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ.— Սույն թվականի փետրվարին Երևանում կայացավ Հայաստանի Կուրորտոլոգիայի և ֆիզիո-թերապիայի գիտա-հետազոտական ինստիտուտի սեսիան, որին մասնակցում էին նաև Կովկասյան հանքային ջրերի բալնեոլոգիական (լոգարանության) ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ։ Սեսիայում քննության առնվեցին մի շարք զեկուցումներ՝ նվիրված Հայաստանի հանքային ջրերի ուսումնասիրության, դրանց արդյունավետ օգտագործման, կուրորտային շինարարության հարցերին և բուժման եղանակներին։

Առանձին հետաքրքրություն ներկայացրեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Լ. Հովհաննիսյանի զեկուցումը՝ ռեսպուբլիկայի հանքային ջրերի հարստության և կուրորտային գործի զարգացման հեռանկարների մասին։ Ներկայումս Հայաստանում հայտնաբերված են ավելի քան 200 հանքային աղբյուրներ՝ ջրերի ամենատարբեր հատկություններով։ Զարգացման մեծ հեռանկարներ ունեն Արզնի և Ջերմուկ կուրորտները։ Կառավարությունը որոշում է ընդունել նոր կուրորտներ կառուցել Հանքավանում (Ախտալայի շրջան) և Արարատում (Վեդու շրջան)։ Ուսումնասիրվում են Դիլիջանի և Նոր Բայազետի շրջաններում գտնվող հանքային ջրերը։

ՔԱՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ.— Հայաստանը հարուստ է բնական քարամսիսի շինարարական նյութերով, հատկապես քարերով։ Այդ նյութերի, ինչպես նաև շինարարական գործի կատարելագործման հարցերի ուսումնասիրությամբ զբաղվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Շինանյութերի և կառուցումների գիտա-հետազոտական ինստիտուտը։

Կառուցումների համար օգտագործվող քարերի մշակումը (տաշումը, հղկումը, քանդակումը) չափազանց կարևոր նշանակություն ունի շինարարության արագացման տեսակետից։ Մինչև այժմ այդ աշխատանքը հիմնականում կատարվում է ձեռքով, քարտաշ բանվորների միջոցով։ Թեպետ մի շարք խոշոր նորակառույցներում այդ աշխատանքի համար գործի են դրված քար տաշող մեքենաներ (որոնք, ի դեպ, արտադրվում են Լենինականում), բայց և այնպես դրանք չեն կարող բավարարել շինարարական գործի օրավուր աճող պահանջներին։

Այդ հարցի լուծման նպատակով վերոհիշյալ ինստիտուտը կազմել է քարերի վերամշակման գործարանի նախագիծ, որն ընդհանուր հավանության է արժանացել։ Նման գործարանի կառուցումը հնարավորություն կտա քարի մշակումը կատարելագործել և նոր կառուցվող շենքերն ապահովել հարկ եղած չափի ու քանակի պատրաստի քարերով։

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ.— Հայաստանի Պետական հրատարակչությունը այժմյանից ձեռնամուխ է եղել 1954—1955 ուսումնական տարվա համար անհրաժեշտ դպրոցական դասագրքերի հրատարակման գործին։ Արդեն լույս են տեսել ավելի քան 10 անուն դասագրքեր։ Մինչև սեպտեմբերի 1-ը հրատարակվելու է մոտ 90 անուն դասագիրք հայերեն և ռուսերեն լեզուներով՝ ավելի քան 2.000.000 օրինակ ընդհանուր տպաքանակով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Ամեն տարի պետությունը խոշոր միջոցներ է հատկացնում ռեսպուբլիկայի քաղաքների և շրջանային կենտրոնների բարեկարգման, բնակարանային և կենցաղային շինարարության կարիքների համար։ Այս տարի այդ նպատակների համար հատկացված դրամական միջոցները կրկնակի չափով գերազանցում են անցյալ տարվա հատկացումները։ Միայն Լենինականում, քաղաքային սովետի գծով կատարվելիք շինարարության համար հատկացված է շուրջ 15.000.000 ռուբլի։

Այլավերդում, Կիրովականում, Ղափանում, Ստեփանավանում, Սևանում, Հոկտեմբերյանում, Գորիսում կառուցվելու են բնակելի նոր, խոշոր շենքեր, լվացքատներ, բաղնիքներ, խանութներ, ճաշարաններ, բարեկարգվելու են շատ փողոցներ, հիմնվելու են նոր պուրակներ։ Նոր Բայազետում և Թալինում ավարտվելու են նոր հյուրանոցների, իսկ Իջևանում՝ ջրմուղի կառուցումը։

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՆԳԱՐԱՆԸ.— Հայաստանի ամենահին ուսումնարանը Երևանի Բնագիտական Բանգարանն է։ Այն ընդամենը մեկ տարի է ինչ գոյություն ունի։ Այստեղ կան մի քանի հարյուր նմուշներ և նկարներ, որոնց վերաբերում են տիեզերքի կառուցվածքին, արեգակնային համակարգությանը, մեր մոլորակի ծագմանը։ Բանգարանն ունի աստղադիտական խոշոր գործիք։ Մեծ քանակությամբ հետաքրքրական նյութեր կան կյանքի և մարդու ծագման, ինչպես նաև Սովետական Միության բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ։ Հազվագյուտ նմուշների թվումն են նախապատմական շրջանի հղջերուի մի գանգ իր վիթխարի եղջյուրներով և հնագույն շրջանի կենդանիների կմախքների մնացորդներ, որոնք հայտնաբերված են Սևանա լճի ջրերից ազատված հողաշերտերում։

Բանգարանում ամեն օր կարելի է հանդիպել մեծ թվով այցելուների, որոնց համար կարդացվում են հանրամատչելի դասախոսություններ բնագիտական հարցերի շուրջը։

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐ.— Սովետական Հայաստանի անտառային հարստությունների պահպանումը և զարգացումը պետության կարևորագույն խնդիրներից մեկն է։ Տարեցտարի անտառների տարածությունն ընդարձակվում է։ Անտառային տնտեսության մինիստրության տեղական մարմինները պատրաստվում են այս տարվա ծառատնկումներին։ Գարնան և աշնան ամիսներին Հայաստանի տարբեր շրջաններում, գլխավորապես Կիրովականի, Ղափանի, Իջևանի, Շամշադինի և Ստեփանավանի շրջանների անտառազուրկ մասերում տնկվելու են մոտ 20.000.000 հատ զանազան տեսակի մատաղ ծառեր։

Մեծ չափով ընդարձակվելու է Երևանի շրջակայքում ստեղծված արհեստական անտառների տարածությունը, որն այս տարի հասցվելու է մոտ 1.600 հեկտարի։

ՌՈՒՍ ԱԿԱՆԱՎՈՐ ԳՐՈՂ Ա. ԳՐԻԲՈԵԴՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԵԾԱՐՈՒՄԸ.— Սույն փետրվարի կեսերին Երևանի դրական և թատերական հասարակայնությունը նշեց անցյալ դարի առաջին կեսի ռուս ականավոր գրող Ա. Գրիբոեդովի մահվան 125-ամյակը։ Արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված գրողի հիշատակին։ Երեկոյին ներկա էին գրողներ, արվեստագետներ, հասարակական գործիչներ։ Ա. Գրիբոեդովի կյանքի և գրական գործունեության մասին դասախոսություն կարդաց պրոֆ. Վ. Վարդանյանը։ Դասախոսը նշեց, որ ռուս ականավոր գրողի անունը սերտորեն կապված է անցյալ դարի հայ թատերական արվեստի զարգացման պատմության հետ։ Ա. Գրիբոեդովի անմահ երկը՝ «Խելքից պատուհասը» կատակերգությունը առաջին անգամ բեմադրվել է Երևանում և այնուհետև հաստատուն կերպով մտել է հայ բեմ՝ վայելելով մինչև օրս հանդիսականների լայն խավերի ընդհանուր համակրանքը։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Փետրվարի կեսերին Երևան այցելեց խաղաղության կողմնակիցների ֆիննական պատվիրակությունը, որը Սովետական Միությունն էր հրավիրված խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի կողմից։ Պատվիրակության կազմի մեջ կային Ֆինլանդիայի ականավոր հասարակական գործիչներ, գրողներ, նկարիչներ, հոգևորականներ։ Պատվիրակությունը գլխավորում էր հովիվ Արմաս Տոյանը։ Երևանի օդանավակայանում հյուրերին դիմավորեցին Երևանի հասարակայնության ներկայացուցիչները։

Պատվիրակությունը Երևանում մնաց մի քանի օր, որի ընթացքում հյուրերը մանրամասն ծանոթացան արդյունաբերական ձեռնարկությունների, կուլտուրայավորական հիմնարկների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և դպրոցների գործունեությանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ.— Երևանի բժշկական հասարակայնությունը նշեց Հայաստանի հնագույն բուժական հաստատության՝ Երևանի զինվորական հիվանդանոցի (գոսպիտալի) գոյության 125-ամյակը։ Հիվանդանոցը հիմնվել է 1828 թվականին, Երևանը ռուսական զորքերի կողմից գրավվելուց անմիջապես հետո։ Նախասովետական շրջանում հիվանդանոցը միշտ էլ բուժական մեծ օգնություն է ցույց տվել քաղաքի ազգաբնակչությանը՝ հատկապես տարափոխիկ հիվանդությունների դեպքում։ Վերջին 25—30 տարում հիվանդանոցում աճել են և կատարելագործվել մի շարք ականավոր բժիշկներ, որոնց բժշկական գիտությունը հարստացրել են բուժման եղանակներին վերաբերող այլի ընկնող հայտնագործություններով։

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՕՐԵԿՆ.— Փետրվարի սկզբներին Երևանի ճարտարապետների տանը տեղի ունեցավ հետաքրքիր երեկույթ, որտեղ հանդիպում ունեցան Երևանի, Բաքվի, Թբիլիսիի, Օդեսայի և Փիենյանի (Կորեա) բարձրագույն ուսումնական հաստատությունների մի խումբ ուսանողներ։ Հյուր ուսանողները Երևան էին ժամանել ծանոթանալու համար Հայաստանի մայրաքաղաքի հետ։ Հանդիպումն անցավ բարեկամական ջերմ մթնոլորտում։ Կորեացի ուսանողները պատմեցին իրենց ժողովրդի աշխատանքի և ազատության ու անկախության համար նրա մղած հերոսական պայքարի մասին։

Վերջում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողների ուժերով տրվեց համերգ։ Կորեացի ուսանողները կատարեցին կորեական ժողովրդական մի քանի երգեր։

ՋԵՐՄՈՒԿ ԿՈՒՐՈՐՏՈՒՄ.— Վայոց անդնդախոր ձորի մի գեղատեսիլ անկյունում վաղուց ի վեր հայտնի էին հանքային տաք աղբյուրներն իրենց բուժիչ հատկություններով։ Երկրի զանազան ծայրերից հիվանդները գալիս էին այստեղ ուտելիքի պաշարով, խփում վրաններ, շաբաթներով ապրում այդպես, որ կարողանան օգտվել կենարար աղբյուրներից։

Այժմ անճանաչելիորեն փոխվել է այդ անկյունը։ Զորում գոյացել է մի ամբողջ ավան, որը կոչվում է Ջերմուկ։ Հետպատերազմյան տարիներին այստեղ կառուցվել են մի շարք բարեկեցիկ առողջարաններ (սանատորիաներ), հասարակական, կուլտուրական ու կենցաղային սպասարկման շենքեր։ Ամեն տարի մեծ թվով հիվանդներ բուժման են գալիս Ջերմուկ։ Նրանք գալիս են ոչ միայն Հայաստանի, այլև Սովետական Միության ամենատարբեր վայրերից։ Գալիս են գլխավորապես հոդերից և ստամոքսից տառապող հիվանդներ։

Ջերմուկը, շնորհիվ իր բուժիչ բրերի, մեծ հեռանկարներ ունի։ Կառավարությունը խոշոր միջոցներ է հատկացրել կուրորտի հետագա բարեկարգման ու զարգացման համար։ Ներկայումս կառուցվում են նոր խոշոր բուժարան-հիվանդանոցներ՝ ավելի քան 800 հիվանդների համար։ Ջերմուկում կատարվող ամեն տեսակի կառուցումների և բարեկարգման աշխատանքների վրա միայն ընթացիկ տարում ծախսվելու է մոտ 10.000.000 ռուբլի։

ՆՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՎՐԱ.— Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Վեդու, Թալինի, Այնավերդու, Կոտայքի և Հայաստանի մյուս շրջանների երբեմնի ամայի տարածություններում այժմ կարելի է հանդիպել գեղեցիկ, բարեկարգ ավաններ, որոնցից շատերը 10—15 տարի առաջ բոլորովին գոյություն չունեին։ Դրանք սովետական պետական խոշոր սեփականություններ են (սովխոզներ), որոնք զբաղվում են այգեգործությամբ, անասնաբուծությամբ, պտղաբուծությամբ։ Ներկայումս այդ տնտեսությունների թիվը հասնում է 20-ի։ Դրանցից յուրաքանչյուրն ունի իր ավանը՝ բնակելի, հասարակական և կրթական բարեկարգ շենքերով։

Անցյալ 1953 թվականին այդ ավաններում նոր բնակարանների, կուլտուրական հաստատությունների և առողջապահական հիմնարկների կառուցման վրա ծախսվել է մի քանի տասնյակ միլիոն ռուբլի։ Այս տարի այդ գումարը խոշոր չափով կավելացվի։ Պետական վարկերի միջոցով այդ տնտեսությունների աշխատավորները կկառուցեն մի քանի հարյուր բնակելի տուն։ Բացի այդ, պետությունը նախատեսել է այդ ավաններում բնակարանային խոշոր շինարարություն։

ԿԻՏՐՈՆԱԹԹՎԻ ԳՈՐԾԱՐԱՆ.— Սպիտակ ավանում (Համամլու), շաքարի գործարանից ոչ հեռու, կառուցվում է Հայաստանի անդրդյունաբերության մինիստրության կիտրոնաթթվի գործարանը։ Կիտրոնաթթուն անհրաժեշտ համեմունք է հրուշակեղենի արտադրության համար։ Այն պատրաստվելու է շաքարի ճակնդեղից։

Գործարանի շինարարության աշխատանքները մոտենում են իրենց ավարտին։ Ժամանակ բոլոր շենքերն արդեն կառուցված են։ Ներկայումս արագ թափով կառուցվում է գործարանի հիմնական արտադրական շենքը և կատարվում է մեքենաների ու սարքավորումների տեղադրումը։ Սովետական Միության այլ վայրերում գտնվող նման գործարաններում սովորում են մի խումբ հայ մասնագետներ, որոնք հետագայում պետք է աշխատեն այս նորակառույց գործարանում։ Կիտրոնաթթվի գործարանը կսկսի աշխատել ընթացիկ 1954 թվականին։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈՂԱՏՅԱՆ

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ*

Մենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառի հրավերին վրայ, օգոստոս 26-ին (1953), ուղևորվեցանք Ս. Էջմիածին՝ Հոգևոր Ճեմարանի մեջ որոշ դասընթացք մը ավանդելու Հայաստանյայց Եկեղեցվո աստվածաբանության մասին։ Վերջին քանի մը տարիներու ընթացքին՝ Նորին Վեհափառությունը երկիցս հրավիրած էր մեզ նույն նպատակին համար, սակայն մեր ծանր զբաղումներուն պատճառով երջանկահիշատակ Տ. Գարեգին Կաթողիկոս հետաձգած էր մեր երթը։ Աթոռոց Տեղապահ բարձրապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս փ պատասխան Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառի հեռագիրով կատարած հրավերին՝ հարմար գտավ ու թույլատրեց, որ մեկնինք Ս. Էջմիածին՝ աստվածաբանության դասեր ավանդելու համար։

Մեր դեպի Ս. Էջմիածին ուղևորության ընթացքին, նախ հանդիպեցանք Փարիզ, ապա Լոնդոն և Մանչեսթր՝ Դպրեվանքի և Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբերյալ շարք մը խնդիրներու կարգադրությանց համար։ Մեզի անհրաժեշտ եղող անձնավորությանց հետ տեսակցելե ետք սեպտեմբերի 8-ին, երեքշաբթի օր, օդի ճամբարով մեկնեցանք Բրյուսել, ուր տեղվույն թագավորանության և վարչության խնդրանքին վրա սուրբ պատարագ մատուցինք Խաչվերսցի տոնին և քարոզեցինք։ Բելգիայի հայեր ի պատիվ մեզի թեյասեղան մը ավին. քաղաքերված իրենց շեմ զգացումներեն հանդեպ Կիլիկիո Դրբեվանքին, կազմեցինք Աթոռոց սղնող հանձնախումբ մը։

Բրյուսելեն Պրազայի և Վարշավայի ոգով մեկնեցանք Մոսկվա, ուր հասանք սեպտեմբերի 15-ին, երեքշաբթի օր։ Օդանավակայան դիմավորության եկած էին հանուն Վեհափառ Հայրապետի և Ս. Էջմիածնի միաբանության՝ արժանապատիվ Տ. Խաչատուր քահանա Տեր-Հայրապետյան, հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողության՝ բարեշնորհ Անդրանիկ սարկավագ Գալստյանը, և համայն Խորհրդային Միության Կրոնական գործերու փոխ նախագահը։

Սեպտեմբերի 19-ին, շաբաթ օր, առավոտյան ժամը 1.30-ին օդի ճամբարով մեկնեցանք Երևան։ Մեր ճանապարհը տևեց 14 ժամ, բայց շատ հաճելի անցավ, որովհետև օդանավորդները հայ էին, քաջ, սիրուն, խոհեմ և հայրենասեր տղաք։ Շատ սիրեցի դիրենք և այնքան մտերմացա իրենց հետ, որ երբ Կովկասյան լեռներու վրայեն կթռանինք, դիս ներա՝ մեքենանկարուն քով տարին և ցույց տվին, թե ի՛նչպես վարեին օդանավը։ Կուզեի ապահով Ս. Էջմիածին հասնիլ և այդ պատճառով օդանավ քշել չփորձեցի։ Երևան օդանավակայան դիմավորության եկած էին հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետ՝ հանուն Վեհափառ Հայրապետի և միաբանության, բարեշնորհ Սարգիս սարկա-

* Արտատպվում է որոշ կրճատումներով.— ԽՄԲ.:

վագ՝ հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողներուն, տեսուչ պարոն Մ. Մինասյան՝ հանուն Ճեմարանի ուսուցիչներուն, Հայաստանի Կրոնական գործերու նախագահը՝ հանուն Հայաստանի Կառավարության և պրոֆ. Աշոտ Աբրահամյան։ Հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետի քարի գալուստի խոսքերին ետք հուզումով համբուրեցի Մայր Հայրենիքի հողը՝ ուրբ տարվան իմ կարոտս առնելով։ Երևանեն մեկնեցանք դեպի Ս. Էջմիածին։ Մայր Տաճարի դռան առջև, Ս. Էջմիածնի միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողները, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի դլխավորությամբ, դիմավորեցին մեզ։ Սրտագին կատարեցինք մեր ուխտը Իջման սեղանի առաջ ծնրադիր, և Արարատի նահատակներուն 34-րդ (1919 սեպտեմբերի 19) տարելիցին առթիվ սրտեռանդն աղոթեցինք անոնց հոգիներուն խաղաղության համար։ Գերաշնորհ Տ. Վահան սրբազան սրտագին թարի գալուստի խոսք ուղղեց մեզի. մենք ևս պատասխանեցինք։ Ապա տեղի ունեցավ երեկոյան ժամերգությունը։ Որքա՜ն ուրախ էի, որ Վեհափառ Հայրապետի հրավերով առթիվ մասնակցիլ Ս. Էջմիածին՝ հայության «Սրբություն Սրբոցն» դարու, Տաճարին մեջ աղոթելու ու այդ դահուն ունկնդրելու վոյս զուարթը, մանավանդ Տ. Նիկոլի կողմե երգված։

Հաջորդ օր, կիրակի, սեպտեմբերի 20-ին, սուրբ պատարագ մատուցեցի հազարավոր հավատացյալներու ներկայության և քարոզեցի բնական ունկնարով՝ «Միշտ անշարժ պահեա զԱքոռ Հայկազեան»։ Մոտ մեկ ժամ ծնրադիր Ս. Հաղորդություն բաշխեցի ժողովուրդին։ Նույն օրը, Վեհարանի մեջ, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի նախագահությամբ, ի պատիվ մեզի ճաշասեղան տրվեցավ. ներկա էին միաբանները, ուսուցիչներ, Գերագույն Հոգևոր խորհուրդի անդամներ, Կրոնական գործերու նախագահ պարոն Հրաչյա Գրիգորյան, պրոֆ. Աշոտ Աբրահամյան և պրոֆ. Առաքել Առաքելյան։ Բաժակ բարձրացվեցավ Հայաստանյայց Եկեղեցվո, Ս. Էջմիածնի, հայ ժողովուրդի և Հայոց աշխարհի մխիթարության, անսասանության և հավերժության համար։ Ճաշեն ետք տեղանակիցներուն հետ գացինք Ս. Գայանեի տաճարը՝ հայց և հուխտ մեր հոգևոր հոր՝ հավերժաբնակ Շահե սրբազանի հողակույտին։ Ապա այցելեցինք նաև Ս. Հռիփսիմե, Շողակաթ և Զվարթնոց։

Հայաստանի Կրոնական գործերու խորհուրդը Մայր Հայրենիքի մեջ մեր ընելիք այցելությունները դյուրացնելու և մեր ժամանակը լավագույնս օգտագործելու նպատակով մեզի տրամադրեց մասնավոր ինքնաշարժ մը, իր շարժավարով։ Սրտագին դոհ մնացինք այս կարգադրությունեն։

21 սեպտեմբերի, երկուշաբթի.— Կեսօրե առաջ այցելեցի Նոր-Կիլիկիա՝ հայրենակիցներուս, որոնցմե մաս մը նկարեցի։ Ժամը 11-ին գերաշնորհ Տ. Վահան սրբազանի հետ Քանաքեռի էլեկտրակայանը գացինք պարտեզու։ Մեզի ընկերացան պարոնայք Հրաչյա Գրիգորյան և Ստեփան Կամսարական, հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետ և քարեշնորհ Սարգիս սարկավագ։ Անկե անցանք Արզնիի բուժարանը, հաստատված՝ Հրազդան գետի ափին, դալարագեղ վայրի մը մեջ։ Երկու հաստատություններն ալ ազգին պատիվ կբերեն։ Հյուրասիրվեցանք Արզնիի մեջ, հայկական ճոխ սեղանի մը շուրջ։

22 սեպտեմբերի, երեքշաբթի.— Երեք ինքնաշարժներով, պրոֆ. Կարո Ղաֆադարյանի առաջնորդությամբ Կարմիր բլուր գացինք պտտելու։ Հոս ուրարտական հին ամրոցի մը մնացորդները երևան եկած են։ Ամրոցի տաճարը նվիրված է Թեյշեբայի շաստուծուն և կառուցված է 800-ին (Ն. Ք.)։ Հակայական բերդ մըն է մոտ հարյուր սենյակներով։ Հետո գացինք Դվին՝ հայոց երբեմնի մայրաքաղաքը։ Հոս երևան հանված են Մայր եկեղեցին և Կաթողիկոսական պալատը։ Կաթողիկեին նեռքև ուրարտական բնակարանների մնացորդներ երևան եկած են։

Կեսօրե ետք Դվինի գրոնտեսությունները այցելեցինք։ Ամեն ոք աշխատանքի լծված է։ Աշխատողին համար շարունակ գործ կա Հայաստանի մեջ։ Կհյուրասիրվինք Հայոց աշխարհի խաղողով և պտուղներով, ապա ճոխ սեղան՝ Արարատի ճիշտ դիմացը։ Երեկոյին Արտաշատ ևս այցելելեն ետք վերադարձանք Երևան։

23 սեպտեմբերի, չորեքշաբթի.— Կարո Ղաֆադարյանի և Աշոտ Աբրահամյանի հետ այցի դացի Պտղավանք։ Գմբեթավոր տաճարներու ամենեն հին ձևը հոս կգտնվի։ Գմբեթը սյունի վրա չէ, այլ՝ չորս մեծ ոլմակամարներու։ Պտղավանքեն ետք գացինք Բջնի, կառուցված՝ Հրազդան գետի ափին։ Տաճարը՝ Ս. Աստվածածին՝ հիմնված է ԺԱ. դարուն Գրիգոր Մագիստրոսի օրով։ Հոս հյուրասիրվեցանք տեղվույն հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Աբրահամ ավագ քահանա Տեր-Պաղտասարյանի կողմե, որ կորովի, ալեփառ, պատկառազդու և ջերմորեն հյուրասեր եկեղեցական մըն է։ Բջնիեն անցանք Սևանա կղզին, որ երեկոյան մթնշաղին՝ անասելիորեն առինքնող հրապույր մը ուներ։

24 սեպտեմբերի, հինգշաբթի.— Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս օգնականներեն վերադարձած ըլլալով այսօր պատիվը ըրաւ գիս ընդունելու՝ Վեհարանի մեջ։ Նորին Վեհափառութիւնը հայրական գուրգուրանքով համբուրեց իմ ճակատս, իսկ ես ծնրադիր՝ Անոր Աջը։ Հոգեկան անասելի հրճվանքի մեջ էի, որովհետև դարձյալ առիթ կունենայի մեր Լուսավորիչ Հոր արժանավոր հաջորդին Ս. Աջը համբուրելու և ծնրադիր Անոր օրհնությունը ստանալու։ Վեհը հակառակ Իր հառաջացած տարիքին՝ առույգ է, քաջառողջ և կգործե անխոնջ։

25 սեպտեմբերի, ուրբաթ.— Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ այսօր ուխտաստվածաբանության դասավանդության Հոգևոր Ճեմարանի մեջ։ Առաջին դասախոսությանս նյութն էր. «Աստվածաբանության նշանակությունը և կարևորությունը»։ Դասախոսության ներկա էին Վեհափառ Հայրապետը, Հոգևոր Ճեմարանի տեսուչ պարոն Մ. Մինասյան իր ուսուցչական խումբին հետ, Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամները, Ս. Էջմիածնի միաբանությունը և Կրոնական գործերու նախագահ՝ պարոն Հրաչյա Գրիգորյան։

Ապա, այնուհետև շարունակաբար շաբաթը նվազագույն հինգ օր երեկոյան ժամը 8—9.30, երբեմն մինչև ժամը 10 դասախոսություն տվի Ճեմարանի սարկավագներուն և բարձրագույն կարգի ուսանողներուն, թվով 19 հոգի։ Եթե այցելությանցս պատճառով չկարենայի դիշերները դաս տալ, հաջորդ օրը ցերեկներուն՝ կեսօրե ետք ժամը 3—4.30 կդասախոսեի։ Աստվածաբանության դասեր ավանդեցի մինչև նոյեմբերի 10։ Խոսեցա հետևյալ նյութերու մասին. 1) Աստվածաբանության ընդհանուր սահմանը. 2) Հայտնություն. 3) Աւարաշգործություն. 4) Քրիստոսի անձին վարդապետությունը. 5) Հայաստանյայց եկեղեցվո դավանաբանությունը. 6) Փրկագործության խորհուրդը. 7) Քրիստոսի եկեղեցին. 8) Հայոց եկեղեցին. 9) Խորհուրդներ։ Հովվական աստվածաբանության մասին ալ տվի քանի մը դասախոսություններ։ Ուսանողներ միշտ հետաքրքրությամբ հետևեցան դասախոսությանց։ Անոնք Անթիլիասեն հետս տարած աստվածաբանական բոլոր նոթագրությունները, որոնք Կիլիկիո Դպրեվանքին մեջ մեր դասավանդությանց ամփոփումներն էին, մեքենագրեցին։ Դասախոսությանց երբեմն ներկա կըլլային միաբանության անդամներեն և ուսուցիչներեն ոմանք և Ճեմարանի տեսուչը։ Ուսանողներ միշտ հարցումներ կհարցնեին. որով դասախոսության պահը միշտ կերկարեր և ավելի հետաքրքրական կդառնար։

26 սեպտեմբերի, շաբաթ.— Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնին առիթով պատարագեցի Ս. Էջմիածնի Կաթողիկեին մեջ։ Հավարտ սուրբ պատարագի Իշման սեղանեն քարոզեցի, ընաբան ունենալով «Ուխտս դիմ և կատարեցէք»։ Քարոզիս մեջ ի միջի այլոց ըսի. «Այս նվիրական Կաթողիկեին խորհրդաստող կամարներուն ներքև, մեր հավերժաբնակ սուրբերուն նայվածքին առջև և մեր Սրբազան Հայրապետի առաջև է, որ բոլորս ուխտենք հավատարիմ մնալ մեր մայրենի Ս. Եկեղեցիին և ի գին ամեն զոհողության անոր ծառայել»։ Քարոզը լրանալեն ետք Վեհափառ Հայրապետը շափազանց հուզված՝ համբուրեց ճակատս և մաղթեց՝ որ հայությունը՝ ցրված ի սփյուռս աշխարհի՝ միշտ հավատարիմ մնա իր ազգային սրբությանց, իր մշակույթին, Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին։

Ճաշասեղանին՝ ի պատիվ Վեհին եղան բաժակաճառեր։ Ես խոսեցա հանուն Կիլիկիայի Աթոռին և մաղթեցի Նորին Վեհափառության երկար կյա՛նք, որ Իրմով հայ ժողովուրդը ապրի, և դարձյալ կյանք, որ Իրմով Հայաստանյայց Եկեղեցին գոյատևե։ Սույն քանի մը խոսքերեն ետք երգվեցավ «Տէր որ բացուին դուռներն յուսոյ»՝ բոլոր ներկաներուն ձայնակցությամբ։

27 սեպտեմբերի, կիրակի.— Առավոտ շատ կանուխ արդեն հազարավոր ուխտավորներ լեցուցան էին Էջմիածնի վանքին բակը, պարտեզներն ու Կաթողիկեն։ Ամեն կողմ զվարճություն, պար, խրախճանք, առատ կերուխում. ժողովուրդը իր ցնծատոնին մեջ է։ Վարագա Խաչի տոնն է, ու դեռ ժողովուրդը իր Հայրապետի անվանակոչության տոնը կտոնախմբե։ Շատ դժվարավ կրցանք Վեհափառը եկեղեցի առաջնորդել և ապա՝ Վեհարան։ Ժողովուրդը կուզեր համբուրել Անոր Ս. Աջը, փեշերը. շատեր կնեռվեին Իր տուքերուն առջև. հրմշտուկ, աղմուկ, իրարանցում. որևէ թելադրություն կամ հանդիմանություն օգուտ չուներ. ժողովուրդը փափրե իր Հայրապետը, և այդ սերը պաշտամունքի կհասնի։ Որոշված էր, որ ես քարոզեի, սակայն հրաժարեցա այդ ծրագիրեն, որովհետև հնար չէր խուժող փաղմության աղմուկը դադարեցնել։ Շատ հեռու տեղերե եկած հայ ուխտավորներ էին։ Այսօր Ս. Էջմիածնի մեջ 230 մկրտություններ կատարվեցան։

Կեսօրե ետք Օշական գացի պարոն Հ. Գրիգորյանի հետ հուփտ և հերկրապագություն մեծ վարդապետի՝ Ս. Մեսրոպի գիրուզմանին, որուն առջև ծնրադիր աղոթեցի մեր ազգին և Եկեղեցվույն պայծառության և մեր մշակույթին անապատանության համար։

28 սեպտեմբերի, շաբաթ.— Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնին առիթով պատարագեցի Ս. Էջմիածնի Կաթողիկեին մեջ։ Հավարտ սուրբ պատարագի Իշման սեղանեն քարոզեցի, ընաբան ունենալով «Ուխտս դիմ և կատարեցէք»։ Քարոզիս մեջ ի միջի այլոց ըսի. «Այս նվիրական Կաթողիկեին խորհրդաստող կամարներուն ներքև, մեր հավերժաբնակ սուրբերուն նայվածքին առջև և մեր Սրբազան Հայրապետի առաջև է, որ բոլորս ուխտենք հավատարիմ մնալ մեր մայրենի Ս. Եկեղեցիին և ի գին ամեն զոհողության անոր ծառայել»։ Քարոզը լրանալեն ետք Վեհափառ Հայրապետը շափազանց հուզված՝ համբուրեց ճակատս և մաղթեց՝ որ հայությունը՝ ցրված ի սփյուռս աշխարհի՝ միշտ հավատարիմ մնա իր ազգային սրբությանց, իր մշակույթին, Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին։

Ճաշասեղանին՝ ի պատիվ Վեհին եղան բաժակաճառեր։ Ես խոսեցա հանուն Կիլիկիայի Աթոռին և մաղթեցի Նորին Վեհափառության երկար կյա՛նք, որ Իրմով հայ ժողովուրդը ապրի, և դարձյալ կյանք, որ Իրմով Հայաստանյայց Եկեղեցին գոյատևե։ Սույն քանի մը խոսքերեն ետք երգվեցավ «Տէր որ բացուին դուռներն յուսոյ»՝ բոլոր ներկաներուն ձայնակցությամբ։

27 սեպտեմբերի, կիրակի.— Առավոտ շատ կանուխ արդեն հազարավոր ուխտավորներ լեցուցան էին Էջմիածնի վանքին բակը, պարտեզներն ու Կաթողիկեն։ Ամեն կողմ զվարճություն, պար, խրախճանք, առատ կերուխում. ժողովուրդը իր ցնծատոնին մեջ է։ Վարագա Խաչի տոնն է, ու դեռ ժողովուրդը իր Հայրապետի անվանակոչության տոնը կտոնախմբե։ Շատ դժվարավ կրցանք Վեհափառը եկեղեցի առաջնորդել և ապա՝ Վեհարան։ Ժողովուրդը կուզեր համբուրել Անոր Ս. Աջը, փեշերը. շատեր կնեռվեին Իր տուքերուն առջև. հրմշտուկ, աղմուկ, իրարանցում. որևէ թելադրություն կամ հանդիմանություն օգուտ չուներ. ժողովուրդը փափրե իր Հայրապետը, և այդ սերը պաշտամունքի կհասնի։ Որոշված էր, որ ես քարոզեի, սակայն հրաժարեցա այդ ծրագիրեն, որովհետև հնար չէր խուժող փաղմության աղմուկը դադարեցնել։ Շատ հեռու տեղերե եկած հայ ուխտավորներ էին։ Այսօր Ս. Էջմիածնի մեջ 230 մկրտություններ կատարվեցան։

Կեսօրե ետք Օշական գացի պարոն Հ. Գրիգորյանի հետ հուփտ և հերկրապագություն մեծ վարդապետի՝ Ս. Մեսրոպի գիրուզմանին, որուն առջև ծնրադիր աղոթեցի մեր ազգին և Եկեղեցվույն պայծառության և մեր մշակույթին անապատանության համար։

28 սեպտեմբերի, երկուշաբթի.— Պարոնայք Հրաչյա Գրիգորյանի և ճարտարապետ Վարազդատ Հարությունյանի հետ Երևանի զանազան կողմերը պտտելու դացի։ Այցելեցինք ճարտարապետներու տունը, Կեդրոնական ծածկված շուկան, Ստատիոնը, Ֆիլհարմոնիայի շենքը, Մատենադարանի (Զեռագրատան) նոր կառուցվող շենքը, կենդանաբանական պարտեզը և ա՛յլ նոր շենքեր։ Առանց չափազանցության կարելի է ըսել, որ Երևան իբրև ճարտարապետական քաղաք շատ ավելի գեղեցիկ է քան մեզ հայտնի եվրոպական տ՛րևէ մայրաքաղաք։ Հայ նոր ճարտարապետներ իրենց կառուցած նոր շենքերուն մեջ միշտ հին հայկական ոճն է որ կկիրարկեն։ Ստեղծագործող հայ ժողովուրդը իր դերին մեջ է։ Ապրի՛ այդ ժողովուրդը։

29—30 սեպտեմբերի, երեքշաբթի—չորեքշաբթի.— Սույն երկու օրերուն Վայոց ձոր և Ջերմուկ՝ Սյունյաց աշխարհը դացի պտտելու։ Ինձի ընկերացան Կրոնական գործերու նախագահ Հրաչյա Գրիգորյան, Հովսեփ Եղիազարյան (Հուշարձաններու պահպանության կոմիտեի գիտնական քարտուղարը), բժիշկ Միքայել Նարիմանյան (քուժավայրերու վարչության պետի տեղակալ), բարեշնորհ Սարգիս սարկավագ և լուսանկարիչ Վրույր։ Մեր ճամբու ընթացքին հանդիպեցանք Սևան, Հայրավանք, Նոր Բայազետ, Ջորագրուղ, Մակքար, Լճաղյուղ, Գետաշեն, Մարտունի։ Ապա բարձրանալով դեպի լեռնանցքը՝ իջանք Վայոց ձոր։ Անցանք Քարվանսարայեն, Թառաթումբեն և Շաղրեն վանքեն։ Գետափ գյուղեն մեր ճանապարհը բաժնվեցավ դեպի Միկոյան և Արենի։ Մեր աջին ձորալանջի վրա Գնդեվանքն է. քիչ մը անդին՝ Գնդեվաղ գյուղը։ Կհասնինք Ջերմուկ, որ ծովու մակերեսեն 2.170 մետր բարձր է։ Հանքային շատ բուժիչ ջուրեր կան հոս, ուր ամեն տեղ հիվանդներ կուդան բուժվելու։ Լոգանք կառնենք Ջերմուկի մեջ. կպտտինք ձորը. շատ գեղեցիկ է. փոքրիկ ջրվեժ մը կհորինե սիրուն տեսարան մը։ Կվերադառնանք Արփայի ճամբայով։ Արփայեն ձիով պարոն Եղիազարյանի հետ կերթամ Ամաղու վանքը, որ 12 կիլոմետր հեռավորություն ունի. ձիավարելեն ավելի կքալենք։ Ճամբան շատ վտանգավոր է։ Բայց վերջապես կհասնինք Ամաղու Նորավանքը, ուր ԺԳ. դարուն թաղված է Սմբատ Օրբելյան, որ Սյունիքի տերն էր։ Բուրթել իշխանը այս վանքին մեջ կառուցած է Ս. Աստվածածին եկեղեցին՝ 1339-ին։ Մեր վերադարձին կանցնինք Ագրբեջանի սահմանեն։ Ուխտավորի խոր ապրումով կվերադառնանք Երևան։

1 հոկտեմբերի, հինգշաբթի.— Ամբողջ օրը անցուցի Ս. Էջմիածին՝ Վեհին հետ. ներկա եղա նաև Հոգևոր Ճեմարանի դասավանդությանց. ջանացի մոտեն ծանոթանալ ժառանգավորներուն։ Այցելեցի անոնց սենյակները, ճաշարանը և այլն։ Թե՛ կեսօրե ետք և թե՛ երեկոյան աստվածաբանության դաս ավանդեցի։

2—3 հոկտեմբերի, ուրբաթ—շաբաթ.— Երևան անցուցի ժամանակս։ Պարոն Հրաչյա Գրիգորյանի հետ Պետական թանգարան այցի դացի։ Թանգարանի տնօրեն պարոն Կարո Ղաֆադարյան՝ հույժ համակրելի և դիտուն անձնավորություն մը՝ մեզ ամեն կողմ պտտցուց։ Շատ հետաքրքրական էր Հայաստանի արդյունաբերական ցուցահանդեսը։ Մարդ կհիանա վերջին քանի մը տարիներու ընթացքին Հայաստանի շինարարական-արտադրողական աշխատանքի վրա։ Պետական թանգարանը չորս բաժին ունի. պատմագիտական, գրական, արվեստի և բաներգություն։

Նույն օրը դացի Շահումյան ավանը, որ արդեն քաղաքի մը վերածված է... Շահումյան ավանի մեքենաքան գործարանին մեջ Ամերիկայեն ծանոթներու հանդիպեցա։ Շահումյանի մեջ կրնակին 250 քեռապցի ընտանիքներ. այցելեցի իրենց։ Մայր աստիճան տարեսացան. կերան, խմեցին ու պարեցին։ Շարաթ երեկոյան դացի Ս. Սարգիս եկեղեցի, ուր մոտը գործեցի զանգահարությամբ և «Հրաշափառով»։ Մեծ տաճարը լեցված էր հավատացյալներով. զարմացա. ի՞նչ հակադրություն Եվրոպայի և նույնիսկ Միջին Արևելքի մեջ եկեղեցիներուն հետ, ուր լուր օրեր արդաքե քիչ է հավատացյալներուն թիվը։

4 հոկտեմբերի, կիրակի.— Ս. Պատարագ մատուցի և քարոզեցի Երևանի Ս. Սարգիս եկեղեցվ մեջ։ Ոչ միայն տաճարը, այլև բակն անդամ լեցված էին հավատացյալներով։ Շատ դժվարավ կրցանք թափոր դառնալ. ժողովուրդը ամեն կողմե կխուժեր մեր վրա, մեր աջը, փեշերը համբուրելու։ Քիչ անդամ ականատես եղած եմ նման ջերմեռանդության։ Քարոզեցի, բնաբան ունենալով։ «Ես եմ ճանապարհ, ճշմարտություն և կեանք»։ Մոտ մեկ ժամ ծերադիր Ս. Հաղորդություն տվի հավատացյալներուն։ Հավարտ սուրբ պատարագի հարյուրավորներ աջահամբույրի եկան։ Մեկ ժամե ավելի ստիպվեցանք եկեղեցի մնալ։ Օրվան մնացյալ ժամերուն այցելեցի բարեկամներու տուներ։ Գիշերը թեյասեղանի հրավիրվեցա Եգիպտոսեն ներգաղթած պարոն Հ. Արամյանի տունը. բազմաթիվ եգիպտահայեր ալ եկած էին. երգեցին, պարեցին և զվարճացան։

5 հոկտեմբերի. երկուշաբթի.— Պարոն Կառո Ղաֆադարյանի հետ Դիլիջան գացի. Մեր ճամբու ընթացքին Ղաֆադարյան շատ հետաքրքրական ու զվարճալի դրվագներ պատմեց մեզի՝ Աճառյանի և Մանանդյանի փոխհարաբերության մասին. որով մեր ճամբորդությունը շատ հաճելի անցավ։ Դիլիջան ունի գեղեցիկ և ներշնչող տեսարան. անտառը գույներու ծով մըն է։ Այցելեցինք Հազարաբերդ՝ ամայի, կույս բնության մեջ կառուցված հսկա կոթող մը։ Անկե անցանք Գոշավանք՝ անտառաշատ բլուրներու կողքերուն վրա կառուցված։ Ճամբան շատ զիգզագ է, վտանգավոր, միայն անասուններու երթևեկության մատչելի։ Շարժվարս Լեռն, այնտեղի երիտասարդ մը, քաջ տղա, մեզ ապահով հասցուց, երբեմն մինչև իսկ ճամբաները կտրատելով։ Գյուղին վերև՝ բլուրի վրա՝ Մխիթար Գոշի գերեզմանն է։ Ի՞նչ երկյուղածությամբ կհամբուրեմ և «Հոգւոց» մը կըսեմ։ Մեծ վարդապետին գերեզմանը լքված կգտնեմ. քարերուն վրա արյունը չէ ցամքեր. տակավին նոր մատաղ են մատուցեր։ Հյուրասիրվեցանք գյուղին ուսուցիչներեն մեկուն տունը. բայց ի՞նչ չերմ հյուրասիրություն։ Սրտեռանդն սիրեցի գիրենք։

6—7 հոկտեմբերի. երեքշաբթի—չորեքշաբթի.— Առտու կանուխեն հանդիպեցա քանի մը ծանոթներու տուն։ Սովորություն է, որ հոս ո՞ր տուն որ մտնես, անմիջապես սեղան կսարքեն. ու այդ սեղանը ճոխ է և պեսպիտուն։

Պարոն Սամունջյանի և գերեզմանատան վերակացուի հետ գերեզմանոց գացի։ Հոս մասնավոր գործարան կա գերեզմանաքարեր պատրաստելու։ Շահե սրբազանի շիրիմին համար կրանիդե հատ մը ապսպրեցինք, վրան 5—8 սմ. թանձրությամբ մարմար։ Սույն գերեզմանատան մեջ մտավորականներու Պանդեոնը կգտնվի. իրարու քով՝ նույն մտերմությամբ կհանգչին Ստեփանոս Մալխասյան, Մանուկ Աբեղյան, Գարեգին Լևոնյան, Ստեփանոս Լիսիցյան, Հրաչյա Աճառյան, Նիկողայոս Տիգրանյան, Փանոս Թերլեմեզյան և այլք։ Սրտագին «Հոգւոց» մը ըսի բոլորին։

Ահիթ ունեցա Ս. Էջմիածնի թանգարանը տեսնելու. քանի մը հատ կարևոր հնություններ նկարեցի։ Թանկարժեք իրեղեններն ու սրբությունները արկղներու մեջ դրված են։ Մեծ աշխատանք պետք է գանձատան մեջ կանոնավորություն ստեղծելու և սրբությունները փճացումե ազատելու համար։

8 հոկտեմբերի, հինգշաբթի.— Ճարտարապետ Թամանյանի որդվույն և բարեշնորհ Սարգիս սարկավագի հետ ճամբա ելանք դեպի Լոռի։ Անցանք Սևանեն և Դիլիջանեն, ուրկե կթեքինք դեպի Կիրովական՝ նախկին Ղարաքիլիսե։ Հեռուն՝ սարալանջին՝ աղվեսներու սովխոզն է. «էստեղ աղվեսներ են բազմացնում և մորթին ծախում». խոսողը մեր շարժավար Լևոնն է։ Հույժ դնահատելի ձեռնարկ։ Մեր ճամբու երկու կողմերուն՝ 300 հեկտար տարածության վրա խնձորի ընդարձակ այգիներ փոված են։ Կիրովականի մեջ կերթանք եկեղեցի. ծխատեր քահանան արժանապատիվ Տ. Գեորգն է։ Կարճ ժամերգություն կընենք. ապա կհյուրասիրվինք իր տունը։ Կշարունակենք մեր ճամբան դեպի Ալավերդի, ուր կհասնինք ուշ գիշերին։

9 հոկտեմբերի, ուրբաթ.— Դեռ արշալույսը հազիվ ծագած՝ կբարձրանանք Սանահին վանքը, որ Ալավերդիեն երեք կիլոմետր հեռավորություն ունի։ Կհանդիպինք ուխտավորներու, որոնց կհարցնենք.

— Ո՞ւր կերթաք։

— Ուխտի,— կպատասխանեն։

— Ո՞ւր,— կհարցնենք դարձյալ։

— Ս. Սարգիս, Դսեղ։

Ու կերթան. սրտագին կմրմնջեմ.— Ուխտերնիդ կատար։

Սանահին վանքը ունի պահակ. վերջին տարիներուն վերանորոգումի մեծ աշխատանքներ կատարված են հոն։ Կայցելենք նաև Հաղբատի նշանավոր վանքը, որ քալելով մոտ երեք ժամ հեռու է Սանահինեն, ուր նույնպես վերանորոգման աշխատանքներ կկատարվին։ Սանահինն ու Հաղբատը իրենց գեղեցիկ տեսարաններով, կառույցով և եռամեծ վարդապետներու գերեզմաններով խորապես տպավորեցին զիս։ Հիրավի մեր նախնիքներու հոգիներուն հետ ապրեցա։ Սանահինեն կանցնինք Օձուն, ուր Ջ.—է. դարերեն հուշարձան կա, անկե՝ Հոռոմայրի Ս. Նշան վանքը, ապա՝ Այգեհատ գյուղը, ուրկե կթեքինք դեպի Դսեղ՝ մեծ բանաստեղծին՝ Թումանյանի ծննդավայրը։ Կպտտինք Թումանյանի տունը, որ հիմա թանգարանի վերածված է։ Դսեղ հիրավի ներշնչող, սիրուն տեսարան ունի։ Մեր ճանապարհը կշարունակենք Ստեփանավանեն և ուշ գիշերին կհասնինք Թիֆլիս։

10 հոկտեմբերի, շաբաթ.— Ամբողջ օրը Թիֆլիս անցուցինք... Թիֆլիս այժմ ունի 14 քահանա։ Այցելեցի Սայաթ-Նովայի գերեզմանը, Շուշանիկի եկեղեցին, Վրաց Սիոն Մայր եկեղեցին և Մծխեթ, որ 20 կիլոմետր հեռու է Թիֆլիսեն։ Մծխեթի Մայր Տաճարը գերեզմանատուն մըն է վրացական թագա-

վորներու և կաթողիկոսներու։ Վերադարձանք Թիֆլիս և այցելեցինք Ներսիսյան վարժարանը, որ այժմ վերածված է համալսարանական բարձր ինստիտուտի։ Երեկոյան գերաշնորհ Տ. Վահան սրբազանի հետ գացինք եկեղեցի, ուր մուտք գործեցինք զանգակահարությամբ և «Ուրախ լեր» շարականով։

11 հոկտեմբերի, կիրակի.— Առտուն պատարագեցի և քարոզեցի Թիֆլիսի Ս. Գեորգ եկեղեցին։ Բակն ու տաճարը կհորդեին բազմությամբ։ Դպրաց դասը փրգեց քառաձայն. քարոզեցի սա բնաբանով. «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ, և ես աշխարհի» (Գաղ., Զ 14)։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեցավ հայրապետական մաղթանք. շատ հուզիչ էր «Հոգիդ Աստուծոյ՝ կոմիտասյան եղանակով։ Հայրապետական մաղթանքեն ետք քարոզեց գերաշնորհ Տ. Վահան սրբազան։ Կեսօրեն ետք ժամը 4-ին գացի Շավնապատի Ս. Գեորգ վանքը, ուր հազարավոր հայեր և վրացիներ ուխտի եկեր էին։ Երեկոյան ժամը 6.30-ին քարոզեցի էջմիածնեցոց Ս. Գեորգ եկեղեցին սա բնաբանով. «Յաւել ի մեզ, Տէ՛ր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»։ Զարմացա տեսնելով, որ եկեղեցին լեցված էր հավատացյալներով։ Հավարտ ժամերգության՝ աղջահամբույր. ի՞նչ նվիրում և երկյուղածություն բոլորի դեմքերուն վրա։ Գիշերվան ժամը 9-ին գացի Թիֆլիսի հայոց թատրոնը. կներկայացվեր Վազիպ՝ հայ, պարսիկ և վրացական կյանքն առնված թատրերգություն մը։ Թիֆլիսի հայ թատրոնը դեռ կպահե իր հին փառքը։

12 հոկտեմբերի, երկուշաբթի.— Առտուն կայցելեմ հայ սարկավագուհիներուն. ասոնք երեք հոգի մնացած են. Հռիփսիմե Ղոնյան, Կատարինե Գոպոզյան և Նոմե Վերմիշյան։ Առանձինն կուսանոց չունին։

Գերաշնորհ Տ. Վահան սրբազանի և Ստեփան Կամսարականի հետ կվերադառնանք Երևան։ Ժողովուրդը տամկացած աչքերով մեզ ճամբու կդնե։ Մեր ճանապարհի վրա կհանդիպինք Իջևան, Դիլիջան և Սևան։ Երեկոյան կհասնինք Երևան, հոգնեպես կազդուրված։

12—14 հոկտեմբերի, երեքշաբթի—չորեքշաբթի.— Ժամանակս անցուցի ի Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետի հետ։ Գարձյալ ճեմարան գացի և դասավանդությանց ներկա եղա։ Սարկավագներուն սենյակները այցելեցի՝ մոտեն ծանոթացա անոնց առանձնական կյանքին։ Այցելեցի Ներսիսյան լիճն ու անտառը. նաև Այդր լիճը, որ Էջմիածնեն 13 կիլոմետր հեռավորությամբ՝ Արագածոտնոց համբուն վրա կգտնվի։ Հոս շինված է ջրամատակարարման կայան մը, որ 180 քառակուսի կիլոմետր տարածության վրա անապատ վայրերը կոռոգե։ Ճաշեցի պրոֆ. Աշոտ Աբրահամյանի, պրոֆ. Առաքել Առաքելյանի և հայրենակիցներու տուները։

15 հոկտեմբերի, հինգշաբթի.— Հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետի և պրոֆ. Աշոտ Աբրահամյանի հետ մեկնեցանք Գառնի. պեղումներ եռանդագին կշարունակվին հոս։ Տրդատա թախտին մեջ մոզայիկ գտնվեցավ։ Պեղումներու ղեկավարը մեզ պատցուց։ Գառնիեն կանցնինք Գեղարդ. հոգեկան անասելի հրճվանքով ծնրադիր կաղոթեմ հինավուրց ժայռափոր տաճարին մեջ։ Վանահայրը՝ հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ մեզ կհյուրասիրե. բարի և ծերունազարդ եկեղեցական մը է։ Վանքը քահանա ալ ունի, որ կիրակի օրեր սուրբ պատարագ ալ կմատուցանե և մկրտություն կկատարե։ Ամառվան ընթացքին կիրակի օրեր 100—150 մկրտություն կկատարվի Գեղարդի մեջ։ Վանքը ունի 140 ոչխար և այծ, 105 մեղվի փեթակ։ Տարեկան 800 կիլոգրամ պանիր կդրկեն Ս. Էջմիածին՝ միաբանության. նաև մեծ քանակությամբ մեղր։

Գեղարդեն կանցնինք Գողթն, ուրկե ձիերով Աշոտ Աբրահամյանի և դյուղացիներու հետ կդարձնանք Հավուց թառ։ Մեր վերելքը դժվար էր և վտանգավոր. բայց ապահով հասանք շնորհիվ մեզի ընկերացող երիտասարդներու հոգածության։ Հիրավի թրոչունները միայն կրնան հոն թառիլ...։ Տեսարանը հրաշալի է։ Կվերադառնանք ձիով՝ Ազատ գետի հովիտով. կդիմավորվինք Գառնիի մեջ, ուրկե մեր ինքնաշարժը մեզ կառաջնորդե Երևան։

16—17 հոկտեմբերի, ուրբաթ—շաբաթ.— Այցելություններով անցուցի ժամանակս։ Գացի Պետական համալսարան, Մատենադարան (Ձեռագրատուն), Գիտական ինստիտուտ, Ֆիլհարմոնիայի սրահ՝ երգի և պարի անսամբլը դիտելու, որմե շատ գոհ մնացի։ Ծանոթացա գիտական աշխատողներու և պրոֆեսորներու հետ։ Շաբաթ երեկո գացի Ս. Հովհաննես եկեղեցի, որ լեցված էր հավատացյալներով։ Ներս մտանք զանգակահարությամբ և «Ուրախ լեր» շարականով։

18 հոկտեմբերի, կիրակի.— Պատարագեցի և քարոզեցի Երևանի Ս. Հովհաննես եկեղեցին, որուն դպրապետն է պարոն Սարգիս Անդրեասյան, Անթիլիասի Դպրեվանուց նախկին սաներեն։ Հոս ևս ականատես եղանք կրոնական անպատմելի ջերմեռանդության։ Քարոզեցի «Լից և զմեզ հոգւովդ քով սրբով» բնաբանի շուրջ։ Կեսօրեն ետք Ավետիք Իսահակյանի հետ Ս. Էջմիածին գացինք՝ Վեհա-

փառ Հայրապետի հետ ճաշելու։ Ո՞րքան հաճելի էր մեզի՝ այս երկու մեծ անձնավորությանց հյուրընկալ խոսակցությունը ունկնդրել։

19—24 հոկտեմբերի, երկուշաբթի—շաբաթ.— Այս օրերուն՝ ինձի տրամադրված շարժավարը՝ Լևոն պաղատությանն հետևանքով հիվանդացավ։ Կերևի չափազանց հոգնեցուցեր էր զինք։ Իրեն տեղ զիս սկսավ պտտցնել Կրոնական Խորհուրդի մյուս շարժավարը Գաուլեն, երևանցի, 22 տարեկան վառվռուն, պարզասեր և բարեմույն երիտասարդ մը։ Հաջորդ օրն իսկ իր անունը Վարդանի փոխեցի։ Իրեն հետ առիթ ունեցա այցելելու Արարատյան գավառի վանքերը։ Նախ գացինք Բյուրական, տեսանք տեղվույն աստղադիտարանը, կաթողիկոսական ամառանոցի հին շենքը և Դրասխանակերտցի կաթողիկոսին շինել տված բազիլիկ ոճով եկեղեցին։ Բյուրականեն անցանք Ամբերդ՝ կառուցված սարալանջի վրա։ Բերդը պարսպապատ է, գրեթե ավերակ վիճակի մեջ։ Հոս կա ԺԱ. դարեն հոյակապ եկեղեցի մը։

Հոկտեմբերի 20-ին այցելեցի Արուճ (Թալիշ), ուր կգտնվի Գրիգոր Մամիկոնյանի կառուցած եկեղեցին է. դարուն։ Եկեղեցվույն հարավ-արևելյան կողմը Գրիգոր Մամիկոնյանի ապարանքին մնացորդները երևան բերված են։ Կանցնինք Կոշ կամ Կվաշ, ուր նշանավոր հուշարձան է Ս. Ստեփանոսի վանքը՝ կառուցված է. դարուն։ Կայցելենք Մուղնիի Ս. Գեորգ փառավոր եկեղեցին. ապա՝ Կարբի, Հովհաննավանք և Սաղմոսավանք։ Վերջին երկու վայրերուն մեջ գյուղացիք հիշեցին Գարեգին Վեհափառը, որ տարիներ առաջ եկեր է և հնագիտական ուսումնասիրություն ըրեր։

Աշտարակ գյուղը նշանավոր է իր հնություններով. Մարիանեն տաճարը կառուցված է ԺԲ. դարուն. տնը արտաքուստ կհիշեցնե զոթականը, ներքուստ ունի խաչաձև հատակագիծ։ Կարմրավոր Ս. Աստվածածինը շինված է է. դարուն. ծածկված է է. դարեն մնացած կղմինդրով, որ ամրացած է կրաշաղախի հետ մետաղե գամերով։ Հետո գացինք նույն գյուղի Միրանավոր եկեղեցին, որ իր ձևով Ե. դարու կառուցվածք ունի. և Սպիտակավոր Ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված ԺԳ.—ԺԴ. դարերուն։ Քասաղ գետի ափին։ Աշտարակի մեջ է նաև Պերճ Պռոշյանի տուն-թանգարանը։ Աշտարակեն կանցնինք Փարպի. ի՞նչ սիրուն և աղվոր գյուղ. մեր միտքը Ղազար Փարպեցիով կգրավվի։ Փարպի ալ ունի հին հուշարձաններ.— Ս. Գրիգոր, Ս. Թարգմանիչք և Միրանավոր եկեղեցիները, վերջինը հավանորեն Փարպեցիի օրով կառուցված։ Ուրբաթ օր, պրոֆ. Ա. Առաքելյանի և Հ. Արամյանի հետ կայցելենք Ուշի, ուրկե երկու կիլոմետր հեռու կգտնվի Ս. Սարգիս եկեղեցին, կառուցված Ե. դարուն։ Ուշիի դպրոցին տնօրենը կհյուրասիրե մեզ ճոխ սեղանով։ Կմեկնինք Աղց գյուղը, ուր կայցելենք Դ. դարեն մնացած գետնահարկ մատուռ մը. լուսամուտ չունի և տանիքը գետնին հավասար է։ Հյուսիսային և հարավային կողմերը կգտնվին դամբարաններ, հավանորեն Արշակունի թագավորներու։ Կմեկնինք Դղեր (հնում՝ Տեղեր). Արխաշա գետի ափին, սիրուն տեսարանով գյուղ մը. ճանապարհը շատ վատ է. քանի մը կիլոմետր կքալենք։ Դղերի ժամատան գմբեթին մեջ կա փոքր սեղան, ուր սուրբ պատարագ կմատուցվի եղեր, երբ ժողովուրդը թշնամիներով պաշարվեր։ Դղերեն կուղղվինք Եղվարդ գյուղը՝ նշանավոր իր Ս. Աստվածածին եռահարկ եկեղեցիով և ա՛յլ հուշարձաններով։

Շաբաթ օր, հոկտեմբերի 24, այցելեցինք Պիոներների պալատը և ապա Օպերա՝ տեսնելու «Դավիթ-Բեկը՝ Արմեն Տիգրանյանի վերջին աշխատությունը։

Երևանի Օպերան քառորդ դարու կյանք ունի, բայց կրնա մրցիլ մեկ դարու կյանք ունեցող որևէ օպերայի հետ՝ իր արվեստով և բեմադրությամբ։

25 հոկտեմբերի, կիրակի.— Երևանի Ս. Զորավար եկեղեցիին մեջ պատարագեցի և քարոզեցի՝ հոգ բարոյության մը ներկայության։ Հավատացյալներուն մեջ նշմարեցի ներգաղթողներու բազմաթիվ դեմքեր, որոնք հավարտ սուրբ պատարագի աչահամբույրի եկան։ Քարոզիս բնաբանը սա էր.«Եւ ամենայն, որ կենդանի է և հաւատայ յիս, մի՛ մեռցի ի յաւիտեան» (Հովհ., ԺԱ. 29)։ Սակայն տաճարին մեջ ևս ակամատես եղանք նո՛ւյն ջերմեռանդության և հավատքի պոռթկման։ Կեսօրվան ճաշս Քնարիկենց հոր տունը ըրի. զիրենք կճանչնայի Գեղարդի իմ առաջին ուխտագնացութենես (1945)։

Գիշերը շատ հյուրեր և այցելուներ ունեցա։ Ամեն ոք իր բարեկամներն ու ազգականները կհարցնե։ «Հանգիստ ենք ու երջանիկ», կըսեն. «Հաղորդեցեք մեր ողջույնները ամենքինս։ Ինձի այցելողներուն մեջ Դպրեվանքի նախկին երկու սաներ կային, սան մըն ալ Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանեն։ Երեքին ալ կթելադրեմ, որ Հոգևոր Ռեմարան հաճախեն և նվիրվին Հայաստանյայց Ս. Եկեղեցվո ծառայության։ Մեր խոսքերը միայն մեկուն հոգիին մեջ տեղ կգրտնեն։

26 հոկտեմբերի, երկուշաբթի.— Կեսօրին պարոն Մովսիսյանի հետ պատելու կմեկնիմ Սարդարապատի շրջանը, որ այժմ կկոչվի Հոկտեմբերյան և բաժնված է շատ մը տով-

խոզներու։ Կիմանամ, որ նախապես այս բոլոր վայրերը անապատ եղած են, իսկ այժմ՝ սքանչելիորեն մշակված։

Չորս կողմդ խաղողի և բամբակի ընդարձակ դաշտեր. կյանքը ամենուրեք իր լիությամբը կեռա։ Այս շրջանը 32 գյուղեր կպարունակե—Եղեգնուտ, Տանձուտ, Փշաստավան, Մրգաշատ, Բամբակաշատ և այլն. ի՜նչ աղվոր անուններ։ Սարդարապատի մեջ այցելեցի պահածոյի գործարան մը. այս տարի 15.000.000 տուփ պատրաստած են. գործարանը իր արտադրությունը Միության բոլոր երկիրները կղրկե։ Հոս բամբակի գործարան ալ կա. բակին մեջ դիզված է դաշտեն բերված բամբակը, կազմելով չորս փոքրիկ բլուրներ։ Գործարանի տնօրենը բարեկիրթ անձ մըն է, որ ամենուրեք կպտտցնե մեզ։

Ապա մեկնեցանք Արմավիր. բարձրացանք բլուրը։ Արմավիրի մեջ գտնված են ուրարտական սեպագիր արձանագրություններ, ըստ որոնց ուրարտական Արգիշտի Ա. թագավորը (780—755 Ն. Ք.) մայրաքաղաք ունեցեր է Արմավիրը։ Այս քաղաքին մեջ երևան բերված են բազմաթիվ արձանագրություններ, որոնք տարված են Երևանի պետական թանգարանը։ Կվերադառնանք Ս. Էջմիածին՝ Արարատյան դաշտի երկար ու առինքնող վերջալույսին մեջ։

27 հոկտեմբերի, երեքշաբթի.— Կեսօրն առաջ շուկա իջա գնումներ ընելու. մեծ վաճառատան մը մեջ հայ տիկին մը երեխան շալկած մոտեցավ ինձի և ըսավ.

— Տեր հա՛յր, էս տարվա վերադիրը ի՞նչ է։

— Չգիտեմ,— պատասխանեցի։

— Դուք քահանա չե՞ք։

— Այո՛։

— Բայց ո՞նց չեք իմանում վերադիրը։

Լավ դաս մը եղավ ինձի ասիկա։ Իրրև հայ եկեղեցական դեռ շատ բան ունինք սորվելիք։

Պրոֆ. Աշոտ Աբրահամյանի հետ Հանրային գրադարան գացի։ Տնօրենն ու պաշտոնեությունը սիրալիր ընդունելություն ըրին մեզի։ Հաստատությունը երեք միլիոն գիրք ունի. հայագիտական քանի մի կարևոր դիրքեր նվիրեցին ինձի. փոխարենը ես ալ իրենց մեր հրատարակություններեն պիտի ղրկեմ։ Հետո այցելեցինք Մատենադարանի տնօրենին, որ պատվական թանկարժեք երիտասարդ մըն է. հոս գիրքերու նկատմամբ նույն կարգադրությունը ըրինք։

Կեսօրե ետք Հրաչյա Գրիգորյանի և Աշոտ Աբրահամյանի հետ Խոր-Վիրապ գացի։ Մասիսի ստորոտեն հազիվ 10—12 կիլոմետր հեռավորության վրա կառուցված է հինավուրց այս վանքը։ Խոր հուզումով կմոտենանք մեր հավատքի Հոր ճգնարանին, երկյուղածությամբ կիջնենք Խոր-Վիրապին մեջ. բացարձակ մթություն. կվառեմ մոմ մը. կլոր խուց մըն է. արևելյան կողմը փոքր սենյան մը. կհամբուրեմ սրբատաշ քարերը. ծնրադիր կաղոթեմ Հայոց աշխարհի, հայ ժողովուրդի, Հայաստանյայց եկեղեցվո հավերժության համար։ Կհատնի մոմին լույսը. կմնամ խավարին մեջ. հանկարծ կապույտ երկինքեն կտոր մը կտեսնեմ։ Խուցին տանիքը փոքր ծակ մը ունի. ասկե է որ սուրբը ստացեր է իր սնունդն ու իր լույսը։ Ու սուրբին է, որ այս անգամ կուղղվի աղոթքս. «Ո՜վ հայր մեր և լուսավորիչ հոգվոց մերոց, աղաչեմք զքեզ, հատկապես բարեխոսեցես առ Քրիստոս Աստուածն մեր, զի զեկեղեցիս և զմնացորդս ժողովրդեան քո պահեսցէ ի խաղաղութեան...»։ Հոգեկան անասելի երանության մը մեջ ոտքի կկանգնիմ ու վեր կբարձրանամ ընկերակիցներուս քով։

Մեր դիմաց քիչ մը անդին Արաքսն է, հազիվ նշմարելի մեր աչքերուն։ Կուզեմ անոր ափը երթալ. անկարելի. սահմանապուսն է։ Ու վրեժի զայրույթը կաճի ներսս. ես հայ ուխտավոր եկեղեցական մըն եմ ու առանց Արաքսը տեսնելու և անոր ջուրեն խմելու պիտի վերադառնամ...։ Համաշխարհային երկրորդ պատերազմին ի՜նչ երազներով ապրեցանք ու գործեցինք։— Արաքսն ու Մասիսը ձերն են,— ըսին մեզի Ամերիկայի մեջ։— Արաքսն ու Մասիսը մե՛րն են,— կրկնեցին մեզի Հայաստանի մեջ։ Բայց ես քարընկեց մը անդին չեմ կրնար հառաջանալ։ Կանգնած Խոր-Վիրապի պարիսպին վրա, դեմքս՝ զույգ Մասիսներուն ու շառագունած հորիզոնին, ներսես ձայն մը կբսե ինձի.— Արաքսն ու Մասիսը մեր անկողոպտելի իրավունքներն են, մե՛րն են, մե՛րը պիտի ըլլան հավիտյան։ Այդ հույսով պիտի ապրինք. «Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ»։

28 հոկտեմբերի, չորեքշաբթի.— Վեհափառ Հայրապետը դարձյալ երկարորեն խոսեցավ ինձի իր ծրագիրներուն մասին։ Կազմակերպող ու խորաթափանց միտք մըն է, եղելությունները նախատեսող ու իրաց կարգը լավագույնս ըմբռնող անձնավորություն մը։ Առանձնահատուկ ձիրք ունի ղեկավարելու և առաջնորդելու։ Նորին Վեհափառության ծրագիրներն են վերականգնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռը, վերանորոգել Տաճարը, Հոգեվոր Ճեմարանի ուսանողներուն թիվը քառապատկել, բազմացնել եկեղեցականներու թիվը, որպեսզի մինչև իսկ ամեն գյուղ ունենա իր հոգևոր հովիվը, արտասահման— Թեհրան և Լոնդոն— ղրկել աշակերտներ, որոնք սատ-

վածաբանական բարձրագույն ուսումի հետևին և Հայրենիք վերադառնալով պայծառացնեն Հայոց Եկեղեցին, արտասահմանեն 15—20 ուսանողներ բերել՝ Ս. Էջմիածնի Ճեմարանին մեջ իրենց ուսումը շարունակելու և եկեղեցականության պատրաստվելու։ Երուսաղեմեն և Անթիլիասեն 2—3 եկեղեցականներ կուզե, որպեսզի Ս. Էջմիածին երթան և կրթական, քարոզչական ու առաջնորդական գործերով զբաղին։ Մեզի առանձնապես պատասխանատու պաշտոն առաջարկեց. սիրով ընդառաջեցինք. ըրինք մեր թելադրությունները։ Ս. Էջմիածնի և Հայոց Եկեղեցին ծառայելը մեր իսկական պարտականությունն է։

29—30 հոկտեմբերի, հինգշաբթի—ուրբաթ.— Երևանեն մասնավոր պատկերահան բերել տվի՝ Ս. Էջմիածնի գանձատան մեջ գտնվող թանկարժեք իրերը նկարել տալու համար։ Նպատակ ունիմ այդ պատկերներով առանձին ալբոմ հանել։ Հնությունները 36 սնդուկներու մեջ դրված են. ամենքն ալ թվագրված են։ Ամբողջ օրը մենք հազիվ կարողացանք 12 սնդուկ բանալ, իրերը դուրս հանել և մեր հավնածը նկարել տալ։

Վեհափառ Հայրապետը հաղորդեց ինձի, որ Երևանեն հավատացյալներ մասնավոր խնդրանք ներկայացուցած են Իրեն, որպեսզի ես քանի մը ամիս ևս մնամ հոս՝ իրենց քարոզելու համար։ Ուզում ենք, որ Տեր Դերենիկ սրբազանը մեզ հոգևոր նյութերի մասին մի քանի ամիս քարոզ տար։ Թեպետ սիրելի, բայց դժվար էր ընդունիլ անոնց խնդրանքը։

31 հոկտեմբերի, շաբաթ.— Առավոտյան ժամը 8-ին մեկնեցա Սիսիան, Սյունյաց աշխարհը, պարոն Հովսեփ Եղիազարյանի հետ։ Անցանք Գեղամա սարերուն վրայեն. ահա Սյունիք իր բարձր, լերկ, ձյունապատ լեռներով։ Մեկ ժամ ետք քովն ենք Սիսիանի գործկոմի նախագահին՝ պարոն Եղիազար Եղիազարյանի, որ բարեկիրթ և ազնիվ անձնավորություն մըն է։ Քիչ ետք տեղույն հովիվ արժանապատիվ Տ. Վահան քահանա Տեր-Հովսեփյան կուգա։ Կորոշենք վաղը հոս պատարագել և քարոզել։ Նախագահին ինքնաշարժով կմեկնինք Գորիս, մինչ արժանապատիվ Տ. Վահան վաղվան պատարագին համար պատրաստություններ կտեսնե։ Մեր դիմաց՝ ճանապարհին՝ Իշիխու սարն է, Զանգեզուրի լեռնաշղթային ամենեն բարձր գագաթը։ Քանի մը կիլոմետր ձյունի վրայեն կճամբորդենք։ Ժամը 11-ին կհասնինք Գորիս. կերթանք ուղղակի գործկոմ. ժողովի մեջ են. մեզ կընդունին հոտնկայս։ Երևանեն արդեն հեռաձայներ են նախագահին մեր գալու մասին։ Շուտով կճաշենք և «վիլիս» ավտոյով մը ճամբա կելլենք դեպի Տաթև, Սյունյաց վարդապետարանը։ Ինձի կընկերանան Եղիազարյան Հովսեփ և գործկոմի նախագահը՝ իր օգնականով։ Կանցնինք Որոտան գետի վրայեն, ապա կբարձրանանք սար. ամենուրեք խիտ անտառներ։ Արևը կանհետի. մշուշը կպատե մեզ ու հետզհետե կթանձրանա։ Վեռներուն վրա ճանապարհը շատ նեղ է, ցեխոտ, անանցանելի և վտանգավոր. ինքնաշարժը կտատանի, կարծես պիտի սահի և իյնա վարը՝ ահավոր անդունդին մեջ։ Շարժավար և նախագահ անհանգստության նշաններ ցույց կուտան. կվախնան, որ մի դուցե վտանգի հանդիպինք։ Կշանան դիս համոզել, որ վերադառնանք։

— Առանց Տաթևը, Սուրբ Գրիգոր Տաթևացիի գերեզմանը տեսնելու և համբուրելու չեմ վերադառնար,— կպատասխանեմ։

Իզուր կշանան համոզել զիս. կհաղթենք սյունեցիներու համառությանն։ Քանիցս մեր ավտոն կխրի ցեխին մեջ. բայց չենք հուսահատիր։ Կիջնենք ձոր. քանի մը կիլոմետր մնացած է. սյունեցիք առուլդ նժույգներով կդիմավորեն մեզ։ Կհասնինք Տաթև. ահա՛ վանքը, Սյունյաց մեծ համալսարանը, հայության լույսի ու հավատքի վառարանը. հոգեկան անասելի բերկրանքի մեջ ենք։

Տաթևի վանքը ավերակներու մեջ է 1931-ի երկրաշարժին հետևանքով։ Եկեղեցիի պատերեն մաս մը կանգուն է։ Ահա մեծ վարդապետին՝ Սուրբ Գրիգոր Տաթևացիի գերեզմանը. կծնրադրեմ, կհամբուրեմ զայն. կբացեմ մոմ մը ու աղոթքս իրեն կուղղեմ, որ բարեխոս ըլլա առ Աստված՝ մեր Ս. Եկեղեցվո հավերժ պահպանման և անսասանության համար։ Կյանքիս մեջ ինքզինքս այսքան երջանիկ չէի զգացած. իմ սիրած ու պաշտած ամենեն մեծ վարդապետին գերեզմանը դտած էի։ Ի տղա տիոց Տաթևացին ունեցած եմ իմ կյանքիս իբրև հարացույցը։

Կանգուն է Գավազան-սյունը. ու ես երկյուղածորեն կծնրադրեմ անոր առջև։ Մեկը ավելի կթանձրանա. մումը իջեր է արդեն։ Շարաթ երեկո է ու ես Գավազան-սյունին

առջև ծնրադիր կաղոթեմ սյունեցիներու հետ։ Կերգեմ վերջ զուարթը։ Գրուղացիք կձայնակցին ինձի ու մեր երգը վիճառնվի Որոտան գետի հավերժական երգին հետ։ Կհյուրասիրվինք տեղվույն վարժարանի անօրենին տունը. ի՞նչ բարի և ազնիվ հայ մրն է։ Տաթևացիք կբոլորվին մեր շուրջը. կայտառ, վառվռուն, շենշող լեռնականներ են։ Նախագահը հեռաձայն կընե Սիսիան, որ Դերենիկ սրբազանը վաղը առավոտ պիտի չկարենա պատարագի գալ, որովհետև օդը անպատատ է և գժվար է ճամբորդել։ Մինչև կես գիշեր տաթևացիներու հետ փոսակցելով կանցնեմ ժամանակս։ Կմեկնին. իսկ ես գեշերվան մնացյալ մասը կհսկեմ արթուն ու հոգվով կհաղորդակցիմ մեծ վարդապետներու հոգիներուն հետ։

Տաթևի գիշերը... մշուշ, անձրև, աղջամուղջ, աղոթք, խոկում, փերացում։

1 Նոյեմբերի, կիրակի.— Ո՛չ մեկ զանգակի զողանջ Տաթևի մեջ... սարսուռ մը կանցնի հոգիս։ Կերթանք վանք. կարճ ժամերգություն մը կընենք Գավազան-սյունին առջև. ու ծնրադիր կաղոթեմ, որ մեր բոլոր դպրեվանքներուն մեջ տաթևացի մեծ վարդապետներու նման եկեղեցականներ պատրաստենք։

Վտանգավոր է վերադառնալ ինքնաշարժով։ Սյունեցիք բարձրահասակ և գեղեցկադեմ ձիեր կբերեն մեզի. կհեծնենք. քանի մը հոգի կընկերանան մեզի։ Կիջնենք Սյունյաց Մեծ Անապատը՝ Որոտան գետի ձգերքը. վանքին պահապանը ամենուրեք կպտտցնի մեզ։ Եկեղեցին պարսպապատ է, կառուցված չորս հաստաբետ սյուներու վրա։ Որոտանի ափով կշարունակենք մեր ճամբան։ Մեր ձախին հսկա քարայրներ, մեծդի ժայռեր. կանցնինք անոնց տակեն. սոսկում մը կունենամ... եթե հանկարծ ժայռերեն մին պոկվի...։ Քիչ մը անդին այն վայրն է, ուր Դավիթ-Բեկ ապաստանած է իր զորքին հետ։ Կանցնինք Սատանի կամուրջեն. ամենի ժայռը տեղի տվեր է հանքային ջուրերու կոհակներուն ու շիներ է բնական կամուրջ։ Զորեն կբարձրանանք լեռ. թանձր մառախուղ՝ սարերուն վրա. ձիերը քով-քովի իրարու ետևեն կքալեն. հազիվ կարող կըլլանք գիրար տեսնել։ Անդունդներուն վրա՝ արահետ. ա՛յսպես է Սյունյաց աշխարհը։ Կհասնինք Հալիձոր։ Ինքնաշարժ մը կսպասե մեզի. կշարունակենք մեր ճամբան դեպի Գորիս. մինչ սյունեցիք կնետվին նժույգներու վրա ու կվերադառնան Տաթև։

Մշուշոտ ու ցեխոտ լեռնային ճամբաներեն մեր շարժավարը ապահով մեզ Գորիս կհասցնե՝ անցնելով Շնհեր գյուղեն։ Կմեկնինք հին Գորիս. հոս կան 80-ե ավելի ժայռափոր տուներ, ուր կընակին հայ ընտանիքներ։ Ամառ ատեն զով կընե այս տուներուն մեջ, իսկ ձմեռը՝ տաքուկ։ Կմտնենք այդ տուներեն շատերուն մեջ. ջերմագին կընդունին մեզ։ Մութը կոխեց ու մենք դիշերեցինք Գորիս։ Ունեցանք այցելուներ, որոնք ուշ ատեն մեկնեցան։

2 Նոյեմբերի, երկուշաբթի.— Առավոտյան ժամը 6-ին գործկոմի նախագահին ավտոյով Սիսիան մեկնեցանք։ Նախագահը՝ հյուրասեր, բարի և պատվական անձնավորություն մը՝ իրեններով բարի ճանապարհ մաղթեց մեզի։ Լեռները համակ ձյուն են. Սիսիան՝ ծով մշուշի մեջ։ Կհյուրասիրվինք պարոն Եղիազար Եղիազարյանի տունը։ Նախաճաշ ետք նախագահը իր ավտոյով մեզ կառաջնորդե Որոտնա վանքը. գիտության այս կեդրոնն ալ ավերակներու մեջ է՝ 1931-ի երկրաշարժին հետևանքով։ Կճմլվի հոգիս... հայ վարդապետ մրն եմ. իղուր կորոնեմ սյունեցի վարդապետները. Որոտնեցիի գերեզմանն անգամ չենք կրնար գտնել՝ համբուրելու և երկրպագելու մեծ սուրբին առջև։ Վանքը կառուցված է սարալանջի վրա. վարը Որոտան գետն է. չորս կողմը՝ սիրուն վանայություն։ Վանքի ավերակներուն մեջ, ուր կվերապրինք մեծ վարդապետներու հիշատակը, կուխտենք լեցվիլ իրենց տեսիլքովն ու հոգիովը։ Կայցելենք Վաղատին գյուղը, Սիսիանի Ս. Աստվածածին եկեղեցին՝ փառավոր տաճար Ս. Հռիփսիմեի տիպին նման, կառուցված՝ Է. դարուն։ Գրմբեթին քիվին վրա չորս ավետարանիչները բանգակված են։ Կարճ ու ջերմեռանդ աղոթք մը ետք... կմեկնինք Եղեան։

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կարողիկոսության Հայոց Կիլիկիո, Աեթիլիաս, հունվար, 1954)

(Շարունակելի)

ԵՐԵՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ ԾԱՓԱՀԱՐՈՒՄ ԵՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ

Փարիզում հրատարակվող «Միրուար-Սպրենտ» մարմնամարզական պատկերազարդ հանդեսի մեջ զնահատական խանդավառ տողեր են նվիրված սովետական մարզիկների, որոնց թվում նաև հայ մարզիկների — Ա. Ազարյանի, Մուրադովի և Հ. Շահինյանի, նրանց կատարած հիանալի մարզախաղերի համար։ Հանդեսի առաջին շապկի կենտրոնում կարդում ենք հետևյալ տողերը.

«Քանչելի ներկայացում «Սպորտի պալատում, որտեղ երկու օր 30.000 մարդիկ ականատես եղան սովետական մարզիկների ելույթներին, որոնք երբեք չէին եղել Ֆրանսիայում պաշտոնական մրցումների համար և որոնք հիացում պատճառեցին անգամ ամենափորձառու մասնագետներին։ Այստեղ չի կարելի չսքանչանալ խմբի կրտսերագույնի՝ Ա. Ազարյանի «երկաթե խաչի վրա, բարդ ու դժվարին մի մարզախաղ, որ արժեքավորեց ախոյանի (չեմպիոն) տպավորիչ ու նուրբ դնդերները։

Միևնույն հանդեսի մեջ Անտրե Ժակուարի ստորագրությամբ հրատարակված մի հոդվածում, սովետական սպորտսմենների մարզախաղերի մասին դրվել են հետևյալ տողերը.

«Շաբաթ և կիրակի երեկոները «Սպորտի պալատում Ֆրանսիա—ՍՍՌՄ խառն մրցումի ժամանակ սովետական մարզիկները ձեռք բերեցին անանախընթաց հաջողություն։ Այլ կերպ էլ լինել չէր կարող, այլապես, մինչ այդ մեր երկրին անծանոթ սովետական մարզիկներով, որոնք Փարիզ եկան արդեն զարդարված փառապանծ պատվանշաններով։

Չենք կարծում չափազանցած լինել ասելով, թե բոլոր նրանք, ովքեր բախտն ունեցան ներկա գտնվելու այդ ելույթին, անմոռանալի կպահեն նրա հիշատակը, որովհետև այն, ինչ սովետական մարզիկ կարող են անել մարզական ասպարեզում, անհրաժեշտ է պարզապես։ Սովետական մարզիկները գլեցին-անցան մարզական կարելիությանց սահմանը։ Մենք տեսանք նրանց շքեղապատույտ կատարելիս և ամենադժվարին ու անհավատալի վարժությունների ժամանակ, որոնք կատարում են այնպիսի դյուրությամբ, որ մեզ թվում է, թե մեզանից յուրաքանչյուրը կարող է միևնույն բանն անել։

Սովետական մարզիկների մասին խոսելիս պետքն ես զգում հիշեցնել բոլորին, որովհետև սքանչելի են բոլորն էլ։ Քաջահմուտ Զոնարինից և Շախլինից հետո, նրանցից կրտսերագույնը՝ Ազարյան հսկան ու նրբավարժ Մուրադովն ու Շահինյանը, որոնք զմայլեցի տպավորություն թողեցին մեզ վրա։

«Միրուար-Սպրենտ» հանդեսի խմբագրությունը կենտրոնի էջերի վրա դրել է երկու հայ մարզիկների՝ Ազարյանի և Շահինյանի կրկնակները՝ մարզախաղը կատարելիս։

ՅԱՊՈՆԱՑԻ ՆԿԱՐԶՈՒՀԻ ՄԸ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«Սովետական կինոն պարբերաթերթը (անգլերեն լեզվով հրատարակություն) դեկտեմբեր ամսի համարին մեջ կհրատարակե հոդված մը ստորագրված Ակամատսու Տոսհիկոյի կողմե, յապոնացի Նկարչուհի, որ այցելած է Սովետական Միություն և այս առթիվ նաև եղած է Սովետական Հայաստան։ Հոդվածեն կգրաքնենք անոր տպավորությունները Երևանի մասին, ինչպես նաև անոր գծած զարդաձաղիկները։

Մոսկվայեն ինքնաթիռ մը մեզ կփոխադրե Երևան, երգի և պարի արևաշող երկիրը։ Հայաստանի մայրաքաղաք Երևանը իրապես քաղաք մըն է ողողված արևու ճառա-

գայթներով։ Հրաշալի նոր շենքերը փոխարինած են հին և խարխուլ հողաշեն տուներուն։ Կառուցումներուն համար գործածված նյութը մանիշակագույն և վարդագույն գեղեցիկ քարն է, որ կգտնվի Հայաստանի լեռներուն մեջ։ Երևանը կդառնա նորագույն քաղաք մը։

Ինձ շատ դուր եկան շենքերու և հուշարձաններու ազգային բնույթ ունեցող զարդաքանդակները։ Գծագրությունները իրապես արտաքո կարգի էին, հրաշալի՝ ինչպես հին գրականությունը, պարզ՝ հնամենի աղոթքներու նման, խոր և ջինջ՝ ինչպես մարդկային ամենագեղեցիկ հույսերը...

Այստեղ հինը կապրի ներկայով, և այժմ հստակորեն կտեսնենք ինչպես կկերտվի ապագա մշակույթը, մշակույթ մը, ուր դեկորատիվ արվեստի նմուշները անխոս վկաներն են հայկական ճարտարապետության։

Հայաստան հարավային երկիր մըն է։ Անոր փողոցները միշտ ողողված են արևու ճառագայթներով։ Եվ, Երևանը, միաժամանակ հին և նոր քաղաք մըն է, նոր կյանքի մը մայրաքաղաքը։

Հայաստանի մեջ, յուրաքանչյուր տղամարդ ու կին կտիրե պարել ու երգել։ Անոնց ձայները ինձի կհիշեցնեն ռուսական տոներու հնչյունները (յապոնական ժողովրդական գործիք մը)։

Հայերը շատ գեղեցիկ ժողովուրդ մըն են։ Տղամարդիկ թխագույն են, արծվանման դիմագծերով։ Կիները նույնպես մուգ գույնի են և դեղձերու նման տեսք մը ունեն։ Մենք յապոնացի կիներս, շուքի մեջ մնացինք անոնց գեղեցկության առջև։

Իմ առաջին տպավորությունը Հայաստանի մասին, ոչ միայն փերև արևու, լույսի, այլև երգերու և պարերու երկրի մը, հաստատվեցավ հետևյալ տպավորություններով.

Ուր որ գացի, ըլլա քաղաք կամ կոլտնտեսություն, այնտեղ լսեցի շատ երգեր և տեսա պեսպիսակ պարեր։

Երեկոյան, ազգային առանձնահատուկ երգերու հնչյուններեն տարված երբ կպառկեինք հարց կուտայինք մեզի՝ այս ուրախ հայերը արդյոք ե՞րբ ժամանակ ունին քնանալու։

Նրանեն կրկին մեկնեցանք Թբիլիս... Երևանի, ինչպես նաև Լենինգրադի մեջ շատ արվեստագետներ ճանչցա (նկարիչներ, քանդակագործներ) ամենքն ալ, լավ հագնված էին, իրենց սեփական արհեստանոցներուն մեջ կաշխատեին և լավ վարձատրված էին։

«ՆՈՐ ԿՅԱՆՔ», Բուխարեստ, 31 նոյեմբերի 1954 թ.)

ՀԵՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՈՐԳ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

Երկարատև հիվանդությունից հետո, 1954 թվականի հունվարի 21-ին, վախճանվեց արժանապատիվ Տ. Գեորգ քահանա Մելքոնյանը։

Հանգուցյալը ծնվել է 1878 թվականի օգոստոսի 18-ին Տրապիզոնի վիլայեթի Զարշամբայի գավառի Էրենջյուվ գյուղում հացագործի ընտանիքում։ Նրա ծնողները գաղթել են Ռուսաստան և բնակվել Գորյաչի Կլյուչի Սադովա գյուղում։ Հանգուցյալը իր նախակրթությունը ստանալով տեղի տարրական դպրոցում, ինքնուրույն ջանասիրությամբ լրացնում է իր ուսման պակասը և նույն գյուղում նշանակվում ուսուցիչ։ Միաժամանակ նա դպրություն է անում տեղի եկեղեցում։ 1916 թվականին քահանա է ձեռնադրվում Մխիթար եպիսկոպոսի ձեռքով և քահանայագործում Աստրախանի Ս. Պետրոս եկեղեցում։

1925 թվականին տեղափոխվում է Կրասնոդարի Առաջ չերքեզահայերի գյուղը և հովվում այնտեղ շուրջ 5 տարի։ Կրասնոդարի եկեղեցին վերանորոգելու համար նա հանդանակություն է կազմակերպում՝ զգալի մի գումար դնելով իր անձնական միջոցներից։

Նորին Ս. Օծություն հանգուցյալ Գեորգ Ե. Կաթողիկոսի կարգադրությամբ, 1926 թվականին Լենինական քաղաքի երկրաշարժի պատճառով վնասված եկեղեցիները վերանորոգելու համար նա հանգանակություն է կազմակերպում և գոյացած գումարն ուղարկում Էջմիածին։

Գեորգ քահանայի հանրօգուտ այդ գործունեությունը արժանանում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուշադրությանը։ Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով նա ստանում է լանջախաչ կրելու իրավունք։ 1943 թվականից հանգուցյալը քահանայագործում էր Բելորեչինսկում և միաժամանակ հովվում Մարկոպ քաղաքի հավատացյալ համայնքին և նրա շրջակայքին։

Իր 38-ամյա քահանայագործության շրջանում, Տ. Գեորգն իր անգասիր վարքով ու բարքով, իր անձնվիրությամբ և մեղվաջան աշխատանքով մի՛շտ էլ սիրված է եղել իր հավատացյալ ժողովրդի կողմից։ Արժանավոր հովվի մահը խորապես վշտացրեց իր ժողովրդին։

Հանգուցյալ արժանապատիվ Տ. Գեորգ քահանայի հուղարկավորությանը եկել էին մասնակցելու նրան հարգող հազարավոր հավատացյալներ։ Թաղումը կատարվեց պատշաճ հանդիսությամբ։ Տան կարգն ու լվացումը կատարելուց հետո, Գրիգոր քահանա Անանյանը խոսեց դամբանական՝ դրվատելով հանգուցյալի արժանիքները։ Ապա սգակիրների և հանգուցյալի հիշատակը հարգողների ուղեկցությամբ, դագաղը առաջնորդվեց Բելորեչինսկու հանգստարանը, ուր հանգուցյալի մարմինը հանձնվեց հողին։

Աստրախանի, Կրասնոդարի և Բելորեչինսկու հավատացյալները երախտագիտությամբ կպահեն իրենց սրտերում բարի և ազնիվ հովվի հիշատակը։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ», ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Կազմեց Նորայր Եպիսկոպոս Պողարյան,
Երուսաղեմ, տպարան Սրբոց Հակոբյանց,
1953:



Հայ ժողովրդի ըստեղծած հոգևոր, նյութական անկորնչելի մշակութային արժեքների դանձարանում, առանձնահատուկ տեղ են գրավում մեր պապերից ժառանգություն ստացված հայ ազգային ամենամեծ հարստությունը կազմող ձեռագրերը՝ գրչագրական, մանրանկարչական հուշարձանները, որոնցից յուրաքանչյուր էջի և տողի վրա հայ ժողովրդի հանճարի և ստեղծագործ աշխատանքի անկորնչելի կնիքն է դրված։

Ահա թե ինչո՛ւ հայ ժողովուրդը անհուն զոհողությունների և դրկանքների գնով աչքի լույսի պես պահել ու պահպանել է այդ ձեռագրերը և որպես անգին ժառանգ հասցրել ներկա սերնդին։

Հայ ազգային-եկեղեցական այդ արժեքավոր ու անկրկնելի հարստության ամենամեծ մասը գտնվում է Մայր Հայրենիքում, Երևանի Պետական մատենադարանում, ուր և մեծ գուրգուրանքով պահվում են ձեռագրերը և ուսումնասիրվում։

Ձեռագրերի մի զգալի մասը գտնվում է Սփյուռքում, հայ մշակույթի կենտրոն հանդիսացող մեր վանքերում։

Այդ վանքերից մեկն է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց հնադարյան վանքը, որը ազգային-եկեղեցական պատմության մեջ նրել է և մնում է որպես հայ հոգևոր մշակույթի պատմական ու պայծառ օջախներից մեկը, ուր հավաքվել ու խնամքով պահպանվել է հայկական ձեռագրերի մի պատկառելի և մեծաքանակ ժողովածու։

Երուսաղեմի հայոց վանքի ձեռագրերի ժողովածուն իր հնությամբ, գրչական արվեստի տեսակետով և իր բովանդակությամբ հայկական խոշոր ու արժեքավոր ժողովածուներից մեկն է իրավամբ ճանաչվում։

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանի ձեռագրերը քիչ են ուսումնասիրված զանազան պատճառներով։ Վանքի միաբանների սրտագին ու հերոսական պարտականությունն է եղել Երուսաղեմում՝ միջազգային կրոնական այդ քաղաքում, արթուն պահակները լինել հայ ազգային-եկեղեցական դարավոր իրավունքներին, գիշեր ու ցերեկ պայքարել դրանց պաշտպանության համար օտար տենդությունների դեմ։ Այդպիսի պայմաններում նրանք կարող էին միայն հավաքել ու խնամքով պահել հայ մշակույթի այդ բեկորները, բայց չէին կարող խաղաղ ու հանգիստ պայմաններ ունենալ ձեռագրերի սիրտ մաշող և ժամանակ խլող աշխատանքի համար։ Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների վանքերի նպաստավոր պայմանները միշտ էլ բացակայել են Սրբոց Հակոբյանց միաբանների համար։

Նորայր սրբազանը այդ թերին լրացնելու է կոչված իր շնորհընկալ աշխատանքով՝ մի անգամ ևս բաց անելով մեր աչքերի առաջ հայ մշակույթի մեծարժեք գոհարները և հայ ժողովրդի մշակույթի մեծությունը։

Երուսաղեմի ձեռագրերի առաջին ցուցակը, Նորայր սրբազանից առաջ, կազմել է բոլորից սիրված ու հարգված լուսահոգի Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմելյանը՝ հրատարակելով № 1—100 ձեռագրերի ցուցակը։ Նորայր սրբազանը շարունակել է այդ աշխատությունը՝ ուսումնասիրված ձեռագրերի թիվը հասցնելով 200-ի։

Նորայր սրբազանի Մայր ցուցակում նկարագրած ձեռագրերի մեջ կան Ս. Գրոց մեկնություններ, պատարագամատույցներ, մաշտոց, ժամագիրք, գանձգիրք, տաղարան, քարոզգիրք. կան նաև բժշկական, փիլիսոփայական և աստվածաբանական հավաքածուներ, նամականիներ, Մխիթար Գոշի Դատաստանագրքի օրինակներ, մի խոսքով՝ հայոց պատմության և եկեղեցական մատենագրության բազմաժանր մի գանձարան։

Նկարագրված ձեռագրերը պարունակում են մասամբ ծանոթ մի քանի ականավոր մատենագիրների բոլորովին անտիպ և երբեմն թեև տպված, սակայն համեմատական աշխատանքի համար լայն ասպարեզ ընձեռող հատվածներ, խնամքով և բարեխղճությամբ արտագրված բազմաթիվ հիշատակարաններ, պատմական, մատենագրական, հասարակական-կենցաղային նորություններ, որոնք կարևոր են տվյալ ժամանակաշրջանը հասկանալու և դնահատելու համար։

Այսպես օրինակ, տաղերով ու գանձերով հարուստ մի ժողովածու է № 231 ձեռագիրը՝ 15-րդ դարից, որը, անկասկած, մեծ արժեք է ներկայացնում հայ գրականության և սրեղիայի պատմության ուսումնասիրության համար։ Այդ ժողովածուի մեջ մի տասնյակից ավելի տաղեր կան Ներսես Շնորհալուց, որոնցից միայն մի քանիսն են լույս տեսել «Սիոն» ամսագրում (1949 թ., էջ 63, 93)։ Նույն ձեռագրում կան երկու ուրիշ գանձեր, որոնց կառուցվածքի, ոճի ու լեզվական առանձնահատկությունների վրա հիմնված, Նորայր սրբազանը վերագրում է Գրիգոր Նարեկացուն։

Զափազանց մեծ հետաքրքրություն է ներկայացնում № 154 Ճառընտիրը։ Այդ ձեռագրում ընդօրինակված Մովսես Խորենացու Հայոց պատմությունից Թեոդոսի թագավորության վերաբերյալ մի փոքր հատված ուշագրավ տարբերություններ ունի տպագրվածի համեմատությամբ։

Միևնույն ձեռագրում ամփոփված «Համառոտ պատմութիւն նշխարաց սբ. առաքելոյն Պետրոսի սակաւ հանեալ ի բազմաց Մեղր վարդապետի, զոր արարեալ էր Պանտալեոնն երիցուն» պատմական վավերագիրը կարևոր է Լամբրոնի իշխանների ծագման մասին հաղորդած տեղեկություններով։ Այս հատվածը հրատարակվել է նախ Գարեգին Ա. երջանկահիշատակ Կաթողիկոսի «Հիշատակարանք ձեռագրացոյի Ա. հատորի մեջ (էջ 551)։

Նույն ձեռագրում տեղ է գտել նաև Հովհաննես Երզնկացու մի ճառը, որի շահեկանությունն անկասկածելի է, եթե նկատի ունենանք հեղինակի մեջ արդեն հայտնի ստեղծագործությունների խոհական ու դրական-գեղարվեստական արժանիքները։

Ագաթանգեղոսի, Փավստոս Բյուզանդի, Մովսես Խորենացու և Եվսեբիոսի պատմություններից քաղվածաբար կազմված մի ժողովածու է № 230 ձեռագիրը, որը համեմատական բաղդատության համար կարևոր ընդօրինակություն է։

Մարդակազմության վերաբերյալ, բժշկական գործնական գիտելիքներով, տեղեկություններով և հրահանգներով հարուստ մի ընդարձակ բժշկարան է 18-րդ դարի № 165 ձեռագիրը, որի ստացողը Մարտիրոս հեքիմն է։

№ 216 ձեռագիրը, 17-րդ դարից, Գրիգոր Տաթևացու Հարցմանց գիրքն է, որը մեծ կարևորություն է ներկայացնում Տաթևացու տվյալ աշխատության ուսումնասիրության և հրատարակվածի հետ համեմատության համար։ Իսկ «Վարք և լիշատակ մեծ վարդապետին մերոյ Գրիգորի Տաթևացոյն» հատվածը պատմական մեծ արժեք է ներկայացնում։ Այդ ձեռագրի 868-րդ էջում կա շափսեծ և հանգավոր մի խիստ ուշագրավ հիշատակարան։ Գեղեցիկ համեմատություններով, պարզ ու սահուն ոճով, ընտիր բառերի առատությամբ աչքի ընկնող այս հիշատակարանի հեղինակը, ըստ Նորայր սրբազանի, «ԺԷ. դարու համբավավոր և բազմավաստակ քերթող Երեմիա Չելեբին» է։

17—18-րդ դարերից մնացած № 186 ձեռագիրը մի նամականի է կաթողիկոսական պաշտոնական կոնդակների՝ ուղղված գանազան անձանց և նրանց պատասխանները կաթողիկոսներին։ Սրանցից մեծ մասը հրատարակել է հանգուցյալ Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանը «Սիոն» ամսագրում։ Պատմական արժեքավոր փաստաթուղթ է այդ նամականին Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի, Եղիազար Անթեպցի կաթողիկոսի, ապա Չելեբիի և մի քանի այլ անձնավորությունների կյանքի և գործունեության վերաբերյալ։

Հիշատակության արժանի կան այլ ձեռագրեր ևս, որոնք առանձնապես մատենագրական արժեք են ներկայացնում։

Մի քանի խոսք ձեռագրերի հիշատակարանների մասին։

Ձեռագրերի հիշատակարանները պատմական հավաստի աղբյուրներ են ժամանակի մշակութային, տնտեսական, քաղաքական ու հոգևոր կյանքն ուսումնասիրելու գործում։ Հիշատակարանները հաճախ գրվել են ականատես, ստուգապատում գրիչների անմիջական տպավորությունների և վկայությունների վրա։ Այս փաստն էլ իրավունք է տալիս բանասերներին, պատմաբաններին ու գրականագետներին լուրջ վերաբերվելու հիշատակարանների յուրաքանչյուր փոքր մանրամասնության հետ։ Ամեն մի փոքր պատ-

մական մանրամասնության ճիշտ ըմբռնումն ու գնահատումը կարևոր է հայ ժողովրդի պատմության մինչև այժմ անծանոթ մնացած մի էջը, այս կամ այն պատմական պակասը լրացնելու համար։ Երուսաղեմի ձեռագրաց Մայր ցուցակի երկրորդ հատորում հրատարակված հիշատակարանները թեև շատ չեն, բայց նրանք պատմական մեծ արժեք ունեն։

Այսպես, № 157 ձեռագրում պահվել է Վահրամ սարկավագի մի ուշագրավ հիշատակարանը, որտեղ խոսվում է ժամանակի աննպաստ քաղաքական պայմանների մասին. «Եւ վասն ժամանակիս անհանդուրժելի վրդովմանցս և խուճապ տագնապիս զոր ևհաս ի վերայ մեր յաղգէն Իսմայելացւոց և յափշտակեաց ոյժութի և պարարտ մասն երկրիս մերոյ ի թուականիս Հայոց ՉԽէ, որում եղև գրաւ գրոյս և բազումք անկան ի սուր սուսերի և ի գերութիւն...։ ... Մանկունք գերեալք և աղչկունք վաճառեալք ի ձեռաց անօրինաց։ Արդ. զո՞ր պիսի չարաշշուկ և բազմավրդով ծանր աղետի աւուրս...»։

Ընդարձակ և հետաքրքիր մի հիշատակարան ունի № 232 ձեռագիրը, որտեղ խորունկ վշտով պատմվում է հույն հոգևորականների խարդախ և չարաշահ գիտավորությունների մասին, որոնք աշխատել են բոլոր աններելի միջոցներով հայերին հեռացնել Երուսաղեմի սրբազան վայրերից՝ տիրանալու նրանց աղդային-եկեղեցական իրավունքներին և հարստությանը։ Այս դարավոր պայքարը հայ և հույն եկեղեցիների միջև հանուն սրբավայրերի տիրապետության՝ շարունակվել է դարերով, սկիզբ առնելով 5-րդ դարից, Քաղկեդոնի ժողովից և խոշոր նշանակություն ունի Երուսաղեմի պատմության ուսումնասիրության համար։ Այս տեսակետով էլ վերոհիշյալ հիշատակարանը կարևոր մի վավերագիր է հանդիսանում հայ Երուսաղեմի և սրբատեղիների պատմության համար։

Ավելորդ չի լինի նաև այստեղ մեջբերել № 149 ձեռագրի հիշատակարանի հետևյալ տողերը, որոնք խոսում են մի ձեռագրի պատահաբար գտնվելու մասին. «... Նլեալ գնացաք ի գեղ մի կոչեցեալ Ասպիտակն։ Մտաք յեկեղեցին և գտաք ի խորանին ձգեալ ի մէջ մոխրակոյտին...»։ Նման ճակատագիր են ունեցել մեր ձեռագրերից գուցե հազարավորները, որոնք այսօրինակ պատահարներով փրկվել են կորստից։

Հաջողված հումորով գրված մի գեղեցիկ փոքր ոտանավոր կա № 231 ձեռագրում։ Տալիս ենք ամբողջությամբ.

«Գանձ եմ համեղ և համատոր,
Ով որ ասէ սրտով բոլոր
Ը Աստուծոյ ունի... տր.
Ով որ չասէ ու տրտնջայ,
Թերան չորնայ, աչքն կուրնայ.
Ցետ ասելոյն է՞ր տրտնջայ.
Ով ձայն ունի թո՛ղ յառաջ գայ.
Ով ձայն չունի թո՛ղ յետ երթայ,
Խոչակ սրբէ չի՛ կչկչայ,
Ժողովն ամէն ի վերայ ծղծայ...»։

Այս ցուցակի մեջ տպագրված են նաև մի շարք նկարներ, որոնք վերցված են ցուցակագրված ձեռագրերից։ Նրանցից մի քանիսը իրենց պայծառությամբ, ինքնատպությամբ մեր մանրանկարչության ամենագեղեցիկ նմուշներից են։ Առանձնապես պիտի հիշատակել առաջին երեսի վրա, ինչպես նաև 190, 229 և 272 էջերում տպագրված նկարները։

Ցուցակի սկզբում տրված է մի ցանկ՝ «Բովանդակություն տեսակավորյալ» վերնագրով, հանգուցյալ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմելյանի կազմած առաջին հատորի և սույն հատորի նյութերի, իսկ վերջում տրված են ցանկեր՝ «Բովանդակություն», «Թնագիրներ», «Ճանկ հատուկ անվանց», և «Ժամանակագրական ցուցակ» վերնագրերով, որոնք բծախնդիր և քրտնաջան աշխատանքի արդասիք են։

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանի Մայր ցուցակի երկրորդ հատորի հրատարակությունը, անկասկած, լուրջ և արժեքավոր ներդրում է հայկական ձեռագրերի ուսումնասիրության պատմության մեջ, հայագիտության համար, աղգային-եկեղեցական մատենագրության համար։

Ձեռագրաց ցուցակի կազմող հեղինակը՝ Նորայր սրբազանը դեռևս երիտասարդ է. նա ունի բոլոր տվյալները անցյալի մշուշից, մոռացության դրկից ի լույս աշխարհ հանելու հայոց պատմության և մշակույթի վերաբերյալ նորություններ, որոնք անթեղված են մագաղաթի դեղնած էջերում։ Հույս ունենք, որ նա այդ շնորհընկալ աշխատանքը կշարունակի իրեն հատուկ լրջությամբ և աշխատանքի բծախնդրությամբ։

ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՅՆԹԱՊՅԱՆ